«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2022

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի (այսուհետ՝ ՀԳՊԱ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության ներկայացրած դիմումի համաձայն:

Հավատարմագրման գործընթացը կազմակերպել և համակարգել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ՈԱԱԿ)՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է ««Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 4 տեղացի և 1 միջազգային փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, փորձագետների առջև դրված էր երկու խնդիր.

1) իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,

2) որակի բարելավման նպատակով՝ իրականացնել փորձագիտական գնահատում՝ միջազգային զարգացումներին համապատասխանելու և Բարձրագույն կրթության եվրոպական տարածք (այսուհետ՝ ԲԿԵՏ) ինտեգրվելու տեսանկյունից:

Այս զեկույցը պարունակում է ակադեմիայի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և միջազգային փորձագետի գործընկերային գնահատման դիտարկումները՝ ԲԿԵՏ ինտեգրվելու տեսանկյունից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 12

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 17

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 17

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 17

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԳՊԱ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 21

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 23

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 23

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 29

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 47

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 57

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 63

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 69

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 75

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 83

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 86

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 95

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 104

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 105

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 105

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 107

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 111

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 114

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 115

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 116

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ ՀԳՊԱ-ն ձգտում է դառնալ առաջատար և միջազգային մրցունակ արվեստի բուհ և ազգային մշակույթի զարգացման ու տարածման կենտրոն: ՀԳՊԱ առաքելությունն է.

- տրամադրել բարձրագույն կրթություն՝ իրականացնելով բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրեր արվեստի տեսության, կերպարվեստի, դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի ոլորտներում՝ ակադեմիական և արդի մոտեցումների կիրառման, ստեղծագործական և կրթական գործընթացները հասարակական կարիքներին համապատասխանեցման միջոցով,
- նպաստել ազգային մշակույթի և տնտեսության զարգացմանը՝ պատրաստելով ազգային ու միջազգային մակարդակներում մրցունակ և բարձր որակավորում ունեցող մասնագետներ, ինչպես նաև հարատև կրթությանը պատրաստ քաղաքացիներ,
- զարգացնել արվեստի հետազոտությունը՝ նպաստելով գիտական մտքի և ազգային մշակույթի տարածմանը,
- ազգային արժեքների ձևավորմամբ նպաստել հասարակության համախմբմանը և գեղագիտական ճաշակի բարձրացմանը:

Փորձագիտական խումբը հաշվի է առել նաև, որ ակադեմիան 2017 թվականին անցել է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց, որի արդյունքում 2018 թվականին համալսարանին շնորհվել է ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 4 տարի ժամկետով: ՀԳՊԱ-ն կազմել է թերությունների վերացման ծրագիր փորձագիտական զեկույցում առկա խորհրդատվությունների հիման վրա:

Նախորդ հավատարմագրումից հետո ՀԳՊԱ-ն վերանայել և բովանդակային փոփոխությունների է ենթարկել մասնագիտությունների կրթական ծրագրերը՝ նպատակ ունենալով դրանք առավել մրցունակ ու ճանաչելի դարձնել աշխատաշուկայում, ինչպես նաև մոտենալ միջազգային չափանիշների՝ միջազգային շարժունությունն ակտիվացնելու և առհասարակ բուհի միջազգայնացմանը նպաստելու համար: Համեմատական վերլուծության են ենթարկվել ռուսական և արևմտյան մի շարք ճանաչված բուհերի կրթական ծրագրերը: Կրթական ծրագրերի նպատակները, վերջնարդյունքները բխեցվել են բուհի առաքելությունից, ՀՀ որակավորումների ազգային շրջանակի բովանդակությունից և աշխատաշուկայի

պահանջներից. ՄԿԾ-երի վերանայման գործընթացում ներգրավվել են գործատուներ և արտաքին այլ շահակիցներ: Ներդրվել է մոդուլային համակարգը, ինչը հնարավորություն է տալիս փոխկապակցել ընդհանուր վերջնարդյունքներ ապահովող դասընթացների դասավանդումը, ուսումնառությունն ու գնահատումը: Այդուհանդերձ, պետք է նշել, որ, պայմանավորված օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներով, վերանայման գործընթացը եղել է չափազանց տևական, ընթացել է դանդաղ: Արդյունքում նոր ՄԿԾ-երը գործարկվել են 2021-2022 ուստարվանից: Ըստ նոր կրթական ծրագրերի՝ վերանայվել են միայն բակալավրի 8 ծրագրերի 1-ին տարվա դասընթացները, ուստի ՀԳՊԱ-ն բավական անելիքներ ունի կարճ ժամանակահատվածում մյուս տարիների դասընթացները պլանավորելու և իրականացնելու նույնկերպ, ինչպես մեկնարկած ՄԿԾ-երի դասընթացները (հասկանալի է, որ ուսպլանի փոփոխություն չի կարող լինել): ՀԳՊԱ-ն պետք է նաև ուշադրությամբ հետևի դասավանդման, ուսումնառության և գնահատման այնպիսի իրականացմանը, որոնք կտանեն սահմանված վերջնարդյունքների ձեռքբերմանը:

ՀԳՊԱ-ի կրթական ծրագրերն իրականացնում են համապատասխան որակավորում, գիտամանկավարժական և ստեղծագործական փորձառություն ու համարում ունեցող դասախոսները: Լինելով արվեստի ոլորտի ստեղծագործող ներկայացուցիչներ՝ նրանք խանդավառ ու մոտիվացված են իրենց կարողություններն ու փորձն ուսանողներին փոխանցելու հարցում: Գիտակցելով, որ դժվար է արվեստի ներկայացուցիչ ստեղծագործող անհատներից պահանջել հետևել որոշ չափանիշների (ինչն անհրաժեշտ է ՄԿԾ-երի վերջնարդյունքների ձեռքբերումն արժանահավատ դարձնելու համար), բուհը պետք է ժամանակ ու ռեսուրսներ տրամադրի դասախոսներին մոտիվացնելու, մասնագիտական, մանկավարժական, լեզվական ու SS կարողություններն ամրապնդելու ուղղությամբ, որպեսզի նրանք հետազոտությունն իրականացնեն պլանավորված ու հնարավորինս փաստաթղթավորված ձևով և հնարավորություն ունենան մասնակցելու փորձի փոխանակման ծրագրերի, պատրաստ լինեն ներգրավվելու բուհի կողմից միջազգային կրթական ծրագիր իրականացնելու մեջ: Սա անհրաժեշտություն է նաև կայուն սերնդափոխություն իրականացնելու տեսանկյունից, քանի որ բուհն ավարտելուց հետո բուհից դուրս աշխատաշուկան հաճախ ավելի հրապուրիչ է նյութական շահագրգռության իմաստով, քան բուհում դասավանդելն ու հետազոտելը/ստեղծագործելը:

Իր կրթական ծրագրերն իրականացնելու համար Ակադեմիան ունի լսարանային, արվեստանոցային, լաբորատոր, գրադարանային և այլ անհրաժեշտ ենթակառուցվածք, որի բարելավման համար հատկացնում է միջոցներ, ձեռք է բերում անհրաժեշտ տեխնիկա, սարքավորումներ և նյութեր: Այս ամենը թեև բավարարում են կրթական ծրագրերի վերջնարդյունքների ձեռքբերման համար, սակայն ՄԿԾ-երի որակը բարձրացնելու, դրանք միջազգայնորեն մրցունակ դարձնելու համար բուհը կարիք ունի համակարգված ձևով իրականացնելու ենթակառուցվածքի ընդլայնման ու բարեկարգման, ռեսուրսների ավելացման ու բարելավման միջոցառումներ:

Հաշվի առնելով, որ ՀԳՊԱ-ն դրել է մրցունակ կրթական ծրագրերի հիմքերը, ունի դրանց կազմակերպման մարդկային կապիտալ (համապատասխան մասնագիտական

որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմ), ենթակառուցվածք և նյութական ռեսուրսներ, շարունակաբար հնարավորինս բարելավում է ենթակառուցվածքներն ու ռեսուրսները, կարելի է եզրակացնել, որ բուհը ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհումը:

ՀԳՊԱ-ի առաքելությունը հստակ է ու որոշակի, այն տեսանելիորեն արտահայտվում է ինչպես կրթական ծրագրերի նկարագրերի մեջ, այնպես էլ դասախոսների հետազոտական/ստեղծագործական գործունեության արդյունքների, ուսանողների ուսումնառության ընթացքի ու արդյունքերի մեջ, այն հնարավոր է չափել նաև աշխատաշուկայի համապատասխան ուսումնասիրության միջոցով: Բուհը նկատելի առաջընթաց է գրանցել ռազմավարական պլանավորումը ստորաբաժանումների գործունեության վրա տեղայնացնելու, պլանավորածը գնահատելու և հաշվետվողականության մշակույթ ձևավորելու ուղղություններով: Որակի ապահովումը նախորդ շրջափուլի համեմատ էապես բարելավվել է, շատացել են որակի ապահովման գործընթացներն ու քանակապես աճել է գործիքների թիվը: Այդուհանդերձ, որակի ապահովման առջև դեռևս չի դրվում առավել իրատեսական պլանավորման համար անհրաժեշտ տվյալներ դուրս բերելն ու խնդիրներ վերհանելը, ինչն էլ երբեմն հանգեցնում է խնդիրների պլանավորման կամ պլանավորածը գնահատելու ժամանակ: ՀԳՊԱ-ն դեռևս շատ անելիքներ ունի պլանավորման արդյունքի գնահատման ցուցիչները հիմնավոր դարձնելու, հաշվետվողականության համակարգի վերլուծական բաղադրիչն ուժեղացնելու ուղղությամբ: Կառավարման ու հաշվետվողականության այն առաջընթացային մշակույթը, որ կա բուհի կառավարման որոշակի նեղ շերտի մեջ, պետք է փոխանցվի ավելի վեր ու ներքև՝ կառավարումն ավելի ներդաշնակ դարձնելու և պլանավորված նպատակներն իրականացնելու համար:

Ուստի, կարելի է եզրակացնել, որ թեև որակի ապահովման ներկայիս գործիքակազմով ու գործառույթներով, կառավարման ներկայիս մշակույթով ՀԳՊԱ-ն ապահովում է իր առաքելության իրականացումն ու, մասնավորապես, կրթական ծրագրերի վերջնարդյունքների ձեռքբերումը, սակայն հարափոփոխ աշխարհին համահունչ զարգանալու համար դեռևս շատ անելիքներ կան հարաբերություններ, առաջնահերթություններ, գործառույթներ վերագնահատելու, կառավարչական կարողություններ ու մշակույթ զարգացնելու ուղղությամբ: Սա անհրաժեշտություն է, ի մասնավորի, այն պատճառով, որ քանի որ ցածր աշխատավարձերն ու մոտիվացիոն այլ մեխանիզմների բացակայությամբ դասախոսների ներուժը չի իրացվում բուհի զարգացման աշխատանքներում, ինչը կարող է նպաստել թե՛ նրանց ճանաչելիության բարձրացմանը, թե՛ ֆինանսական դրության բարելավմանը:

Ակադեմիայի կրթական ծրագրերի մասնագիտական պրոֆիլը ենթադրում է ուսանողների հետ անհատական աշխատանքների մեծ քանակ, ինչն առհասարակ բնորոշ է արվեստի բուհերին: Ուսանողակենտրոն միջավայրի գոյությունը ՀԳՊԱ-ում նաև հարաբերությունների յուրահատուկ մշակույթի արդյունքն է: Ազատ ստեղծագործական միջավայրում ուսանողները հնարավորություն ունեն առավել բաց ու անմիջաբար շփվել

արվեստի ոլորտի ճանաչված ներկայացուցիչների հետ, փոխառել նրանց փորձն ու բացահայտել ստեղծագործական գաղտնիքները: ՀԳՊԱ-ի ղեկավարությունն իր հերթին անում է հնարավորը՝ ուսանողների համար ներառական միջավայր, հավասար հնարավորություններ ստեղծելու ուղղությամբ:

Իր առաքելությանը համապատասխան՝ ՀԳՊԱ-ն իրականացնում է հանրությանը գիտելիքի ու արժեքի փոխանցման միջոցառումներ: Բուհի ճանաչելիության ու հեղինակության բարձրացմանը կնպաստեն համակարգված PR և դիմորդների մասնագիտական կողմնորոշման քաղաքականություն ունենալը:

Արվեստի գծով հետազոտություններն ունեն առանձնահատկություն, որոնք արտացոլվում են ստեղծագործական գործունեության ու դրանց արդյունքի մեջ: Ակադեմիայում հետազոտության ոլորտին այս տեսանկյունից մոտենալիս՝ համոզվում ենք, որ հետազոտությունը տեղի է ունենում, որ հետազոտության օգնությամբ է ստեղծվում ինչպես դասախոսի արվեստի ստեղծագործությունը, այնպես էլ ուսանողի կրթական վերջնարդյունքը (ինչը կրկին արվեստի ստեղծագործություն է): Միևնույն ժամանակ կրթության ակադեմիականությունն ապահովելու համար միջազգային բուհերում առկա են արվեստի ոլորտի հետազոտություններն առավել հստակ մեխանիզմներով պլանավորելու և ներկայացնելու միտումներ, ինչն իր գործունեության մեջ ՀԳՊԱ-ն անպայման պետք է հաշվի առնի: Դա կօգնի նաև հետազոտական/ստեղծագործական ավելի շատ նախագծեր (այդ թվում՝ միջազգային) իրականացնելու և հետազոտական/ստեղծագործական արդյունքն առևտրայնացնելու հարցում:

Հավատարմագրման նախորդ շրջափուլից հետո ՀԳՊԱ-ն զգալիորեն կանոնակարգել է միջազգային շարժունության գործընթացը և արձանագրել դրական շարժընթաց: Այդուհանդերձ, օտար լեզուների, առաջին հերթին անգլերենի իմացության ցածր մակարդակը բուհի շարժունության ցուցանիշը բավարար լինելուց դեռևս հեռու է պահում: Օտար լեզուների ուսուցման նոր համակարգի գործարկումը կօգնի այս խնդրի լուծմանը: Բուհը պետք է որոշակիացնի իր անելիքները միջազգային կրթական ու հետազոտական ծրագրեր իրականացնելու, կարողությունների զարգացման դրամաշնորհներ ներգրավելու, բենչմարքինգը դասընթացների մակարդակ տեղափոխելու ուղղություններով: Սա անջատ գործընթաց չէ, և հնարավոր չէ սրան հասնել առանց կրթական ծրագրերի որակի աճին տեմպ հաղորդելու, հետազոտության կառավարման արդյունավետությունը բարձրացնելու:

Ելնելով վերոգրյալից, կարելի է եզրակացնել, որ ՀԳՊԱ-ն դեռևս չի կարողանում անհրաժեշտ ռեսուրսներ տրամադրել գործունեության ուղղությունների համաչափ զարգացման համար, ինչի պատճառով առանձին ուղղություններ զարգանում են դանդաղ: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը լիահույս է, որ սույն փորձագիտական զեկույցը կօգնի Ակադեմիային առավել հստակ պատկերացնել կարիքները և պլանավորել բարելավման գործընթացները՝ առանձնակի շեշտադրելով կառավարման ոլորտը:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. հստակ առաքելության առկայությունը և դրա արտացոլումը կրթական ծրագրերում, հետազոտության և հանրային ներգրավման ծառայությունների մեջ,
2. պլանավորման և ըստ դրա ներքին հաշվետվողականության մեխանիզմների առկայությունը,
3. կրթական ծրագրերի վերանայման և բարելավման գործիքակազմի ներդնումը,
4. ուսանողակենտրոն միջավայրը,
5. ՄԿԾ-երի նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող ՊԴ կազմի առկայությունը,
6. վարչական մարմինների հասանելիությունը և կապը ուսանողների հետ,
7. ենթակառուցվածքների և ռեսուրսների շարունակական բարելավումը,
8. հասարակությանը մշակութային արժեքների փոխանցման մեխանիզմների առկայությունը,
9. որակի ապահովման գործիքների բազմազանեցման միտումները,
10. որակի ապահովման գործընթացներում շահակիցների լայն շրջանակի ներգրավումը:

Հաստատության թույլ կողմերն են.

1. ռազմավարական զարգացման ծրագրի գնահատման որակական ցուցիչների սակավությունը և գնահատման մեխանիզմների անկատարությունը,
2. կառավարման տարբեր օղակների միջև ոչ սինխրոն հաղորդակցությունը,
3. հաշվետվությունների առավելապես նկարագրական և ոչ վերլուծահենք լինելը,
4. եկամուտների բազմազանեցման հնարավորությունների պակասը,
5. կրթական ծրագրերի զարգացմանն ու միջազգայնացմանն ուղղված գործընթացների դանդաղ ընթացքը,
6. ՊԴ կազմի մասնագիտական շարունակական զարգացման մեխանիզմների ոչ բավարար լինելը,
7. հետազոտական գործունեության համակարգված պլանավորման և իրականացման պակասը,
8. համատեղ կրթական ծրագրերի բացակայությունը,
9. օտար լեզուների իմացության ցածր մակարդակը, իմացության գնահատման և հետագա լավարկման մեխանիզմների անկատարությունը,
10. որակի ապահովման գործիքների անհամաչափ կիրառումը ակադեմիայում ընթացող գործընթացներում:

Խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1. Ռազմավարական պլանավորման հիմքում դնել պետական առաջնահերթությունների, աշխատաշուկայի, ՈԱԾ-ի բնութագրիչների իրական, **փաստաթղթավորված** վերլուծությունը:

2. Ռազմավարական նպատակների ձեռքբերվածության աստիճանը առավել օբյեկտիվ գնահատելու համար ԳԱՑ լրակազմը համալրել որակական բնույթի ցուցիչներով:
3. Ռազմավարական ծրագրի կատարողականի ամենամյա հաշվետվությունները կազմել՝ հիմքում ունենալով կատարողականի ցուցիչները և հաշվետվություններին հաղորդել վերլուծական բնույթ՝ վերհանելով ձախողումները, թերացումները, դրանց օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառները:

Կառավարումն ու վարչարարությունը

4. Համակարգել հետազոտության, միջազգայնացման և զարգացման գործառույթները՝ սահմանելով հստակ պատասխանատվություն ու կատարողականի ցուցիչներ:
5. Միջին օղակի կառավարման պատասխանատուների (դեկաններ, ամբիոնի վարիչներ) համար ապահովել մենեջերիալ կարողունակություններ՝ հետազոտության, միջազգայնացման ու զարգացման գործառույթները համակարգելու համար:
6. Խնդիր դնել որակի ապահովման համակարգի առջև՝ ռազմավարական որոշումների կայացման ու ռազմավարական պլանավորման հիմքում ապահովելու արժանահավատ տվյալներ:
7. Ստեղծել մեխանիզմներ Հոգաբարձուների խորհրդի՝ բուհի կառավարման, արտաքին կապերի, զարգացման ծրագրերի, ռեսուրսների ձեռքբերման և այլ հարցերում առարկայական ներգրավվածություն ապահովելու համար

Մասնագիտության կրթական ծրագրերը

8. Լրամշակված բակալավրիատի կրթական ծրագրերի հիման վրա ձևավորած մոդուլների նկարագրերը համապատասխանեցնել ՄԿԾ-երով նախատեսված նպատակներին և բովանդակությանը:
9. 2016 թվականից գործող կրթական ծրագրերը, մասնակի փոփոխության ենթարկելով, հնարավորինս մոտեցնել կրթական ծրագրերի նոր տրամաբանությանը՝ պարտադիր լրամշակելով և վերանայելով դրանց հիման վրա ձևավորված դասընթացների նկարագրերը:
10. Մագիստրոսական կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչն առավել արդյունավետ դարձնելու նպատակով՝ քննարկել մագիստրոսական թեզերին ներկայացվող պահանջների փոփոխության հնարավորությունը:
11. Կանոնակարգել կրթական ծրագրերի մշտադիտարկումը՝ սահմանելով հստակ պարբերականություն և ընթացակարգեր:

Ուսանողները

12. Մշակել և գործադրել դիմորդների մասնագիտական կողմնորոշման քաղաքականություն և ընթացակարգեր:
13. Հստակեցնել ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմները և դրանց կիրառման պարբերականությունը:

14. Մշակել մեխանիզմներ ՈւԽ գործունեության շրջանակի ճշգրտման և առավել շատ ուսանողների ներգրավման ուղղությամբ:

15. Լրացուցիչ խորհրդատվական պարապմունքները և օտար լեզվի դասընթացները դարձնել առավել հասանելի բոլոր ուսանողների համար՝ նպաստելու ուսանողների շարժունության ցուցանիշի բարելավմանը:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

16. Դասախոսական կազմի կայունությունը, միևնույն ժամանակ՝ դասախոսական կազմում սերնդափոխությունն ապահովելու նպատակով սահմանել լրացուցիչ մեխանիզմներ:

17. Գործարկել դասախոսների որակավորումների բարձրացման ծրագիր՝ մասնագիտական, ուսումնամեթոդական, հետազոտական, լեզվական և SS բաղադրիչներով:

18. Սահմանել դասախոսական կազմի ստեղծագործական/հետազոտական աշխատանքը խրախուսելու որոշակի մեխանիզմներ՝ կրթական գործընթացին փոխկապակցելու նպատակով:

Հետազոտությունը և զարգացումը

19. Դասախոսներին և ուսանողներին զինել հետազոտական նախագծեր պատրաստելու կարողություններով՝ դիտարկելով միջազգային կապերի և/կամ դրամաշնորհային ծրագրերի հնարավորություններն այս հարցում:

20. Բարելավել հետազոտության պլանավորման և գնահատման համակարգը՝ սահմանելով կատարողականի իրատեսական ցուցիչներ:

21. Սահմանել ամբիոնների հետազոտական գործունեության պլանավորման և հաշվետվողականության հստակ մեխանիզմներ:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

22. Ֆինանսական միջոցների բաշխումը իրականացնել ըստ ռազմավարական ուղղությունների:

23. Զարգացնել կապը գրադարանային ասոցիացիաների հետ՝ ապահովելով էլեկտրոնային ավելի մեծ ռեսուրսների ներառումը:

24. Արտաքին շահակիցներին ներգրավել ՄԿԾ-երի իրականացման գործընթացում՝ հնարավորություն ստեղծելու ունենալ կոնկրետ ուղղությամբ ֆինանսական ներդրումներ, ինչպիսիս նաև գտնել գործատուների ռեսուրսների համատեղ օգտագործման ուղիներ:

25. Հստակ քայլեր ձեռնարկել և իրականացնել՝ արդյունքների առևտրայնացման ուղղությամբ՝ լրացուցիչ եկամուտներ բուհին ապահովելու համար:

26. Օգտագործել Հոգաբարձուների խորհրդի ներուժը՝ դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի ֆակուլտետի ենթակառուցվածքի ընդլայնման հարցում:

Հասարակական պատասխանատվությունը

27. Լավագույն ուսանողներին և ՊԴ կազմի ներկայացուցիչներին խրախուսել մասնակցել արտաբուհական, ինչպես նաև միջազգային ցուցահանդեսներին՝ բարձրացնելու բուհի տեսանելիությունը և նպաստելու դիմորդների աճին:

28. Մշակել և գործարկել բուհի PR քաղաքականություն, ինչպես նաև ՀԳՊԱ-ի առաքելության համապատասխան ներդնել ազգային մշակույթի տարածման և հանրահռչակման ռազմավարություն:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

29. Վերագնահատել արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման գործառույթի շուրջ կառուցված հարաբերությունների համակարգը՝ գործընթացի պատասխանատու մարմնին օժտելով գիտակրթական և այլ ստորաբաժանումների միջազգայնացման գործունեությունը համակարգելու և այդ համակարգմամբ միջազգայնացման ուղղությունն առաջ տանելու ֆունկցիոնալ հնարավորություններով ու այլ կարողություններով:

30. Հստակեցնել միջազգայնացման ուղղությամբ բուհի առաջնահերթությունները և վերագործարկել գործընկեր հաստատությունների հետ համագործակցությունը ըստ դրանց:

31. Անդամակցել միջազգային ոլորտային ասոցիացիայի, որը շփման լայն հնարավորություն կստեղծի տարբեր գործընթացների միջազգայնացման համար:

32. Գնահատել դասախոսների և ուսանողների օտար լեզուների ուսուցման արդյունավետությունը և անհրաժեշտության դեպքում իրականացնել մեթոդական և գնահատման փոփոխություններ՝ ձգտելով ներդնել օտար լեզվի իմացության մակարդակի թեստավորման և գնահատման միջազգային չափանիշներ:

Որակի ներքին ապահովման համակարգը

33. Որակի ապահովման գործընթացներում բարելավել հետազոտական գործիքակազմը:

34. Վերագնահատել որակի ապահովման մեխանիզմների բովանդակությունն ու արդյունավետությունը՝ հիմքում ունենալով առաջիկա ՌԾ-ով սահմանված ամբիցիան, նպատակներն ու խնդիրները:

35. Ներդնել որակի ապահովման՝ կառավարման, հետազոտության և միջազգայնացման ոլորտներում խորքային խնդիրները և ներուժը վերհանող մեխանիզմներ:

Մենուա Սողոմոնյան
Փորձագիտական խմբի ղեկավար

20 հուլիսի 2022 թ.

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Փորձագիտական այցի ընթացում խումբը հանդիպումներ է ունեցել ուսանողների, դասախոսական անձնակազմի և ղեկավարության լայն շրջանակի, որոնք բոլորն էլ պատրաստակամություն դրսևորեցին մասնակցել կառուցողական քննարկումներին: Փորձագիտական այցի օրերի ընթացքում պարզ դարձավ, որ թեև փորձագիտական խումբը հայտնաբերել է որոշ թույլ կողմեր և բարելավման ենթակա ոլորտներ, ընդհանուր առմամբ ՀԳՊԱ-ն իրականացրել է նախորդ 2018-21 թթ. Ռազմավարական պլանում նշված իր բազմաթիվ նպատակները, որոնցից շատերը ուղղված են դրա համատեղելիության բարձրացմանը միջազգային բարձրագույն կրթության չափանիշներին և ժամանակակից լավագույն փորձին:

ՀԳՊԱ-ի նպատակները, օրինակ, ԲԿԵՏ համալսարանների առանձահատկություններին համապատասխանեցնելու առումով՝ շեշտադրելով ուսանողների և անձնակազմի շարժունությունը, ինչպես նաև ներառականության և մատչելիության սկզբունքները, պետք է շարունակեն առաջնահերթություն լինել ակադեմիայի համար: Թեև դեռ կան արտաքին հարաբերությունների և միջազգայնացման ոլորտներ, որտեղ բարելավման անհրաժեշտություն կա, հատկապես կառավարման և պլանավորման շուրջ, այնուամենայնիվ, այս ոլորտում ՀԳՊԱ-ի վերջին հինգ տարիների գործունեության առումով գովելի շատ բան կա: Ե՛վ COVID-ը, և՛ պատերազմը ազդել են վերջին տարիների շարժունության թվերի վրա, սակայն ղեկավարության և դասախոսական անձնակազմի հետ քննարկումներից պարզ էր, որ գոյություն ունի ընդհանուր պատկերացում միջազգայնացման կարևորության մասին՝ հաստատության գործունեության շատ ոլորտներում առաջընթացի համար: Որպես հրատապ խնդիր՝ անձնակազմի և ուսանողների (ՀԳՊԱ ուսանողների, ինչպես նաև փոխանակման ծրագրով ներգնա ուսանողների համար) լեզվական իմացության հետ կապված խնդիրները պետք է առաջնահերթ լինեն: Հաստատությունը պետք է հաշվի առնի այն աստիճանը, որքանով լեզվի մոդուլները կամընտրական/պարտադիր են, քանի որ ներկայումս առաջարկվող դասընթացներից օգտվող անձնակազմի և ուսանողների թիվը բավարար չէ այլ հաստատությունների հետ միջազգային հարաբերությունների լիարժեք գործող փաթեթ ստեղծելու համար:

Շահակիցների առաջարկներից էին, որ ՀԳՊԱ-ն ներառի անգլերենի դասավանդման ավելի «ժամանակակից» մոտեցումներ, և դա, անշուշտ, պետք է դիտարկվի որպես այս խնդրի լուծման համապարփակ ծրագրի մաս: Լեզուն միջազգայնացման բաղադրիչն է, և այդ խնդրի լուծումը առանցքային է բազմաթիվ փոխկապակցված բաղադրիչների համար. միջազգային համալսարանների հետ կապերի և գործընկերության հաստատման անհրաժեշտություն. բացել համաշխարհային արվեստի աշխարհը՝ ներառյալ ֆինանսավորման հնարավորությունները, համագործակցությունները, ցուցահանդեսները և համաժողովները, անձնակազմի և ուսանողների համար, ՀԳՊԱ-ում խթանել ավելի արտաքին աշխարհին միտված մշակույթ: ՀԳՊԱ-ն արդեն սկսել է աշխատել այս նպատակների ուղղությամբ, և

դրանք պետք է շարունակեն առանցքային մնալ հաջորդ Ռազմավարական ծրագրում: Փորձագիտական խմբի դիտարկումները ցույց տվեցին նյութական ռեսուրսների լավարկումներ, օրինակ, Էրազմուս+ հարաբերություններից՝ տեխնոլոգիական և ենթակառուցվածքային զարգացման տեսքով, և դրական կարծիքներ՝ Ռուսաստանի, Լեհաստանի, Գերմանիայի և այլ երկրների հաստատությունների հետ փոխանակման ծրագրերի վերաբերյալ: Սա ամբողջ գործունեությունն է, որը միտված է զարգացմանը և աճին, և այն պետք է վերահսկել, զարգացնել և դրանով հպարտանալ: Հարկ է նաև ընդունել, որ որպես հիմնական շահակից՝ ուսանողը կարող է հսկայական օգուտ քաղել միջազգային շարժունության տարբերակներից և ինստիտուցիոնալ գործընկերության աճից. նման փոխանակումները ապացուցված դրական ազդեցություն ունեն ուսանողի վստահության և անկախության վրա:

Մոդուլավորումը, ի թիվս այլ առավելությունների, պետք է ավելի պարզ դարձնի կապը ՀԳՊԱ-ի և այլ ՄՈՒՀ-երի միջև: Անցումը նոր մոդուլային կառուցվածքի, կարծես թե, հաջողությամբ է ընթանում և արտացոլում է միջազգային չափանիշների վրա հիմնված բենչմարքինգի նկատմամբ ձեռնարկված դրական քայլերը: Հաշվի առնելով, որ ԵԲԿՏ-ի գլխավոր նպատակներից մեկը որակավորումների փոխադարձ ճանաչման ձեռքբերումն է (ԵՄ անդամ երկրներում), այս քայլը, մոդուլի նախագծման մակարդակով կատարված աշխատանքի հետ մեկտեղ, հատկապես գնահատման և ուսումնառության վերջնարդյունքների շուրջ, ՀԳՊԱ-ին կտա ավելի լիարժեք կարողություն փոխգործակցելու և համագործակցելու միջազգային կառույցների լայն շրջանակի հետ: Դժվար է գնահատել այս հաջողության մակարդակը այս վաղ փուլում. ութ ծրագիր ներդրել են այն առաջին կուրսերում, և նոր մոտեցումների արդյունավետության ամբողջական զգացումը հավանաբար պարզ չի դառնա այնքան ժամանակ, քանի դեռ ուսանողների առաջին խումբը չի ավարտել ուսումնառության ամբողջական շրջափուլը:

Այս ասելով՝ կան բազմաթիվ ապացույցներ, որ անձնակազմը և ղեկավարությունը հստակ պատկերացում ունեն, օրինակ, մոդուլի բովանդակության պարզեցման և ռացիոնալացման (ներառյալ լրացուցիչ մոդուլների միավորումը) և այդ առումներով միջազգային չափանիշներին համապատասխանելու կարևորության վերաբերյալ: Չի կարելի ակնկալել, որ դասախոսական անձնակազմի շրջանում համընդհանուր համաձայնություն կլինի նման ազդեցիկ փոփոխությունների վերաբերյալ, բայց, այնուամենայնիվ, փորձագիտական խմբին պարզ է դարձել, որ եղել են շարունակական, բաց խորհրդակցություններ և քննարկումներ, և որ սկզբնական շրջանում մի շարք աշխատակիցներ գնալով ավելի են համոզվում օգուտների մեջ: Մոդուլավորումը դեռևս չի ներդրվել մագիստրատուրայի մակարդակում. սա մի բան է, որը պետք է դիտարկել կրեդիտների ռացիոնալացման հետ մեկտեղ (ինչպես նաև ապագայում կիսամյակացման հնարավորությունը):

Կցանկանայի շեշտել, որ հանդիպելով ուսանողներին և անձնակազմին, ստացա ուժեղ տպավորություն, որ բոլորը զգում են իսկական հպարտություն հաստատության, հայ ազգային մշակույթի մեջ ունեցած նրա ներդրման, նրա տրամադրած արվեստի և

դիզայնի մասնագիտացումների համար: ՀԳՊԱ-ում դասական արվեստի կրթության ամուր ավանդույթները տպավորիչ են, և սա մի բան է, որը պետք է ընդունել և աջակցել, միևնույն ժամանակ, երբ ՄՈՒՀ-ը ձգտում է զարգանալ և վերափոխվել՝ աշխատաշուկայի պահանջներին և փոփոխվող գեղարվեստական, սոցիալական և մշակութային համատեքստերին համապատասխան: Անշուշտ, կարևոր է, որ ՀԳՊԱ-ից շրջանավարտները թողարկվեն՝ ժամանակակից արվեստի պրակտիկայում ներգրավվելու, հարակից ոլորտներում աշխատանք փնտրելու կամ հետագա կրթություն ստանալու համար անհրաժեշտ հմտություններով զինված, սակայն պետք է նաև ջանքեր գործադրվեն հաստատության եզակի բնույթը պահպանելու համար: ՀԳՊԱ-ն բաց է փոփոխությունների նկատմամբ՝ առկա ծրագրերի վերակառուցման առումով, ինչպես նաև հաշվի է առնում նոր դասընթացների ներդրումը աշխատաշուկայում հայտնաբերված բացերից հետո (որպես օրինակ նշվեցին երկու հնարավորություններ՝ արվեստի կուրացիան և վերականգնումը/պահպանումը):

Փորձագիտական այցի ժամանակ 2022-27 թվականների նոր ռազմավարական ծրագրի բացակայությունը խնդրահարույց էր, մասամբ այն դժվարությունների պատճառով, որոնք ներկայացված էին առաջիկա հինգ տարիների առաքելությունն ու հավակնությունները ինչ-որ կերպ խստորեն գնահատելու համար: Շահակիցների հետ քննարկումներից պարզ է դարձել, որ ՀԳՊԱ ընդհանուր նպատակները կմնան նույնը, և որ նոր ՌԾ-ն կձգտի օգտագործել և հիմնվել այն էական և հիմնարար փոփոխությունների վրա, որոնք սկսվել են նախորդ փորձաքննությունից հետո: Նոր ՌԾ-ի վերջնականացումը պետք է առաջնահերթություն ստանա, և նպատակահարմար կլինի հարցումներ անցկացնել ընթացակարգերի վերաբերյալ, որպեսզի հավաստիանան, որ ՄՈՒՀ-ը նման իրավիճակում չի հայտնվի, երբ գա հաջորդ փորձաքննության ժամանակը: Կարևոր կլինի առաջնորդության այլընտրանքային կառույցներ նախաձեռնել՝ կապված հետազոտական ռազմավարությունների պլանավորման և իրականացման հետ, ինչպես ինստիտուտի ներսում, այնպես էլ արտաքին համագործակցության հետ կապված:

Նույնիսկ հակված լինելով դեպի պրակտիկայով առաջնորդվող հետազոտություն, առաջնորդվելով ստեղծված օբյեկտը որպես հետազոտության արդյունքի սկզբունքով՝ գործընթացի փաստաթղթավորված և գնահատելի վերլուծությունը/վերահսկողությունը կարող է արժեքավոր տարր կազմել մատուցվող դասընթացների համար: Տեսական և համատեքստային վերլուծությունը կարող է լրացնել արվեստանոցի պրակտիկային և փոխկապակցված լինել դրա հետ: Ես նաև կպնդեի որոշակի առարկայի համար հատուկ պատմության/ժամանակակից վերլուծության, ինչպես նաև արվեստի պատմության/տեսողական մշակույթի ավելի լայնածավալ մատուցման անհրաժեշտությունը: Մեդիա իրազեկվածություն, ներկայացուցչության հետ կապված խնդիրներ, լսարաններ/դիտողներ, թվային մշակույթներ և այլն. սրանք գիտելիքի ոլորտներ են, որոնք իրապես կիրառելի են բոլոր շրջանավարտների համար՝ անկախ նրանից, թե նրանք մտնում են աշխատաշուկա, թե ծրագրում են շարունակել կրթությունը (և իսկապես կարող են հատկապես կարևոր լինել որոշ ասպիրանտական միջազգային ծրագրերի համար): Հետազոտական

գործունեության որոշակի մակարդակ օգնում է խրախուսել քննադատական մտածողությունը, պատմական և ժամանակակից համատեքստերի ըմբռնումը, ստեղծագործական ոգեշնչումը և հետաքրքրասիրությունը: Ներկայումս սա սահմանափակվում է 4-րդ կուրսի և մագիստրոսական ծրագրերով, և պետք է նշել, որ մենք տեսանք մի քանի շատ առաջանցիկ հետազոտական ատենախոսությունների օրինակներ, որոնք, անշուշտ, համապատասխանում էին միջազգային համարժեքներին՝ բովանդակության, ներկայացման և հավակնությունների առումով: Միգուցե հնարավոր է ավելի վաղ ծանոթություն այս տեսակի գիտականությանը, միգուցե հնարավոր է սա ներառել որպես առանձին մոդուլ ուսումնական ծրագրի շրջանակներում, որը կարող է ավելի հեշտ գնահատվել ուսումնառության կոնկրետ վերջնարդյունքների տեսանկյունից: Գնահատումը չպետք է լինի բացառապես ավանդական շարադրությունների հիման վրա, այլ մատուցման այլ տեսակներ կարող են այս գործունեությունը ավելի գրավիչ և հաճելի դարձնել ուսանողների համար՝ բանավոր ներկայացումներ, տեսաշարադրություններ և այլն:

Կարևոր կլինի ապահովել, որ ՀԳՊԱ-ն դիտվի որպես գրավիչ վայր նաև ներգնա միջազգային ուսանողների համար: Թեև փորձագիտական խմբին պարզ է դարձել, որ ենթակառուցվածքներում ներդրումներ են կատարվել վերջին հինգ տարիների ընթացքում, լրացուցիչ ֆինանսավորման հոսքերի բացահայտումը մնում է կարևոր նկատառում: Չնայած անձնակազմը և ուսանողները զոհունակություն են հայտնել տարածքից և հարմարություններից, կարևոր կլինի հաշվի առնել ինստիտուտի «ի շահ ապագայի գործունեությունը» այս առումով: Ենթադրելով, որ առաջիկա տարիների հավակնությունները ներառում են տարածքի, անձնակազմի և ուսանողների թվի ընդլայնում, ցանկացած պլանավորման համար պետք է առանցքային լինի, որ հաշվի առնվեն այդ նպատակները: Կան մի շարք տարածքներ, որոնք ներկայումս անհասանելի են հենաշարժողական խնդիրներ ունեցող ուսանողների համար, և թեև դա ներկայիս խմբի համար խնդիր չէ, բոլոր պոտենցիալ ուսանողների համար լիարժեք հասանելիությանը պետք է առաջնահերթություն տրվի՝ ապագայի վրա ուշադրություն դարձնելով: Ուսանողների սոցիալական տարածքները նույնպես պետք է դիտարկվեն որպես ՀԳՊԱ-ի մշակույթի կարևոր ներդրում: Հատուկ առարկաների մակարդակով մոդուլի ուսումնառության վերջնարդյունքները հստակորեն համահունչ են ծրագրի ուսումնառության վերջնարդյունքներին և ՀԳՊԱ նպատակներին և համապատասխանում են միջազգային համարժեքներին: Ուսանողների հետ քննարկումները ցույց են տալիս, որ նրանք գոհ են գնահատման գործընթացներից և դասախոսների ճկունությունից ու բաց լինելուց: Ես կառաջարկեի, որ ստացված արձագանքների մեծ մասը փաստաթղթավորվեր և գրավոր ձևով հասանելի դառնար ուսանողներին:

ՀԳՊԱ-ն բավականին կարճ ժամանակահատվածում վճռական քայլեր է ձեռնարկել ԲԿԵՏ-ին ինտեգրվելու ուղղությամբ: Հուսով ենք, որ փորձագիտական խմբի զեկույցը կօգնի շարունակել այս դրական զարգացումը, և մենք, անշուշտ, գիտակցում ենք էներգիայի և նպատակասլացության աստիճանը, որը բնութագրում է ՀԳՊԱ-ի ներկայիս մտածողությունը սեփական մանկավարժական ինքնության և այն շրջանավարտների մասին, որոնք հաստատությունը հույս ունի ապագայում թողարկել: Այնուհետև հույս կա, որ զեկույցում

պարունակվող խորհրդատվություններն ու առաջարկությունները կարող են հաշվի առնվել համագործակցության և շարժունության ավելացման, միջազգային զարգացումների և հնարավորությունների փոխանակման, ինչպես նաև այնպիսի միջավայրի առումով, որը կխթանի ուսանողների՝ իրենց անհատականությունը և աշխատանքը հանրայնացնելու կարողությունը՝ ավարտելուց հետո դուրս գալով ստեղծագործական և արդյունաբերական աշխարհներ:

Մայքլ Քոներթի
Միջազգային փորձագետ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

ՀԳՊԱ ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի[1] կողմից.

Մենուա Սողոմոնյան՝ Պատմական գիտությունների թեկնածու, ԵՊՀ, Քաղաքական ինստիտուտներ և գործընթացների ամբիոնի դասախոս, փորձագիտական խմբի ղեկավար:

Մայքլ Քոներթի՝ Արվեստաբանության թեկնածու, Լոնդոնի Արվեստի համալսարան, Արվեստի, դիզայնի և տեխնոլոգիայի ինստիտուտի դասախոս, փորձագիտական խմբի միջազգային անդամ:

Արմեն Հարությունյան՝ Արվեստագիտության թեկնածու, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ, Արվեստի պատմության, տեսության և կառավարման ֆակուլտետի դեկան, փորձագիտական խմբի անդամ:

Վահրամ Սողոմոնյան՝ Տեխնիկական գիտությունների թեկնածու, Եվրոպական համալսարան, Արտաքին կապերի և միջազգայնացման գծով պրոռեկտոր, փորձագիտական խմբի անդամ:

Կլարա Մարգարյան՝ Ճարտարապետության և Շինարարության Հայաստանի ազգային համալսարանի «Գրաֆիկ դիզայն» մասնագիտության մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող, փորձագիտական խմբի անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ, և նշանակվել ՈԱԱԿ տնօրենի որոշմամբ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել են ՈԱԱԿ Քաղաքականության մշակման և իրականացման բաժնի մասնագետներ Մերի Բարսեղյանը և Ռոզա Բաբայանը:

Թարգմանությունը կատարել է Արփինե Աբգարյանը:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում թարգմանիչն ու համակարգողները ստորագրել են անկախության և գաղտնիության համաձայնագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիան դիմել է ՈԱԱԿ՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը:

[1] ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Դիմում-հայտի ընդունման մասին որոշում կայացնելուց հետո ՈԱԱԿ-ի և ՀԳՊԱ-ի միջև կնքվել է երկկողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույցը:

Ինքնավերլուծություն

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը՝ հայերեն և անգլերեն լեզուներով, և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

ՈԱԱԿ-ի համակարգողներն ուսումնասիրել է զեկույցը՝ տեխնիկական առումով ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Սահմանված ժամկետում բուհի կողմից ներկայացված ինքնավերլուծությունը ընդունվել է ՈԱԱԿ-ի կողմից: Այնուհետև ինքնավերլուծությունն ու կից փաստաթղթերի փաթեթը, ակադեմիայի կողմից լրացված էլեկտրոնային հարցաշարը տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է ակադեմիայի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով ՈԱԱԿ-ի կողմից իրականացվել են չորս վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. Փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. Նախնական գնահատումը՝ որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները,
3. Փաստաթղթերի և ռեսուրսների ուսումնասիրության մեթոդաբանությունը,
4. Հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Նախնական գնահատման ընթացքում փորձագիտական խմբի անդամները իրականացրել են դասալսումներ ՀԳՊԱ-ում: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց[2]:

Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն և այլն:

[2] ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նախապատրաստական այց

2022 թվականի ապրիլի 15-ին տեղի է ունեցել հանդիպում Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի ղեկավար կազմի հետ: Հանդիպման ժամանակ համալսարանի հետ քննարկվել և համաձայնեցվել է փորձագիտական այցի ժամանակացույցը, ներկայացվել է ուսումնասիրության ենթակա լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ: Քննարկվել են ֆոկուս խմբային հանդիպումների և փորձագիտական խմբի աշխատանքի համար նախատեսված պայմանները:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2022թ. ապրլի 25-ից 28-ը ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցի աշխատանքները մեկնարկել են փակ հանդիպմամբ, որի նպատակն էր միջազգային փորձագետ Մայքլ Քոներթիի հետ քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, ՄՈՒՀ-ի ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հստակեցնել հետագա քայլերը:

Փորձագիտական այցը սկսվել է հաստատության ղեկավար կազմի հետ հանդիպմամբ: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների դասախոս և ուսանող մասնակիցները, դեկանները, ամբիոնի վարիչները, գործատուներն ու շրջանավարտներն ընտրվել են ակադեմիայի կողմից նախապես տրամադրված ցանկից: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները: Փորձագիտական խումբը նախատեսված այցի ընթացքում իրականացրել է նաև փաստաթղթերի ուսումնասիրություն[3] և ռեսուրսների դիտարկում[4]:

Այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքներ, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Փորձագիտական գնահատումը կատարվել է Հավատարմագրման պետական չափանիշների և չափորոշիչների և ՈԱԱԿ-ի ընթացակարգերի շրջանակներում, որով նախատեսվում է գնահատման երկաստիճան սանդղակ՝ բավարար և անբավարար:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խումբը նախնական գնահատումն իրականացրել է ակադեմիայի լրացրած էլեկտրոնային հարցաշարի, ներկայացրած ինքնավերլուծության, դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության, իրականացված դասալսումների, փորձագիտական

[3] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

[4] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

այցի դիտարկումների հիման վրա՝ պարբերաբար կազմակերպվող քննարկումների արդյունքում: Քննարկումներից հետո դուրս բերված դիտարկումների հիման վրա փորձագիտական խումբը և ՈԱԱԿ-ի համակարգողները պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը:

Միջազգային փորձագետը պատրաստել է նաև գործընկերային գնահատման վերաբերյալ առանձին կարծիք: Փաստաթղթերը թարգմանվել և տրամադրվել են փորձագիտական խմբին: Գործընկերային գնահատման կարծիքը ամբողջությամբ ներառվել է զեկույցի տեքստում: Փորձագիտական խմբի անդամների հաստատումից հետո նախնական զեկույցը տրամադրվել է Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիային:

Զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ ակադեմիան իր արձագանքն ուղարկել է ՈԱԱԿ 30.06.2022թ.-ին: ՈԱԱԿ-ը հաստատության դիտարկումները տրամադրել է փորձագետներին: 12.07.2022թ.-ին ՈԱԱԿ-ը կազմակերպել է հաստատության և փորձագիտական խմբի հանդիպում, որի ժամանակ քննարկվել են ներկայացված դիտարկումները փորձագիտական նախնական զեկույցի վերաբերյալ:

Հաշվի առնելով հաստատության դիտարկումները՝ փորձագիտական խումբը կազմել է փորձագիտական զեկույցի վերջնական տարբերակը:

Մերի Բաբսեղյան **Ռոզա Բաբայան**

Փորձագիտական խմբի համակարգողներ

20 հուլիսի 2022 թ.

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԳՊԱ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. Երևանի գեղարվեստի պետական ինստիտուտը հիմնադրվել է 1945 թվականին և հիմնադրման պահին ունեցել է երկու մասնագիտություն՝ գեղանկարչություն և քանդակագործություն, որոնցով ուսումնառում էին 22 ուսանող: 1953 թվականին միավորվել են Թատերական և Գեղարվեստի ինստիտուտները և ստեղծվել է Գեղարվեստա-թատերական ինստիտուտը, որը 1994 թվականին կրկին բաժանվում է 2 առանձին բուհի, իսկ 2000 թվականին ՀՀ կառավարության որոշմամբ բուհը վերանվանվում է Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա ՊՈԱԿ: Հաստատության իրավական կարգավիճակի վերջին փոփոխությունը ՀՀ կառավարության կողմից կատարվեց 2017 թվականի ապրիլի 13-ի №474-Ն որոշմամբ՝ համաձայն որի բուհը վերակազմավորվեց «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի:

Կրթություն. Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայում, ինչպես նաև Գյումրու մասնաճյուղում և Դիլիջանի ստորաբաժանումում սովորում է շուրջ 870 ուսանող: ՀԳՊԱ-ն կրթական ծառայություններ է առաջարկում կերպարվեստի, դիզայնի և կիրառական արվեստի ոլորտների 18 կրթական ծրագրերով, բարձրագույն կրթության բոլոր երեք մակարդակներում (9 բակալավրի, 8 մագիստրոսի և 1 հետազոտողի կրթական ծրագիր): ՀԳՊԱ-ում դասավանդում են հանրապետության արվեստի առաջատար գործիչներ, որոնք ունեն նաև միջազգային ճանաչում՝ արվեստի և մշակույթի վաստակավոր գործիչներ, ժողովրդական և վաստակավոր նկարիչներ, միջազգային մրցույթների հաղթողներ, պետական մրցանակների դափնեկիրներ՝ 2 ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 30 պրոֆեսոր, 40 դոցենտ:

Հետազոտություն. ՀԳՊԱ-ն իր ռազմավարական 3 ուղղություններից մեկն է համարում հետազոտությունը և զարգացումը: Որպես ռազմավարական նպատակ սահմանել է՝ հետազոտական/ստեղծագործական գործունեության իրականացում և դասավանդման հետ փոխկապակցումը: Արվեստի ոլորտում հետազոտական/ստեղծագործական գործունեության իրականացման և ուսումնառության հետ դրանց փոխկապակցման միջոցով ՀԳՊԱ-ն նպաստում է գիտական մտքի և ազգային մշակույթի տարածմանը:

Միջազգայնացում. ՀԳՊԱ-ն հավակնում է ստեղծել արդյունավետ համագործակցությունը զարգացնող նոր հնարավորություններ ու պայմաններ, որոնք կնպաստեն բուհի գրավչության մեծացմանը տեղական և միջազգային մակարդակներում, կխթանեն ուսանողների շարժունությունն ու օտարերկրյա ուսանողների ներգրավվման ակտիվացումը՝ ապահովելով միջազգայնացմանը նպաստող գործընթացների շարունակական բարելավում, փորձի փոխանակում, ինչպես նաև կարողությունների զարգացում:

Որակի ապահովում. Կարևորելով պետության և հասարակության առջև բուհի պատասխանատվությունը՝ Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիան ձգտել է ստեղծել որակի ապահովման այնպիսի գործուն համակարգ, որը կնպաստի բուհի գործունեության հիմնական ոլորտների (դասավանդում և ուսումնառություն, հետազոտություն և զարգացում, ծառայություն հասարակությանը), ինչպես նաև շնորհիվող որակավորումների հանդեպ հասարակության վստահության ամրապնդմանը: Բուհի որակի ապահովման համակարգի նպատակն է զարգացնել և բարձրացնել ՀԳՊԱ-ում կրթության, հետազոտության և կառավարման գործընթացների որակը և արդյունավետությունը:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր.՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

1.1. ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

ՀԳՊԱ առաքելությունը ամրագրված է ակադեմիայի 2017-2021 թթ. ռազմավարական ծրագրում, համաձայն որի ակադեմիայի առաքելությունն է.

- տրամադրել բարձրագույն կրթություն՝ իրականացնելով բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրեր արվեստի տեսության, կերպարվեստի, դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի ոլորտներում ակադեմիական և արդի մոտեցումների կիրառման, ստեղծագործական և կրթական գործընթացները հասարակական կարիքներին համապատասխանեցման միջոցով,
- նպաստել ազգային մշակույթի և տնտեսության զարգացմանը՝ պատրաստելով ազգային ու միջազգային մակարդակներում մրցունակ և բարձր որակավորում ունեցող մասնագետներ, ինչպես նաև հարատև կրթությանը պատրաստ քաղաքացիներ,
- զարգացնել արվեստի հետազոտությունը՝ նպաստելով գիտական մտքի և ազգային մշակույթի տարածմանը,
- ազգային արժեքների ձևավորմամբ նպաստել հասարակության համախմբմանը և գեղագիտական ճաշակի բարձրացմանը:

Համաձայն ինքնավերլուծության՝ ՀԳՊԱ-ի առաքելության առաջին կետի համապատասխան՝ բուհում իրականացվում են բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրեր, որոնք համապատասխանում են ՀՀ ՈԱՇ-ի 6-րդ, 7-րդ և 8-րդ մակարդակներին: Կրթական ծրագրերի համապատասխանությունը ՀՀ ՈԱՇ-ին ապահովում են «ՀԳՊԱ-ի մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և վերանայման ձեռնարկում» ներառված համապատասխանեցման մեթոդաբանությունը, գործիքները և ընթացակարգերը:

ՀԳՊԱ-ի առաքելության այն բաղադրիչը, որն առնչվում է ազգային մշակութաստեղծմանը, ազգային մշակույթի պահպանմանն ու տարածմանը, տեղ է գտնում կրթական ծրագրերում: Հայկականի, ազգայինի թեմատիկան առկա է ինչպես արվեստաբանության և գեղանկարչության, այնպես էլ դիզայնի, հագուստի մոդելավորման և դեկորատիվ կիրառական արվեստի մեջ մասնագիտացող ուսանողների ստեղծագործություններում:

Ռազմավարական ծրագրին կից մշակված է դրա իրականացման ժամանակացույց-պլան, որտեղ սահմանված են կատարողականի գնահատման ցուցիչներ,

պատասխանատուներ ու ժամկետներ: Պետք է նշել, որ բուհի հոգաբարձուների խորհրդին ներկայացվող ամենամյա հաշվետվությունները թեև պատրաստվում են ըստ ռազմավարական նպատակադրումների ոլորտների, այդուհանդերձ կատարված աշխատանքը չի ներկայացվում ու վերլուծվում ըստ այդ ցուցիչների՝ ներքին ու արտաքին շահակիցներին պարզ դարձնելու համար կատարողականի աստիճանն ու արդյունավետությունը:

Անհրաժեշտ է փաստել, որ ռազմավարական պլանավորման նախորդ շրջափուլն ավարտվել է 2021թ. դեկտեմբերին, և զարգացման նոր ռազմավարական ծրագիրը դեռևս մշակման ընթացքի մեջ է, հաստատված չէ: Փորձագիտական այցի ընթացքում ղեկավար կազմի հետ հանդիպման ժամանակ պարզ դարձավ, որ նոր ռազմավարական ծրագրում բուհի առաքելությունն ու հիմնական նպատակները նույն են մնալու և հիմնականում փոփոխության են ենթարկվելու ռազմավարական նպատակներից բխող խնդիրները: Պետք է նկատել, որ բուհի զարգացման ռազմավարական ծրագիր ունենալու հարցում ինստիտուցիոնալ առումով թիվ 1 շահագրգիռ մարմինը՝ հոգաբարձուների խորհուրդը, խորամուխ չէր ռազմավարական ծրագրի դեռևս հաստատված չլինելու պատճառների մեջ: Հարկ է նշել, որ ՀԳՊԱ-ն մշակել է ռազմավարական ծրագրի մշակման ուղենիշներ, որտեղ առկա են առաքելության, նպատակների և խնդիրների սահմանմանը նպաստող հարցադրումներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀԳՊԱ-ն իրականացնում է այնպիսի կրթական ծրագրեր, որոնց մեծագույն մասը ՀՀ ոչ մի այլ հանրային բուհ չի առաջարկում, ՀԳՊԱ-ի առաքելությունը հստակ է բովանդակում բուհի առանձնահատկությունը մասնագիտական ուղղությունների ու աշխատաշուկայում դիրքավորման տեսանկյուններից:

Որոշ ուղղություններով գործում են նաև առանձին ռազմավարական ծրագրեր: Դրանք են՝ ՀԳՊԱ-ի միջազգայնացման 2016-2020թթ. ռազմավարությունը, ՀԳՊԱ-ի հետազոտության 2019-2022թթ. ռազմավարությունը, ՀԳՊԱ-ի ներառական կրթության ապահովման քաղաքականությունը:

ՀԳՊԱ զարգացման 2017-2021թթ. ռազմավարական ծրագրում Գյումրիի մասնաճյուղի առանձնահատկություններն արտացոլված չեն. ՀԳՊԱ-ի մոտեցմամբ ՌԾ-ի նպատակադրումներն ու գործողությունները լայն բովանդակություն ունեն և վերաբերում են բուհի բոլոր ստորաբաժանումներին, այդ թվում՝ Գյումրիի մասնաճյուղին[5]:

1.2. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

Նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցի և բարելավման ծրագրի ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ 2017-2021 թթ. ռազմավարական ծրագրի մշակման գործում արտաքին շահակիցների ներգրավումը խնդրահարույց հանգամանք է եղել, բուհը գիտակցել է այս խնդիրը և զարգացման նոր՝ 2022-2026 թթ. ռազմավարական ծրագրի մշակման աշխատանքներում հիմնավոր զբաղվել է ներքին և արտաքին շահակիցներին ներգրավելու գործով՝ դրա համար, որպես մեթոդաբանական հենք, կազմելով «ՀԳՊԱ-ի

[5] Միտքը վերաշարադրվել է հաստատության դիտարկումների քննարկման արդյունքում:

2022-2026թթ. ռազմավարական ծրագրի մշակման ներքին և արտաքին շահակիցների ցուցակ» փաստաթուղթը: Ավելին՝ բուհի ղեկավարությունը նոր ռազմավարական ծրագրի մշակումը ձգձգվելու պատճառ էր համարում այն, որ արտաքին շահակիցների հետ ծրագրի հիմնադրույթներն ու կատարողականի ցուցիչները պատշաճ քննարկելու և սահմանելու համար երկար ժամանակ է պահանջվում. այս առումով առավել խնդրահարույց է համարվում գործընկեր կազմակերպությունների և կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացուցիչների հետ հանդիպումները: Համաձայն նշված փաստաթղթի՝ ՀԳՊԱ-ի ներքին շահակիցներն են ուսանողները, պրոֆեսորադասախոսական կազմը, վարչական կազմը և ուսումնաօժանդակ կազմը: Հիմնական արտաքին շահակիցներն են պետությունը՝ ի դեմս ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, մշակույթի ոլորտի պետական կազմակերպությունները և ուսումնական հաստատությունները, մասնավոր սեկտորի ներկայացուցիչները և գործատուները:

Վերջին շրջանում իրականացվել են ֆոկուս խմբային հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվել են նոր ռազմավարական ծրագրի դրույթները: Սակայն ինքավերլուծությունը և կից փաստաթղթերը (առավելապես ՀԳՊԱ-ի 2022-2026թթ. ռազմավարական ծրագրի մշակման ներքին և արտաքին շահակիցների ցուցակը) ցույց են տալիս, որ արտաքին շահակիցների ցանկում բացակայում են համայնքային ենթակայությամբ գործող կրթական կամ մշակութային կազմակերպությունները (օրինակ՝ արվեստի դպրոցները): «Արվեստաբանություն» և «Մշակութաբանություն» կրթական ծրագրեր իրականացնող Երևանի պետական համալսարանը ևս չի ներառվել արտաքին շահակից կազմակերպությունների ցուցակում: Որպես արտաքին շահակիցներ չեն դիտարկվում նաև անհատ ստեղծագործողները, ոլորտի բարձրակարգ մասնագետները:

Առկա չէ որևէ ուսումնասիրություն, վերլուծություն, որը կվկայի ռազմավարական պլանավորումը պետական գերակայություններին կամ բուհի մասնագիտություններին առնչվող միջազգային կրթական, գիտական, մշակութային միտումներին կապակցելու մասին:

1.3 ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

Համաձայն ինքնավերլուծության՝ ՌԾ մշակման, իրականացման և գնահատման գործընթացները տեղի են ունենում ՊԻԳԲ շրջափուլի տրամաբանությամբ: Նախորդ բարելավման պլանում յուրաքանչյուր տարվա ավարտին ՀԳՊԱ-ն պլանավորվել էր վերանայել սահմանված ԳԱՑ-երը, սակայն ամենամյա հաշվետվություններում այդ ուղղությամբ իրականացված աշխատանքները ներառված չեն:

Անհրաժեշտ է նշել, որ ՀԳՊԱ-ի կողմից իրականացվել է 2017-2021 թթ. ռազմավարական ծրագրի ամփոփումը, որտեղ մանրամասն ներկայացված են ռազմավարական խնդիրները և կատարողականի ցուցիչները: Պետք է նշել նաև, որ հոգաբարձուների խորհրդին տրվող ամենամյա հաշվետվությունները, սակայն, ըստ ԳԱՑ-երի չեն կազմվում:

Դեռ նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշվել էր, որ 2017-2021թթ. ՌԾ-ի ԳԱՑ լրակազմով ռազմավարական նպատակների ձեռքբերվածության աստիճան գնահատելը խնդրահարույց է: Քանի որ ՀԳՊԱ-ն հենց այդ լրակազմով է ամփոփել 2017-2021թթ. ռազմավարական ծրագիրը, փորձագիտական խումբը նշում է, որ Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի 2017-2021 թթ. ռազմավարական ծրագրի նպատակների իրականացումը գնահատող աղյուսակում ռազմավարական նպատակների իրականացման միջին արդյունավետությունը 85 տոկոս է կազմում (ամենացածր՝ 68,20 տոկոս գնահատվել է «Արտաքին կապերի ընդլայնում և շարժունության խթանում» նպատակի իրականացման միջին արդյունավետությունը, ամենաբարձր՝ 95,22 տոկոս էլ գնահատվել է «Կառավարման համակարգի կատարելագործում» նպատակի իրականացման միջին արդյունավետությունը):

Այդուհանդերձ, պետք է նշել նաև, որ ռազմավարական կառավարման նման ընկալումը, դրա հիման վրա գործընթացների կազմակերպումն ու գնահատումը ունեն խնդրահարույց կողմեր, որոնցից փորձագիտական խումբը առանձնացնում է հետևյալները.

1. Առկա են իմաստային-տրամաբանական խզվածքներ ռազմավարական շատ խնդիրների և դրանց իրականացումն ապահովող գործողությունների կատարողականի ցուցիչների միջև: Օրինակ՝ ռազմավարական երրորդ նպատակի («Հետազոտությունների իրականացում և դասավանդման հետ փոխկապակցում») շրջանակներում խնդիր էր դրվել խթանել դասախոսական կազմի հետազոտական/ստեղծագործական գործունեությունը, ինչի լուծումն ապահովող գործունեության գնահատման համար սահմանվել էր կատարողականի հետևյալ ցուցիչը. «դասախոսների գիտական, մեթոդական և ստեղծագործական գործունեությանը նպաստող պայմանների առկայություն»: Բուհը սույն գործողության հաջողության համար պլանավորել էր վեց պայման (դատելով ՌԾ-ից ու դրա գործողությունների ժամանակացույցից՝ այդ պայմանները իդենտիֆիկացված չեն եղել պլանավորման ժամանակ), որոնցից, ըստ գնահատման աղյուսակի, ապահովվել են 5-ը (գիտական հոդվածների ներառում դասախոսների ծանրաբեռնվածության մեջ, անվճար հոդվածներ տպագրելու հնարավորություն (ՀԳՊԱ տարեգիրք), անվճար հոդվածներ տպագրելու հնարավորություն (Ուրալի ֆեդերալ համալսարանի ամսագիր), անվճար ցուցահանդեսներ կազմակերպելու հնարավորություն (ՀԳՊԱ ցուցասրահ), անվճար ցուցահանդեսներ կազմակերպելու հնարավորություն (Նկարիչների միության ցուցասրահ)) և ըստ այդմ նշված գործողության արդյունավետությունը գնահատվել է 75 տոկոս: Այդուհանդերձ հաշվետվություններում և այլ փաստաթղթերում որևէ կերպ պարզաբանված չէ, թե ինչու՞, ինչպե՞ս և որքանո՞վ են վերոնշյալ հանգամանքները դասախոսների ստեղծագործական գործունեությանը նպաստող պայմաններ հանդիսանում, գուցե բուհին հասանելի և կշռով ավելի բարձր պայմաններ հնարավոր կլիներ ապահովել (օրինակ՝ ֆինանսական խրախուսումները. փաստն այն է, որ միայն արվեստաբանության մասնագիտության դասախոսներին է լրավճարներ տրամադրվում հետազոտական արդյունքը հրապարակելու համար) և

եթե բուհի գործընկեր երկու այլ բուհերում էլ, կնքված համաձայնագրի շնորհիվ, տրվեր հնարավորություն անվճար տպագրել հոդված, արդյոք դա կնշանակե՞ր, որ «դասախոսների գիտական, մեթոդական և ստեղծագործական գործունեությանը նպաստող պայմանների առկայություն» ցուցիչով ձևակերպված գործողության արդյունավետությունը կկազմեր 117 տոկոս։

2. Պլանավորման գործընթացներում կատարողականի ցուցիչները հիմնավորված չեն (չնայած դրանց մի մասը ռացիոնալ է թվում), ինչը հնարավորություն չի տալիս հասկանալու հաստատության ներուժի ու նրա պլանավորածի հարաբերակցությունը։ Օրինակ, 5 տարում ուսանողների կողմից 10 աշխատանքի տպագրումը արտացոլու՞մ է բուհի ներուժը, թե՞ ոչ։
3. Կատարողականի ցուցիչները և դրանց ուղղությամբ ներկայացված հաշվետվությունները գերազանցապես քանակական են, ինչը հնարավորություն չի ստեղծում գնահատել իրականացված գործընթացների որակն ու արդյունավետությունը։ Օրինակ՝ «կառավարման գործընթացում շահակիցների ներգրավվածության խթանում» գործողության կատարողականի գնահատման ցուցիչ է սահմանվել այդ ներգրավվածությունն ապահովող վերանայված և մշակված ներքին նորմատիվ փաստաթղթերի առկայությունը. այսպես, ի սկզբանե պլանավորված է եղել մշակել 4 փաստաթուղթ, բայց մշակվել է 5-ը, և, բուհի գնահատմամբ, «կառավարման գործընթացում շահակիցների ներգրավվածության խթանում» գործողության կատարողականը 125 տոկոս է համարվել։ Մինչդեռ հասկանալի է, որ կառավարման գործընթացում շահակիցների ներգրավվածությունը խթանելը միայն փաստաթղթով չի տեղի ունենում և թե որքանով է խթանվել շահակիցների ներգրավվածությունը ու այդ ներգրավվածության արդյունքում ինչն է բարելավվել կառավարման մեջ, այդպես էլ պարզ չի դառնում։
4. Ամենամյա հաշվետվությունները, որ ներկայացվում են հոգաբարձուների խորհրդին, թեև կազմվում են բուհի ռազմավարական նպատակները հիմքում դնելու մեթոդաբանությամբ, այդուհանդերձ հաշվետվությունները գերազանցապես նկարագրողական, ոչ վերլուծական բնույթի են, ինչն էլ հնարավորություն չի տալիս գնահատելու արդյունքների ձեռքբերվածության աստիճանը պլանավորածի, ներուժի համեմատությամբ, հասկանալու որոշ գործողությունների չկատարման կամ թերակատարման պատճառները և այլն։

Փորձագիտական այցի ժամանակ խումբը տեղեկացվել է, որ ՀԳՊԱ-ն ջանքեր է գործադրում ռազմավարական նպատակների գնահատման առավել արդյունավետ, ինտեգրված ու իրատեսական ԳԱՑ լրակազմ սահմանելու ուղղությամբ։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի առաքելությունը միարժեքորեն արտահայտում է իր կրթական ծրագրերի ու գործունեության ուղղությունների բովանդակությունը։ Առաքելության և մասնագիտական պրոֆիլի, գործունեության միջև կապը

ոչ միայն ֆորմալ ձևակերպումներով է ապահովված, այլև տեսանելի է կրթական ծրագրերի, հետազոտության ու դրանց արդյունքների մեջ։ Դրական հանգամանք է նաև կրթական ծրագրերի՝ որակավորումների ազգային շրջանակին համապատասխանեցման անհրաժեշտ մեթոդական գործիքների առկայությունը, ինչը շնորհած որակավորումների արժանահավատության կարևոր պայման է։ Միևնույն ժամանակ, ՀԳՊԱ-ի ռազմավարական պլանավորումը տեսանելիորեն ու փաստաթղթավորված ձևով չի կապակցվում պետական գերակայություններին կամ բուհի մասնագիտություններին առնչվող միջազգային կրթական, գիտական, մշակութային միտումներին, ինչը ռիսկային է դարձնում բուհի ռազմավարական գործունեությունը լայն համատեքստից բխելը։

ՀԳՊԱ-ն ավարտել է իր ռազմավարական պլանավորման երկրորդ շրջափուլը և այժմ գտնվում է ռազմավարական նոր ծրագրի մշակման ավարտական էտապում։ Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ շրջափուլից շրջափուլ բուհը բարելավում է ռազմավարական պլանավորումը՝ իր մշակման ու գնահատման գործիքներով։ Այսպես, ռազմավարական պլանավորման երկրորդ շրջափուլը առաջինից շահեկանորեն տարբերվել է առաջին հերթին նրանով, որ առկա է եղել ռազմավարական նպատակների գնահատման ԳԱՑ լրակազմ և որ երկրորդ շրջափուլն ամփոփվել է՝ հիմքում ունենալով այդ լրակազմը։ Իսկ երրորդ շրջափուլը շահեկանորեն տարբերվում է երկրորդից նրանով, որ այս փուլում մեծացել է ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը ռազմավարական ծրագրի կազմմանը, և, մասնավորապես ԳԱՑ լրակազմի քննարկմանն ու սահմանմանը։

Փորձագիտական խումբը թեև ըմբռնումով է մոտենում նախորդ ռազմավարական ծրագրի ավարտից հետո նոր ծրագրի՝ տակավին հաստատված չլինելու պատճառներին, այդուհանդերձ նոր ՌԾ-ի՝ ֆորմալ առումով դեռևս գոյություն չունենալը զրկում է փորձագիտական խմբին ՀԳՊԱ-ում ռազմավարական պլանավորման էվոլյուցիան գնահատելու, համեմատական վերլուծություն անելու, հնարավոր խնդրահարույց կողմերը վերհանելու, կատարողականի ցուցիչների արժանահավատությունը քննարկելու հնարավորությունից։ Նոր ՌԾ-ի դրույթներին, և մասնավորապես, բուհի ամբիցիաների հստակեցված չլինելը թույլ չի տալիս նաև գնահատել կառավարման արդյունավետությունը (ինչին կանդրադառնանք չափանիշ 2-ին վերաբերող շարադրանքում), գնահատել գործունեության հիմնական ուղղությունների զարգացման հնարավորություններն ու միտումները՝ բուհի մարդկային, նյութական, ֆինանսական ռեսուրսների ու մենեջերիալ կարողությունների համատեքստում։

Չնայած գործող ԳԱՑ-երի կիրառումը ռազմավարական նպատակների ձեռքբերվածության աստիճանի ոչ այնքան արժանահավատ գնահատման տեղիք է տվել նախորդ շրջափուլն ամփոփելիս, փորձագիտական խումբը դրական է համարում ռազմավարական ծրագրի ամփոփման այսպիսի մշակույթն ինքնին և հույս է հայտնում, որ երրորդ շրջափուլում ՀԳՊԱ-ն ունենալու է գնահատման առավել հավաստի լրակազմ։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՀԳՊԱ-ի առաքելությունը ձևակերպված է հստակ, արտացոլում է բուհի մասնագիտական պրոֆիլն ու գործունեության հիմնական

ուղղությունները, որ առաքելությունը տեսանելի է կրթական ծրագրերի և հետազոտության բովանդակության ու արդյունքների մեջ, որ շրջափուլից շրջափուլ նկատելիորեն բարելավվում է ռազմավարական պլանավորման գործիքակազմը, որ առկա են բուհի ռազմավարական նպատակների գնահատման առավել արժանահավատ ցուցիչներ սահմանելու միտումներ և որ ռազմավարական պլանավորումն ընդգրկում է շահակիցների լայն շրջանակի մոտեցումները, կարիքներն ու կարծիքները, փորձագիտական խումբը գտնում է, որ ՀԳՊԱ-ի ինստիտուցիոնալ կարողությունները համապատասխանում են չափանիշ 1-ի պահանջներին։

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀԳՊԱ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար**։

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

2.1 Հաստատության կառավարման համակարգն ապահովում է, սահմանված էթիկայի կանոններին համապատասխան, որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ՀԳՊԱ-ի կառավարումը, համաձայն «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքի, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի, բուհի կանոնադրության և այլ իրավական ակտերի, տեղի է ունենում կառավարման կոլեգիալ ու միանձնյա ձևերի զուգակցմամբ։ Ակադեմիայի կառավարման բարձրագույն կոլեգիալ մարմինը բուհի հոգաբարձուների խորհուրդն է։ Բարձր օղակի կոլեգիալ կառավարման մյուս մարմինը գիտական խորհուրդն է, որը պլանավորում, համակարգում և կարգավորում է բուհի ուսումնական, մեթոդական, գիտական-հետազոտական գործունեությունը։ Միանձնյա կառավարման գործադիր մարմինը ռեկտորն է։ Միջին օղակի կոլեգիալ կառավարման մարմիններն են ֆակուլտետային խորհուրդներն ու ամբիոնները, որոնք ղեկավարվում են, համապատասխանաբար, դեկանների ու ամբիոնի վարիչների կողմից։ Բուհի կրթական ծրագրերն իրականացվում են նաև Գյումրիի մասնաճյուղում և Դիլիջանի ստորաբաժանումում։ Կրթական, հետազոտական, հանրային ներգրավման և այլ գործառույթների իրականացումը տեղի է ունենում վարչական ստորաբաժանումների կազմակերպմամբ։ Վերոնշյալ բոլոր մարմինների ձևավորման կարգը, իրավասությունները, գործառույթները, աշխատակարգն ու պարտականությունները նկարագրված են ինչպես ՀՀ բարձրագույն կրթական համակարգը սահմանող ու կանոնակարգող նորմատիվ-իրավական փաստաթղթերում, այնպես էլ բուհի ներքին իրավական ակտերում։

Նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցում արձանագրվել էր, որ Գեղարվեստի պետական ակադեմիայի կազմակերպական կառուցվածքը չի ապահովում կառավարման համապատասխան հիերարխիան, որ ֆակուլտետները և ամբիոնները կազմակերպական կառուցվածքում «միայն համագործակցության դաշտում են վերադաս ստորաբաժանումների հետ և ենթակա չեն կատարելու վերադասի որոշումները»։ Համաձայն բարելավման ծրագրի՝ ՀԳՊԱ-ն նախատեսել էր հստակեցնել կառավարման ստորաբաժանումների գործառույթները և վերանայել ենթակայության ու հաղորդակցության կապերը ըստ ռազմավարական նպատակների։ Այս համատեքստում բուհը կարևորել էր կառավարման ոլորտում ներգրավված շահակիցների մասնակցության, նախաձեռնողականության մակարդակի բարձրացումը։

Կառավարման համակարգի կատարելագործումը բուհի զարգացման 2017-2021թթ. ռազմավարական ծրագրի թիվ 1 նպատակն է հանդիսացել։ Այդ ուղղությամբ նշված ռազմավարական ծրագրում ՀԳՊԱ-ն խնդիր էր դրել.

- ներդնել էլեկտրոնային կառավարման համակարգ և զարգացնել տեղեկատվության կառավարումը,
- բարելավել ստորաբաժանումների համագործակցությունը,
- զարգացնել մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացները,
- բարձրացնել ֆինանսական և նյութական ռեսուրսների տնօրինման արդյունավետությունը։

Հարկ է նշել, որ վերոգրյալ խնդիրների լուծման համար Ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույցում զետեղվել են գործողությունների արդյունքների գնահատման ցուցիչներ, Հոգաբարձուների խորհրդին ներկայացվող ամենամյա հաշվետվությունները կազմվում են ռազմավարական նպատակները հաշվետվության հիմք ընդունելու մեթոդաբանությամբ, իսկ ծրագրի ավարտին տեղի է ունեցել ծրագրի ամբողջական գնահատում՝ հիմնվելով նշված ցուցիչների վրա։ Այդուհանդերձ նման ցուցիչների գնահատման արդյունքների համադրությունը բավարար հիմքեր չի տալիս փորձագիտական խմբին՝ հասկանալու, թե որքանով են լուծվել կառավարման ոլորտի խնդիրները։ Նախ՝ նկատենք, որ բուհն ինքը չի վերլուծել ռազմավարական ծրագրով սահմանված գործողությունների ազդեցությունը կառավարման համակարգի զարգացման վրա՝ մատնանշելով կոնկրետ ձեռքբերումներն այս ուղղությամբ։ Երկրորդ՝ փորձագիտական խումբը, նշված խնդիրների ուղղությամբ բուհի կատարած աշխատանքները դիտարկելով արդյունքի դիրքերից՝ արձանագրում է հետևյալ իրողությունները.

- **Ներդնել էլեկտրոնային կառավարման համակարգ և զարգացնել տեղեկատվության կառավարումը**։ Վարչական և ուսումնական գործընթացների էլեկտրոնային կառավարումը, տեղեկատվության, տվյալների գեներացումն ու փոխանցումը կիսատ են կատարված։ Այսպես, Mulberry էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը ներդրված է, համակարգից օգտվող աշխատակիցներն անցել են համապատասխան վերապատրաստումներ, այդուհանդերձ համակարգը դեռևս գործարկված չէ, մասնավորապես, ամբիոնները դեռևս մաս չեն կազմում համակարգին։

Ուսանողների հաշվառման ու անձնական գործերի վարման տվյալները, ավարտական տեղեկագրերն ու դիպլոմների միջուկները գեներացվում են էլեկտրոնային եղանակով, մուտքագրված են դասախոսների տվյալները, բայց մյուս կողմից բացակայում են ուսումնառության էլեկտրոնային հարթակները (Moodle, Google classroom և այլն), դասախոսների ուսումնամեթոդական բեռնվածության հաշվարկը դեռևս ավտոմատացված չէ, ուսանողներն ու դասախոսները չունեն բուհական էլեկտրոնային հասցեներ և այլն:

- **Բարելավել ստորաբաժանումների համագործակցությունը**: Նախորդ հավատարմագրումից հետո ՀԳՊԱ-ն նպատակ է դրել բարձրացնել կառավարման համակարգի գործունեության արդյունավետությունը՝ այն վերածելով միասնական օրգանիզմի: Այս համատեքստում ոչ միայն մշակվել ու վերանայվել են կառավարման տարբեր մարմինների ու կառուցվածքային միավորների գործունեությունը կարգավորող նորմատիվ-իրավական փաստաթղթերը, այլև կատարվել են կառուցվածքային և գործառութային փոփոխություններ, մասնավորապես, բուհում նոր գործառույթներ ի հայտ գալով պայմանավորված: Այսպես, կարիերայի կենտրոնի հիման վրա ձևավորվել է ուսանողների աջակցման և շրջանավարտների հետ համագործակցության կենտրոնը, հանրային կապերի պատասխանատուի պաշտոնի փոխարեն ստեղծվել են երեք նոր պատասխանատուների պաշտոններ՝ ավելի լայն գործառույթներով. «Մեդիայի հետ կապի և սոցիալական էջերի պատասխանատու», «Պաշտոնական կայքէջի պատասխանատու», «Լրագրող», ստեղծվել է նաև «Ստեղծագործական և նախագծային պրոդուկտների առևտրայնացման պատասխանատուի» հաստիքը, լուծարվել է ուսումնական վարչությունը և ձևավորվել են «Ուսումնամեթոդական մշակումների և ուսումնական գործընթացի հաշվառման» ու «Կրթական ծրագրերի մշակումների» բաժինները և այլն: Միևնույն ժամանակ, փորձագիտական այցից պարզ է դարձել, որ ՀԳՊԱ-ի կառավարման տարբեր մարմինների և օղակների միջև կոմունիկացիայի, ներդաշնակ գործունեության խնդիրներ կան: Այսպես, ՀԳՊԱ-ի վարչական պատասխանատուների մի խմբի ձեռքում է կենտրոնացած բուհի խոշոր գործընթացների նախաձեռնության, ռազմավարական պլանավորման, ընթացիկ մշտադիտարկման, ինչպես նաև գնահատման իրական գործառույթները: Կրթական ծրագրերի մոդուլավորման գործընթացն ասվածի վառ ապացույցներից է, որտեղ գաղափարի գեներացումից մինչև իրականացում, ինչպես նաև ընթացիկ նախնական գնահատում շղթան նրանցով է անցնում (իհարկե, հարցի շուրջ քննարկումներ են տեղի ունեցել նաև ամբիոններում): Խմբում, իհարկե, նախաձեռնող, մոտիվացված, հանձնառու, պատրաստված, բուհի խնդիրներին տիրապետող, ժամանակակից մոտեցումներ կրող մարդիկ են, ում գործունեության վերլուծությունը տեսանելի է դարձնում բուհի ձեռքբերումները հատկապես նախորդ հավատարմագրման շրջանից հետո (բուհի գործունեության փաստաթղթային հենքի բարելավում և զարգացում, որակի մշակույթի և կառավարման գործընթացի որոշակի բարելավում, ենթակառուցվածքի որոշակի բարելավում և այլն): Բայցևայնպես բուհի

կառավարման համակարգին բնորոշ է այն, որ զարգացման ազդակները ոչ թե (կամ ոչ այնքան) ուսումնական ստորաբաժանումներից կամ կառավարման բարձրագույն օղակներից են փոխանցվում այս խմբին (որն, ըստ էության, զարգացման ազդակների իմպլեմենտացիայի պատասխանատուն է), այլ այս խմբից են հաղորդվում վերև և ներքև: Այս ուղղությամբ մյուսը ուսումնական ստորաբաժանումների և արտաքին կապերի բաժնի միջև նկատված կոմունիկացիայի խնդիրն էր, ինչն արտահայտվում էր նրանում, որ նախ՝ բուհի բարձրագույն ղեկավարության և արտաքին կապերի բաժնի միջև չկար համաձայնություն որոշ խնդիրների արդիականության վերաբերյալ (օրինակ՝ բաժնին առանձին տողով բյուջե տրամադրելու հարցը), երկրորդ՝ բաժինը կտրված է վարչական և ուսումնական տարբեր ստորաբաժանումների՝ արտաքին համագործակցությունը բովանդակող ծրագրերը, նախաձեռնությունները համակարգելուց, դրանց մասին անհրաժեշտ չափի տեղեկատվությունից, չունի բավարար հնարավորություն կամ ազդեցություն այդ ստորաբաժանումների համար արտաքին համագործակցային գործընթացներ նախաձեռնելու:

- **Զարգացնել մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացները**: Նախորդ հավատարմագրման գործընթացից հետո՝ զարգացման 2017-2021թթ. ռազմավարական ծրագրի հաշվետու ժամանակաշրջանում, ՀԳՊԱ-ն կանոնակարգել է իր վարչական ստորաբաժանումների, ինչպես նաև վարչական ու գիտամանկավարժական աշխատակիցների գործունեությունը՝ սահմանելով նրանց գործառույթները, իրավասություններն ու պարտականությունները, այդուհանդերձ բուհում բացակայում է մարդկային ռեսուրսների ներգրավման, պահպանման, առաջխաղացման և մոտիվացման համալիր ու համակարգված քաղաքականությունը: Ցածր աշխատավարձերն ու նման քաղաքականություն իրականացնելու համար մարդկային-մասնագիտական ռեսուրսի բացակայությունը (կադրերի բաժինն զբաղվում է գերազանցապես փաստաթղթավորմամբ) վերոնշյալի կարևոր պատճառներից են: Հետազոտական կենտրոնի ղեկավարի հաստիքի՝ տևական ժամանակ թափուր մնալը, առհասարակ այդ կենտրոնի՝ բուհի հետազոտական ռազմավարությամբ սահմանված կարևոր խնդիրները չլուծելու հանգամանքը ըստ էության կառավարման ոլորտում առկա նշված խնդրի հետևանք է (հանգամանք, որ նկատվել էր նաև նախորդ հավատարմագրման ժամանակ):
- **Բարձրացնել ֆինանսական և նյութական ռեսուրսների տնօրինման արդյունավետությունը**: Ռազմավարական այս խնդրի լուծման ուղղությամբ ՀԳՊԱ-ն թեև մշակել է գույքի տնօրինման կարգ, վերանայել է ստորաբաժանումների տարեկան գործունեության պլանավորման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման կարգ, այդուհանդերձ փորձագիտական խումբն այս խնդրի առնչությամբ երեք կարևոր բացեր է արձանագրել. առաջին՝ բուհը չունի արված վերլուծություն ֆինանսական և նյութական ռեսուրսների տնօրինման արդյունավետության վերաբերյալ, երկրորդ՝ բուհը չունի ռազմավարական բյուջե՝ ռազմավարական գործողությունների համար անհրաժեշտ միջոցներ պլանավորելու համար, երրորդ՝ ստեղծագործական և

նախագծային պրոդուկտների առևտրայնացման պատասխանատուի գործունեությունը դեռևս չի տվել տեսանելի արդյունքներ (ինչը, համաձայն փորձագիտական խմբին ներկայացված ընդունելի հիմնավորման, պայմանավորված է նաև օբյեկտիվ հանգամանքներով, մասնավորապես, հեղինակային իրավունքի վերաբերյալ օրենսդրական դաշտի անկատարությամբ)։

Փորձագիտական խումբը, փաստաթղթերի ուսումնասիրության և փորձագիտական այցի արդյունքում արձանագրում է կառավարման ոլորտում բուհի որոշ նկատելի հաջողություններ և ուժեղ կողմեր, որոնցից են ստորև բերվածները.

- **Ռազմավարական պլանավորման, մշտադիտարկման ու գնահատման գործիքակազմի բարելավում**։ ՀԳՊԱ-ում հատկապես վարչական ստորաբաժանումներում արմատավորվում է քաղաքականությունների և գործընթացների որակի կառավարման պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում մշակույթը։ Հատկապես վարչական ստորաբաժանումների գործունեության պլանավորումը կապակցվում է բուհի ռազմավարական պլանին։ Հաշվետվողականությունը և գնահատումը իրականացվում են ռազմավարական նպատակները հիմքում ունենալու մեթոդաբանությամբ, կատարողականի սահմանված ցուցիչներով ու դրանց մեկնաբանությամբ։ Ռեկտորատի ՊԻԳԲ հանձնախումբը, որում ընդգրկված են ռեկտորը, պրոռեկտորները, որակի ապահովման պատասխանատուն, երկու դասախոսները և մեկ ուսանողը, դիտարկում է ստորաբաժանումների եռամսյակային հաշվետվությունները, պարզաբանում պահանջում թերակատարումների համար և այլն։
- **Բուհի վարչական և գիտամանկավարժական աշխատակազմի, ուսանողության ոչ մեծաթիվ լինելով պայմանավորված՝ շփումների անմիջականություն և կոմունիկացիաների դյուրություն**։
- **Արտաքին մարտահրավերներին պատասխանելու կարողություն**։ Covid-19 համավարակի ժամանակ ուսումնական պրոցեսը չի խաթարվել. տեսական բնույթի դասերը կատարվել են Zoom համակարգի օգնությամբ, իսկ գործնական դասաժամերը կազմակերպվել են խմբերի փոքրացման ու երկու հերթափոխի միջոցով։
- **Գյումրիի մասնաճյուղի գործունեության արդյունքների դրական շարժընթաց**։ Մասնաճյուղն ինքնուրույն դիմում է դրամաշնորհային ծրագրերի և հաճախ գրանցում հաջողություններ. 2019թ.-ից երեք խոշոր դրամաշնորհային ծրագիր են իրականացրել։ Ի տարբերություն գլխամասի, որտեղ աշխատավարձերը կազմում են ծախսերի 80 տոկոսը, մասնաճյուղում աշխատավարձերը կազմում են ծախսերի 60 տոկոսը։

Փորձագիտական խումբը, փաստաթղթերի ուսումնասիրության ու փորձագիտական այցի արդյունքում վեր է հանել նաև մի շարք իրողություններ, որոնք վկայում են կառավարման համակարգի՝ դեռևս ցածր արդյունավետությամբ գործառնության մասին։ Այդ իրողությունների շարքում առանձնացված են հետևյալները.

- Փաստաթղթերի ուսումնասիրության ու փորձագիտական այցի ժամանակահատվածում ՀԳՊԱ-ն չուներ զարգացման ռազմավարական ծրագիր։

- ՀԳՊԱ-ի կոլեգիալ կառավարման բարձրագույն մարմինը՝ հոգաբարձուների խորհուրդը, մեծամասամբ հաղորդակից չէ բուհի խնդիրներին ու ներքին կարևոր գործընթացներին։ Փորձագիտական այցը ցույց տվեց, որ այս մարմինը խիստ խորհրդանշական մասնակցություն ունի գործընթացների ռազմավարական պլանավորման, մշտադիտարկման ու գնահատման հետ, պարզորոշ չի պատկերացնում իր դերը ո՛չ բուհի ղեկավարության առջև խնդիրներ դնելու, ո՛չ էլ բուհի առջև ծառացած մարտահրավերները լուծելու հարցում։ Օրինակ՝ հոգաբարձուները չէին պատկերացնում բուհի եկամուտների բազմազանեցման ու ավելացման, դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի ֆակուլտետի բնականոն գործունեությունն ապահովելու համար ուսումնական լրացուցիչ անհրաժեշտ ենթակառուցվածք ձեռքբերելու, հաշվետվողականությունը բարելավելու, աշխատաշուկայում պահանջված որոշ մասնագիտությունների (օրինակ՝ նկարիչ-վերականգնող) հետ կապված օրենսդրական բարելավումներ կատարելու և այլ հարցերում իրենց դերակատարման հնարավորությունը։ Հոգաբարձուները խորամուխ չէին ինչպես ՀԳՊԱ-ի զարգացման ռազմավարական ծրագրի ստեղծման աշխատանքների (ի՞նչ տեսլական պետք է ունենա բուհը, որո՞նք են լինելու ռազմավարական կարևորագույն խնդիրները, ինչու՞ մինչ այժմ պատրաստ չէ նոր ծրագիրը և այլն), այնպես էլ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի մեջ (որքանո՞վ են մասնակցել ինքնավերլուծության մշակմանը, ի՞նչ խնդիրներ են հայտնաբերել և այլն)։ Հոգաբարձուների խորհուրդը չի նպաստում պետական մարմինների հետ ակտիվ փոխազդմանը (փորձագիտական խումբը չի բացառում, որ այս հարցում պետական մարմինների պասիվությունն է դեր խաղում)։ Հոգաբարձուների խորհրդի նիստեր (տարեկան հաշվետվության նիստից զատ) հազվադեպ են հրավիրվում, այն էլ՝ բուհի նախաձեռնությամբ։
- Փորձագիտական այցից ստացվել է տպավորություն, որ կառավարման միջին ու ստորին օղակների ներկայացուցիչները (ֆակուլտետների և ամբիոնների ղեկավարներ) բուհի ռազմավարական առաջնահերթությունների վերաբերյալ հստակ ու որոշակի պատկերացումներ չունեն։ Նրանց առջև կառավարման վերին օղակների կողմից կա՛մ չեն դրվում ռազմավարական բնույթի խնդիրներ, կա՛մ առկա է կոմունիկացիայի պրոբլեմ՝ այդ խնդիրները հստակ ու ընկալելի դարձնելու համար։
- Որակի ապահովման գործառույթները առավելապես վերաբերում են կրթական ծրագրերին, կրթական գործունեությանը։ Վարչական գործընթացների, վարչական աշխատակազմի գործունեության հետ կապված խնդիրներ վերհանելու արդյունավետությունը դեռևս չի զգացվում։ Ռազմավարական պլանավորումը դեռևս չի կատարվում որակի ապահովման կողմից գեներացված տվյալների հիման վրա։ Որակի ապահովման պատասխանատուն ռեկտորի ենթակայության ներքո է (ինչը, չնայած, կառավարման խորհրդի ցածր ֆունկցիոնալության պայմաններում, փաստորեն արդարացված է)։

- Նկատելի են խնդիրներ՝ կապված կառավարման ոլորտի միջին օղակի պատասխանատուների մենեջերիալ կարողունակությունների հետ։
- Դատելով ՀԳՊԱ-ի կառուցվածքի գծապատկերից և որոշ ստորաբաժանումների կանոնակարգերից՝ առկա է վարչական ստորաբաժանումների երկակի կամ եռակի ենթակայության համակարգ. այսպես, ուսումնամեթոդական մշակումների և ուսումնական գործընթացի հաշվառման, կրթական ծրագրերի մշակումների բաժինները, հետազոտական կենտրոնը և ուսանողների աջակցության և շրջանավարտների հետ համագործակցության կենտրոնը ենթակա են ռեկտորին և ուսումնագիտական գծով պրոռեկտորին։ Արտաքին կապերի, կադրերի հաշվառման և ընդհանուր, հատուկ բաժինները, գրադարանը, ցուցասրահը, առաջին օգնության կետը, պաշտոնական կայքէջի պատասխանատուն, լրագրողը, մեդիայի հետ կապի և սոցիալական էջերի պատասխանատուն, ստեղծագործական և նախագծային պրոդուկտների առևտրայնացման պատասխանատուն ենթական են թե՛ ռեկտորին, թե՛ ուսումնագիտական ու ֆինանսատնտեսական գծով պրոռեկտորներին։
- Էթիկայի կանոնակարգերը թեև զետեղված և հասանելի են բուհի կայքէջում, այդուհանդերձ դրանց վերաբերյալ շահակիցների տեղեկացվածությունը բարձր չէ[6]։
- Աշխատավարձերը, հատկապես գիտամանկավարժական համակազմի, ցածր են։ Ցածր աշխատավարձերի և նվազ եկամուտների պայմաններում բուհի կողմից դպրոցներում տարվող մասնագիտական կողմնորոշման միջոցառումները, որոնք միտված են ավելացնելու ուսանողների թիվը բուհում, համակարգված ու պլանավորված գործընթաց չէ։

2.2 ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցնել իրենց առնչվող որոշումների կայացմանը։

ՀԳՊԱ-ի դասախոսների, ուսանողների, ներքին մյուս շահակիցների՝ իրենց առնչվող որոշումների կայացմանը մասնակցությունը ֆորմալ առումով կանոնակարգված է «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին», «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքներով, բուհի կանոնադրությամբ, գիտական խորհրդի կանոնակարգով, ֆակուլտետների կանոնադրություններով և այլ իրավական ակտերով։

Համաձայն վերոնշյալների՝ կառավարման խորհրդի (Հոգաբարձուների խորհուրդ) 20 անդամներից 5-ը ուսանողներ են, ևս 5-ը՝ բուհի գիտամանկավարժական և վարչական աշխատակիցներ։ Խորհրդի՝ ԿԳՄՍ քվոտայով ներգրավված արտաքին անդամների մի մասն էլ դասավանդում է բուհում արտաքին համատեղությամբ։ Գիտական խորհրդի 29 անդամներից 8-ը ուսանողներն են, մնացած մասը՝ բուհի գիտամանկավարժական ու վարչական աշխատակիցներ, հրավիրյալ անդամներ[7]։ Ուսանողները կազմում են նաև

[6] Միտքը վերաշարադրվել է հաստատության դիտարկումների քննարկման արդյունքում։
[7] Միտքը վերաշարադրվել է հաստատության դիտարկումների քննարկման արդյունքում։

ֆակուլտետների խորհուրդների անդամների ¼-ը։ Ֆակուլտետային խորհուրդներում ընդգրկված են դեկանները, նրանց տեղակալները, ամբիոնի վարիչները, դասախոսները։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բուհում փոփոխությունների նախաձեռնումը գերազանցապես տեղի է ունենում վարչական նեղ կազմի կողմից։ Այդուհանդերձ բուհը կարևորում է այդ գործընթացներում ներքին շահակիցների մասնակցությունը։ Կրթական ծրագրերի կառուցվածքի և կազմակերպման սկզբունքի փոփոխությունը նախաձեռնել է վարչական կազմը, ինչը, սակայն, տևական քննարկվել է ամբիոնի վարիչների ու դասախոսների հետ։ Ուսանողական հարցումներին մասնակցությունը ևս կարելի է համարել իրենց առնչվող որոշումներին ուսանողների մասնակցության ձև, քանի որ հարցաթերթիկները պարունակում են առաջարկությունների հատված, այդուհանդերձ փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հարցումներին ուսանողների մասնակցությունը թույլ է։ Դասախոսները և ուսանողները որոշ մասնակցություն ունեն նաև բուհի զարգացման նոր ռազմավարական ծրագրի կազմման գործում։ ՀԳՊԱ-ն կազմել է 2022-2026թթ. ռազմավարական ծրագրի մշակման ներքին և արտաքին շահակիցների ցուցակ, որտեղ դասակարգել է ուսանողներին (ուսխորհրդի անդամներ, կառավարման մարմիններում ընդգրկված ուսանողներ, հայտարարությամբ գրանցված ուսանողներ) ու դասախոսներին (ամբիոնի վարիչներ, կառավարման մարմիններում ընդգրկված դասախոսներ, հայտարարությամբ գրանցված դասախոսներ)։

Փաստաթղթերի ուսումնասիրությունից ու փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՀԳՊԱ-ում դեռևս խնդիրներ կան կա՛մ իրենց առնչվող որոշումներին մասնակցությունը կազմակերպելու, կա՛մ դրա հնարավորությունները ներքին շահակիցներին հասկանալի դարձնելու հարցերում։ Այսպես, վարչական աշխատողների շրջանում 2021թ. հունիսին արված հարցման արդյունքները ցույց են տալիս, որ վարչական աշխատողների կեսը փաստաթղթերին ծանոթանում է դրանց հաստատումից հետո։ Միևնույն ժամանակ, հարցված վարչական աշխատակիցների 72 տոկոսը համարել է, որ իրենց ու իրենց գործընկերների կարծիքն ազդում է որոշումների կայացման վրա։ Հարցված դասախոսների կեսն է գտնում, որ իրենց կարծիքն ազդում է որոշումների կայացման վրա, իսկ ⅓-ը գտնում է, որ չի ազդում։ Նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցում խնդրահարույց էր համարվել ներքին շահակիցների՝ որոշումների ընդունմանը մասնացկությունը։ Մյուս կողմից, վերջին շրջանի հարցումները ցույց են տալիս, որ վարչական աշխատակիցների ¾-ը, դասախոսական կազմի ½-ը բավարարված են որոշումների կայացման հարցում իրենց մասնակցությունից։ Այդուհանդերձ պարզ չէ, թե բավարարվածության այս մակարդակը ի՞նչ հանգամանքներով է պայմանավորված. թե ինչպե՞ս, ի՞նչ միջոցառումներով է, հավատարմագրման նախորդ շրջափուլի համեմատ, այս շրջափուլում ՀԳՊԱ-ն մեծացրել դասախոսների և վարչական աշխատակիցների մասնակցությունը որոշումների կայացմանը։

2.3 ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայում երկարաժամկետ պլանավորումն իրականացվում է բուհի զարգացման հինգամյա ռազմավարական ծրագրով: Ինչպես արդեն նշել ենք, բուհի նախորդ ռազմավարական ծրագրի շրջափուլն ավարտվել է 2021թ., նոր ծրագրի մշակումն ընթացքի մեջ է: Երկարաժամկետ պլանավորումը մշտադիտարկելու համար բուհը սահմանել է կատարողականի ցուցիչներ, որոնց՝ ռազմավարական նպատակների համահունչ լինելու վերաբերյալ խնդիրները վերհանված են 1.3 չափորոշչին վերաբերող շարադրանքում: Հատկանշական է, որ նախորդ հավատարմագրման փորձագիտական խումբը ևս նկատել էր այս խնդիրը և արձանագրել, որ ռազմավարական խնդիրների կատարողականի ցուցիչները չունեն հիմնավորումներ, որ դրանց կիրառմամբ հնարավոր չի լինում գնահատել, թե արդյոք իրականացվե՞լ են ռազմավարական նպատակները թե ոչ: Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ ՀԳՊԱ-ի ղեկավարությունը այս խնդրին զգալի ուշադրություն է դարձնում: Պարզ դարձավ, որ նոր ռազմավարական ծրագրի մշակումը ձգձգվել է հենց այն պատճառով, որ հատկապես արտաքին շահակիցների հետ հիմնավոր քննարկումների միջոցով է նաև բուհը ձգտում բարելավել արդյունքի գնահատման ցուցիչները:

ՀԳՊԱ-ն իրականացնում է նաև ոլորտային երկարաժամկետ պլանավորում: Անցած շրջափուլում, սակայն, ռազմավարական 6 նպատակադրումներից միայն 2-ի վերաբերյալ է մշակվել փաստաթղթավորված ռազմավարություն՝ հետազոտության և միջազգայնացման: Միջազգայնացման ռազմավարությունն ընդգրկում է 2016-2020 թվականները, որի նպատակադրումների ու խնդիրների ձևակերպումների կապը ՀԳՊԱ-ի զարգացման 2017-2021թթ. ռազմավարական ծրագրի հետ թույլ է ու ոչ պարզորոշ՝ ըստ էության հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀԳՊԱ-ի ռազմավարական ծրագիրն ավելի ուշ է մշակվել, քան միջազգայնացման ռազմավարությունը: Միջազգայնացման ոլորտը, փաստորեն, շրջափուլի ավարտից հետո (2020թ.), դեռևս ռազմավարական պլանավորման ենթակա չէ: Ինչ վերաբերում է ՀԳՊԱ-ի հետազոտության ռազմավարությանը (2019-2022թթ.), ապա նրանում դրված ռազմավարական խնդիրները սինխրոն են ՀԳՊԱ-ի զարգացման ռազմավարական ծրագրի խնդիրների հետ: Հետազոտության երկարաժամկետ պլանավորման խնդիրը կապված է դրա համակարգման հետ: Հետազոտական կենտրոնի ոչ արդյունավետ գործունեության հանգամանքը նկատվել է նաև նախորդ հավատարմագրման ժամանակ: Վերջին շրջափուլում ևս հետազոտական կենտրոնը փաստորեն ռազմավարական գործունեություն չի ծավալել, այլ պարզապես իրականացրել է գիտահետազոտական արդյունքի հաշվառման, հետազոտողի կրթական գործընթացի փաստաթղթավորման և այլ օպերացիոնալ գործողություններ, ինչը պայմանավորված է եղել նաև կենտրոնի ղեկավարի հաստիքի թափուր մնալով:

Համաձայն ինքնավերլուծության և ուսումնասիրված փաստաթղթերի՝ ՀԳՊԱ-ի երկարաժամկետ պլանավորումը տեղի է ունենում ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանմամբ, կարծիքների և մոտեցումների հաշվառմամբ: Ինչպես նշել ենք,

ՀԳՊԱ-ն իր 2022-2026թթ. ռազմավարական ծրագրի մշակման համար ցուցակագրել է ներքին ու արտաքին շահակիցներին: ՀԳՊԱ-ի ռազմավարական ծրագրի նախագծման և մշակման ուղենիշներն էլ բուհին ուղղորդում են մինչև ռազմավարական ծրագրի մշակումը վերհանել շահակիցների կարիքները, իսկ մշակելուց հետո, ծրագրի նախնական տարբերակը ներկայացնել շահակիցների քննարկմանը:

Երկարաժամկետ պլանավորումը մշտադիտարկելու և վերահսկելու հիմնական մեխանիզմը ռեկտորի կողմից հոգաբարձուների խորհրդին տրվող ամենամյա հաշվետվություններն են: Հաշվետվությունները կազմվում են ըստ ռազմավարական ծրագրի նպատակների: Թեև այսպիսով դյուրացվում է հաշվետվողականությունը, այդուհանդերձ հաշվետվություններում ներկայացվում են ռազմավարական պլանով նախատեսված որոշ, ոչ բոլոր գործողությունների կատարման արդյունքները: Հաշվետվությունները նախ՝ հիմնված չեն ռազմավարական ծրագրով պլանավորված բոլոր գործողությունների կատարողականի գնահատման վրա, երկրորդ՝ չեն ներկայացվում որոշ գործողությունների չկատարման կամ թերակատարման պատճառները: Համաձայն ինքնավերլուծության՝ բուհի զարգացման ռազմավարական ծրագիրը, ինչպես նաև դրանում առկա գործողությունների վերաբերյալ ամենամյա հաշվետվությունները հաստատվում են հոգաբարձուների խորհրդի կողմից: Փորձագիտական այցը ցույց տվեց, որ այդ հաստատումը գերազանցապես ֆորմալ գործընթաց է: Հոգաբարձուները խորամուխ չեն ինչպես ռազմավարական պլանավորման, այնպես էլ հաշվետվողականության էական տարրերի ու մեխանիզմների մեջ: Ռազմավարական ծրագրում պլանավորված, սակայն չկատարված կամ թերակատարված գործողություններին (օրինակ՝ պլանավորված է եղել «բազմազանեցնել եկամուտները», «ներդնել օտարալեզու կրթական ծրագիր», «իրականացնել համատեղ կրթական ծրագիր» գործողությունները, որոնք չեն կատարվել) հոգաբարձուների կողմից անդրադարձ չկատարելը (արձանագրություններում բացակայում են դրանք) ասվածի վկայություններից մեկն է: Հաշվետվությունները հստակ ցույց չեն տալիս թե սահմանված քանակական ու որակական ցուցիչներով նախատեսված արդյունքները ձեռք են բերվել թե ոչ:

Համաձայն ինքնավերլուծության՝ ՀԳՊԱ-ում միջնաժամկետ պլանավորումն արտահայտվում է բուհի զարգացման ռազմավարական ծրագրի գործողությունների պլանում, որում ներառված են նպատակների իրականացմանն ուղղված գործողությունները, դրանց իրականացման պատասխանատուները, հաջողության ցուցիչները, ստուգող մարմինը և կատարման ժամկետները: Փաստաթղթերի ուսումնասիրությունը, սակայն, ցույց է տալիս, որ բուհը դեռևս չի իրականացնում միջնաժամկետ պլանավորում. չկա ՀԳՊԱ-ի զարգացման ռազմավարական ծրագրի դրույթների իրականացումը ավելի մանրամասն բացող, որոշակի դարձնող բացվածք-պլան: Այս առումով գուցե հնարավոր է վկայակոչել բուհի հետազոտության ռազմավարությունը[8]:

ՀԳՊԱ-ում կարճաժամկետ պլանավորումներն իրականացվում են վարչական ստորաբաժանումների տարեկան պլանների ձևով: Սահմանված է տարեկան պլանավորման

[8] Միտքը վերաշարադրվել է հաստատության դիտարկումների քննարկման արդյունքում:

ձևաչափ, որի օգնությամբ ստորաբաժանումները, բուհի զարգացման ռազմավարական ծրագրի նպատակներն ու խնդիրները հիմք ընդունելով, կազմում են սեփական գործունեության տարեկան պլանը: Կարճաժամկետ պլանավորման գնահատման մեխանիզմները եռամսյակային և տարեկան հաշվետվություններն են: Եռամսյակային հաշվետվությունները ստորաբաժանումների կողմից ներկայացվում են հաշվետվությունների գնահատման հանձնախմբին (ՊԻԳԲ խումբ), իսկ տարեկան հաշվետվությունները՝ գիտական խորհրդին: Համաձայն վարչական աշխատողների շրջանում 2021թ. արված հարցման արդյունքների՝ վարչական բոլոր աշխատակիցները մասնակցում են ստորաբաժանման գործողությունների տարեկան պլանների կազմմանը:

2.4 ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

Այն հանգամանքը, որ ՀԳՊԱ-ն կարևորում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունը, արտացոլված է բուհի գործընթացների պլանավորմանը վերաբերող որոշ մեթոդական փաստաթղթերում: Բուհի զարգացման նոր ռազմավարական ծրագրի նախագծման և մշակման ուղենիշներում կարևորված է տվյալների հավաքագրման և վերլուծության հստակ մեխանիզմներ ունենալու հանգամանքը:

Ինքնավերլուծությունը մակերեսային ու ընդհանրական կերպով է նկարագրում, թե ինչպես է տեղի ունենում իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունը ՀԳՊԱ-ի պարագայում: Այսպես, ինքնավերլուծության մեջ նշվում է, որ ռազմավարական ծրագիրը մշակելիս ՀԳՊԱ-ն հիմնվում է ներքին ու արտաքին շահակիցների կարիքների վրա, եվրոպական բարձրագույն կրթական տարածքի և ՀՀ-ում կրթության ոլորտի արդի պահանջների ու միտումների վրա: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ բուհի կողմից իր ներքին ու արտաքին շահակիցների կարիքների ու կարծիքների վերհանման ուղղությամբ, ի թիվս այլոց, կիրառվում են նաև հետևյալ մեխանիզմները.

- ՄԿԾ-ների վերանայման շրջանակներում գործատուների հետ հանդիպումներ (գործատուներն այստեղ գնահատում են որևէ կրթական ծրագրի շրջանավարտների կարողություններն ու գիտելիքները աշխատաշուկայի պահանջների դիրքերից)
- ՄԿԾ-ների վերանայման շրջանակներում շրջանավարտների և ուսանողների հետ հանդիպումներ,
- ՄԿԾ-ների մասնագիտական պրոֆիլին առնչվող գործատուների շրջանում հարցումներ,
- Ֆոկուս-խմբային հանդիպումներ տարբեր ՄԿԾ-ների ուսանողների հետ,
- Ոչ ֆորմալ հանդիպումներ գործատուների հետ՝ ռազմավարական պլանավորման նախնական տարբերակը քննարկելու համար:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ նշված մեխանիզմների կիրառման շնորհիվ են վերհանվել որոշ կարիքներ, կայացվել որոշումներ, որոնցից կարող ենք առանձնացնել այն, որ.

- բնորդների ու ռեկվիզիտների խնդիրները վերհանվել են ուսանողական հարցումների միջոցով,
- ուսանողների և շրջանավարտների հետ դեմ առ դեմ շփումների արդյունքում որոշում է ընդունվել մեծացնել դասավանդվող օտար լեզուների թիվը, իրականացնել պորտֆոլիո և CV գրելու վերապատրաստումներ,
- գործատուների հետ հանդիպումների արդյունքում է որոշում ընդունվել կրթական ծրագրերում ներառել խմբային աշխատանքի, բիզնես նախագծման կարողություններ ենթադրող ուսումնական բաղադրիչներ։

Հարկ է նշել, որ վերոնշյալ մեխանիզմների մեծ մասը կանոնակարգված են, հանդիպումների ու հարցումների արդյունքները վերլուծվում են։ Եվ ինչպես փաստաթղթերի ուսումնասիրությունից, այնպես էլ փորձագիտական այցից պարզ է դառնում, որ նշված հանդիպումների ու հարցումների արդյունքները կիրառվում են ՄԿԾ-ների վերանայման գործընթացում, բայց քանի դեռ առաջին տարին է, երբ տեղի է ունեցել բակալավրի կրթական ծրագրերի հիմնարար մեթոդաբանական վերանայում, ուստի հնարավոր չէ դատողություններ անել վերհանված կարիքների արդյունքում կատարվող փոփոխությունների նպատակայնության վերաբերյալ։ Պետք է արձանագրել սակայն, որ ինչպես նշված հարցումների ու հանդիպումների արդյունքները բուհի կողմից ի մի չեն բերվում մեկ փաստաթղթի մեջ՝ որպես մեթոդաբանական հիմք ծառայեցնելու ՌԾ-ի մշակման համար։ Չեն փաստաթղթավորվում նաև եվրոպական բարձրագույն կրթական տարածքի և ՀՀ-ում կրթության ոլորտի արդի պահանջների ու միտումների ուսումնասիրությունը։ Փաստաթղթերի ուսումնասիրությունից ու փորձագիտական այցից հասկանալի չդարձավ, թե ինչպես է տեղի ունենում այդ ուսումնասիրությունը։ ՀԳՊԱ-ի զարգացման 2017-2021թթ. ռազմավարական ծրագիրը դիտարկելիս, այնտեղ չենք գտնում ո՛չ ներքին ու արտաքին շահակիցների բացահայտված կարիքների ոչ էլ արտաքին աշխարհի ու հայկական կրթական իրականության միտումների վերաբերյալ վերլուծությունները՝ որպես ռազմավարության մեթոդաբանական հիմք։ Այս տեսանկյունից պետք է նկատել նաև, որ չկան վերլուծություններ կամ տեղեկություններ առ այն, թե բուհը ուսումնասիրե՞լ է պետական այն առաջնահերթությունները (որոնք, օրինակ, ամրագրված են կառավարության ծրագրերում, կառավարական կամ գերատեսչական հայեցակարգերում և այլն), որոնք ինչ-որ չափով համահունչ են իր առաքելությանն ու նպատակներին, կրթական պրոֆիլին (մշակութային քաղաքականություն, սերվիս, թեթև արդյունաբերություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ և այլն)։

Բուհը մինչ այժմ հնարավորություն չունի հոգաբարձուների խորհրդի հարթակն օգտագործելու իր գործունեության վրա ազդող գործոններն ուսումնասիրելու համար։

Զանգվածային լրատվամիջոցների հրապարակումները, Հանրապետության մշակութային կենտրոնների հետ շփումները ՀԳՊԱ-ի կողմից դիտարկվում են որպես իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության հնարավորություն։ Հնարավորության սահմաններում ՀԳՊԱ-ն ուսումնասիրում է որոշ ոլորտներում հաջողության հասած գործընկեր բուհերի փորձը։ Օրինակ՝ ուսումնասիրվել է

շրջանավարտների հետ կապերի ոլորտում Հայաստանի ամերիկյան համալսարանի հաջող փորձը: Պետք է նշել, սակայն, որ այսօրինակ ուսումնասիրությունները օրինաչափ չեն:

2.5 Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայում քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարության որակի կառավարման ՊԻԳԲ սկզբունքը ներդրված է ռազմավարական կառավարման մակարդակով: Կառավարման գործընթացների բարելավման ուղղությունների թիրախավորումը, որ արտացոլված է բուհի զարգացման ռազմավարական ծրագրում, նշանակալի մասով տեղի է ունեցել նախորդ հավատարմագրման փորձագիտական գնահատման՝ դիտարկումների և խորհրդատվությունների հիման վրա, ինչը փաստում է բուհի կողմից բարելավումը գնահատման հիման վրա նախաձեռնելու մասին: Այսպես, նախորդ հավատարմագրման փորձագիտական գնահատականով արձանագրվել են կառավարման ու ռազմավարական նպատակադրումների թույլ կապակցվածություն, որոշումների կայացման գործընթացում արտաքին շահակիցների թույլ ներգրավվածություն, արտաքին միջավայրի վերլուծությունների սակավություն, կազմակերպական կառույցների ոչ արդյունավետ բաշխում և այլն: Իսկ ՀԳՊԱ զարգացման 2017-2021թթ. ռազմավարական ծրագրում պլանավորվել և ընթացքում այս կամ այն չափով իրականացվել են նշված դիտարկումներից ընդհանուր առմամբ բխող այնպիսի գործողություններ, ինչպիսիք են.

- կառավարման տարբեր օղակների փոխկապակցվածության ապահովում, պարտականությունների և լիազորությունների հստակեցում,
- կառավարման գործընթացում շահակիցների ներգրավվածության խթանում,
- ռազմավարական ծրագրի իրականացման մշտադիտարկման համակարգի բարելավում:

Ինչպես արդեն նշվել է, ՀԳՊԱ-ում ռազմավարական պլանավորումը հնարավորինս իրականացվում է ներքին շահակիցների, շրջանավարտների և գործատուների կարիքների բացահայտմամբ ու կարծիքների վերհանմամբ: Ֆակուլտետների, ամբիոնների, ինչպես նաև վարչական ստորաբաժանումների ամենամյա պլանները կազմվում են՝ հիմքում ունենալով բուհի զարգացման ռազմավարական ծրագիրը: Ինչպես բուհի զարգացման ՌԾ-ում, այնպես էլ ավելի ցածր օղակների պլաններում զետեղվում են արդյունքի գնահատման ցուցիչներ, որոնք մեթոդական հնարավորություն են տալիս գնահատել իրականացվող գործունեությունը: Հոգաբարձուների խորհրդին տրվող ռեկտորի ամենամյա հաշվետվությունները, Գիտական խորհրդին տրվող վարչական և ուսումնական ստորաբաժանումների ամենամյա հաշվետվությունները, ինչպես նաև ՊԻԳԲ հանձնաժողովին տրվող եռամսյակային հաշվետվությունները արդյունքի գնահատման մեխանիզմներ են: Փորձագիտական խումբը, չի կարող լիարժեք գնահատել ՀԳՊԱ-ի՝ ռազմավարական մակարդակում ՊԻԳԲ սկզբունքի ներդրվածության աստիճանն այն պատճառով, որ բացակայում է բուհի զարգացման 2022-2026թթ. ռազմավարական ծրագիրը, որի ԳԱՑ-երը, ըստ բուհի ղեկավար կազմի, դրական առումով զգալիորեն տարբերվում են նախորդ ծրագրի ԳԱՑ-երից:

Ինքնավերլուծությունը նկարագրում է ՊԻԳԲ երկարաժամկետ, միջնաժամկետ ու կարճաժամկետ շրջափուլերի իրականացման ընդհանուր սկզբունքները՝ չկենտրոնանալով որևէ պրակտիկ դեպքի, օրինակի վրա: Իսկ փորձագիտական խումբը, որը հնարավորություն ուներ դիտարկելու բուհում տեղի ունեցող միայն «խոշոր» գործընթացները, արձանագրում է, որ այդ գործընթացները կա՛մ դեռևս իրականացման փուլում են, կա՛մ գնահատման. գնահատումից բարելավում անցումները դեռևս տեսանելի չեն: Օրինակ՝ 2017թ. ՀԳՊԱ-ն պլանավորել էր ապահովել արդի և մրցունակ կրթական ծրագրեր (պլանավորում): Արդի և մրցունակ կրթական ծրագրեր ունենալու համար 2017-2021թթ. իրականացվել են մի շարք կարևոր գործողություններ՝ վերապատրաստումներ, բենչմարքինգ, կանոնակարգերի ներդրում և այլն, որոնք հանգեցրել են նոր՝ մոդուլային կրթական ծրագրերի ներդրմանը (իրականացում): Քանի որ մոդուլային կրթական ծրագրերը սկսել են գործել 2021-2022 ուստարվանից, ուստի դեռ երեք տարի անհրաժեշտ է՝ դրանց արդյունավետությունը գնահատելու համար: Իսկ եթե ՊԻԳԲ սկզբունքի տրամաբանության ներքո գնահատենք նշված ռազմավարական նպատակի առանձին գործողություն, օրինակ՝ կրթական ծրագրերի նկարագրերի վերանայումը («մանր գործընթաց»), ապա այստեղ, անշուշտ, կարող ենք ականատես լինել ՊԻԳԲ շրջափուլի փակմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ շնորհիվ հատկապես որակի ապահովման մեխանիզմների ու գործիքների ներդրման, ՀԳՊԱ-ն գտնվում է կրթական ծրագրերի ու այլ գործընթացների ակտիվ գնահատման փուլում: Հատկանշական է նաև, որ բուհը պատրաստվում է վերամշակել ու բարելավել որակի ապահովման մեխանիզմները՝ նոր ռազմավարական ծրագրի ԳԱՑ-երի հիման վրա:

2.6 ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայում կրթական ծրագրերի արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը և վերլուծությունը ապահովվում է, ի թիվս այլոց, նաև հետևյալ գործիքների միջոցով.

- դասընթացների արդյունավետության գնահատման հարցումներ, դասալսումներ,
- կրթական ծրագրերի արդյունավետության վերաբերյալ ֆոկուս-խմբային հանդիպումներ ուսանողների հետ,
- ՄԿԾ-ների գնահատում գործատուների կողմից,
- ՄԿԾ-ների գնահատում շրջանավարտների կողմից:

ՀԳՊԱ-ում վարչական և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումն ու վերլուծությունը կատարվում է, ի թիվս այլոց, նաև հետևյալ գործիքների միջոցով.

- վարչարարության արդյունավետության գնահատում պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում,

- վարչարարության արդյունավետության գնահատում վարչական աշխատողների շրջանում,
- ՀԳՊԱ աշխատակցի աշխատանքի արդյունավետության գնահատում ղեկավարի կողմից,
- ՀԳՊԱ ստորաբաժանման ղեկավարի աշխատանքի արդյունավետության գնահատում ստորաբաժանման աշխատակցի կողմից,
- փոխանակման ծրագրերով ՀԳՊԱ հյուրընկալած արտասահմանցի ուսանողների հարցումներ,
- օտար լեզվի իմացության վերաբերյալ հարցումներ,
- դիմորդների կողմից ընդունելության գործընթացի վերաբերյալ տեղեկատվության արդյունավետության գնահատում,
- ընդունելության գործընթացի արդյունավետության գնահատում առաջին կուրսի ուսանողների կողմից,
- ռեսուրսների և ծառայությունների արդյունավետության գնահատում ուսանողների շրջանում,
- ռեսուրսների և ծառայությունների արդյունավետության գնահատում պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում:

Հատկանշական է, որ կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման ու վերլուծության այսչափ մեխանիզմների արդյունավետությունը գնահատելը դյուրին գործ չէ: Դատելով այն հանգամանքից, որ ՀԳՊԱ-ի զարգացման 2017-2021թթ. ռազմավարական ծրագրի ամփոփիչ փաստաթղթում նշված է, որ վերանայվել են որակի ապահովման 18 գործիքներ, պարզ է դառնում, որ այդ գործիքներն այս կամ այն կերպ գնահատվել են: Սակայն թե ինչու՞ են դրանք վերանայվել, որևէ վերլուծություն չկա: Այս առումով ՀԳՊԱ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծությունը ևս տեղեկատվություն չի տալիս՝ փաստորեն չմատնանշելով մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող որևէ մեխանիզմ:

2.7 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի կրթական ծրագրերը հասանելի են բուհի կայքէջում: Կայքէջի՝ կրթական ծրագրերի բաժիններում նկարագրված են կրթական ծրագրի առաքելությունը, հիմնական բովանդակությունը, ուսումնառության վերջնարդյունքները, կրթական միջավայրը, կրթական հետագիծը (յուրաքանչյուր ուսումնական տարում ինչ արդյունքի է հասնում), ուսումնական պլանը, դասախոսական կազմը (մասնակի), կարիերային հնարավորությունները և այլն: Կայքէջում մանրամասն նկարագրված է նաև գնահատման համակարգը՝ մոտեցումներով, սկզբունքներով, չափանիշներով ու բնութագրիչներով հանդերձ: Դասընթացների ծրագրերը կայքէջում դրված

չեն։ Բակալավրի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունները ՀԳՊԱ-ում հրապարակային են, և դրանց, հաշվի առնելով մասնագիտական յուրահատկությամբ պայմանավորված հանրային հետաքրքրությունը, որպես կանոն ներկա են լինում գործատուներ և արվեստասեր հանրության ներկայացուցիչներ։

ՀԳՊԱ-ն կիրառում է որակի ապահովման որոշ գործիքներ՝ կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի գնահատման նպատակով։ Այդ գործիքներից են, օրինակ, ՄԿԾ-ների վերանայման շրջանակներում գործատուների հետ հանդիպումները, որոնց արդյունքները փաստաթղթավորվում են։ Նույն տեսանկյունից կարելի է նշել նաև շրջանավարտների հետ հանդիպումները։ Սակայն բուհում կրթական ծրագրերի մշտադիտարկումը պլանավորված ու ընթացակարգային գործընթաց չէ, որում նկարագրված կլինեին կրթական ծրագրերի մշտադիտարկման սուբյեկտները, ժամանակացույցը և այլն, ինչը հնարավորություն կտար առավել կանոնակարգված ձևով գնահատել կրթական ծրագրերի ու շնորհվող որակավորումների որակը։ Միևնույն ժամանակ, կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի գնահատման արդյունքները չեն հրապարակվում, իսկ այդ հրապարակումները գնահատող մեխանիզմների վերաբերյալ հիշատակում չկա ինքնավերլուծության մեջ։ Համենայն դեպս, բուհի «Մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և վերանայման ձեռնարկը», ինչպես նաև «Կրթական ծրագրերի արդյունավետության գնահատումը» փաստաթղթերը մշտադիտարկման ու վերանայման հիմքեր տալիս են, և այդ ուղղությամբ գործընթացներ մեկնարկել են[9]։

Դատողություններ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ փաստաթղթերի ուսումնասիրության ու փորձագիտական այցի ժամանակահատվածում Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիան չի ունեցել զարգացման ռազմավարական ծրագիր (նախորդ ծրագրի գործողության ժամկետն ավարտվել է 2021թ.), փորձագիտական խումբը ըստ էության հնարավորություն չի ունեցել գնահատելու կառավարման համակարգի արդյունավետությունը՝ հաստատության առաքելությանն ու նպատակներին համահունչության տեսանկյունից։ Ո՛չ ինքնավերլուծությունը, ո՛չ էլ փորձագիտական այցը հնարավորություն չտվեցին հստակ ու միարժեքորեն վերհանել բուհի ամբիցիաները առաջիկա հինգ տարիների հեռանկարում, ինչի պատճառով էլ էապես դժվարանում է սույն չափանիշի պահանջին համապատասխան գնահատել, թե որքանով ՀԳՊԱ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցներն ու դրանց գործառնումն արդյունավետ են և միտված նրա առաքելության ու նպատակների իրականացմանը։ Ու թեև փորձագիտական այցի ընթացքում փորձագիտական խումբը տեղեկացավ, որ 2017-2021թթ. ռազմավարական ծրագրում ամրագրված առաքելությունն ու նպատակադրման ոլորտները (կառավարման համակարգ, կրթական ծրագրեր և այլն) չեն փոփոխվել, այդուհանդերձ, կառավարման արդյունավետությունը գնահատելու համար, փորձագիտական խումբը գտնում է, որ կարևոր

[9] Միտքը վերաշարադրվել է հաստատության դիտարկումների քննարկման արդյունքում։

նշանակություն ունի նպատակադրումների ձևակերպումները, որոնք, բնականաբար չեն կարող նույնը լինել, ինչ նախորդ ծրագրում էին (քանի որ դա կնշանակեր, որ բուհում ընդհանրապես զարգացում տեղի չի ունենում)։

Փորձագիտական խումբը դրական է համարում այն հանգամանքը, որ նախորդ հավատարմագրման փորձագիտական դիտարկումների, խորհրդատվությունների ու սեփական ինքնավերլուծության հիման վրա ՀԳՊԱ-ն ձեռնամուխ է եղել կառավարման համակարգի բարելավմանը՝ արձանագրելով հետևյալ ձեռքբերումները.

1. բարելավվել է կառավարման համակարգի փաստաթղթային հենքը,
2. առկա են վարչարարությունը որակի կառավարման ՊԻԳԲ սկզբունքով իրականացնելու աճի միտումներ,
3. մեծացել է ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը բուհի ռազմավարական պլանավորման և կրթական ծրագրերի բարելավման գործընթացներում,
4. բարելավվել է հաշվետվողականության գործընթացը՝ ներդրված լինելով հատկապես ներքին հաշվետվողականության մեխանիզմներ։

Կառավարման համակարգում գրանցված այս լավարկումներն անշուշտ դրական ազդեցություն են գործում բուհում իրականացվող որոշ գործընթացների վրա, որոնցից կառանձնացնեինք կրթական ծրագրերի որակի դանդաղ, աստիճանական բարձրացումը, ենթակառուցվածքի և ռեսուրսների դանդաղ, աստիճանական բարելավումը։ Այսպիսով բուհի կառավարման այս համակարգի պայմաններում ապահովվում է, որ ՀԳՊԱ-ի շնորհած որակավորումները լինեն արժանահավատ։

Բուհի գործունեության բոլոր ոլորտների հնարավորինս համապարփակ դիտարկումը ցույց է տալիս, սակայն, որ կառավարման համակարգը չի նպաստում բուհի սահուն և համաչափ զարգացմանը և ռազմավարական որոշ նպատակների լիարժեք ձեռքբերմանը։

Կրթական ծրագրերի որակավորումը թեև արժանահավատ է, սակայն կրթական ծրագրերն ինքնին արդի ու մրցունակ բնորոշել (այն, ինչ նպատակադրված է նախորդ շրջափուլի՝ 2017-2021թթ. զարգացման ռազմավարական ծրագրով) դեռևս վաղ է, քանի որ այդ ծրագրերի արդիականացումը գտնվում է իրականացման փուլում. մոդուլային համակարգը գործարկվել է 2021-2022 ուստարվանից։

Ռազմավարական մյուս նպատակադրումը՝ հետազոտությունը, ՀԳՊԱ-ում դեռևս չի զարգանում որպես համակարգված ու պլանավորված գործընթաց։ Բուհին ցավոք չի հաջողվել լուծել հետազոտությունն ըստ ռազմավարական պլանավորման իրականացնելու և գնահատելու հանձնառությունը, ուստիև ըստ նպատակի չի օգտագործվել հետազոտության համար նախատեսված թեկուզ փոքրածավալ բյուջեն (8 մլն դրամ)։ Թեև փորձագիտական խումբը ընդունում է բուհի մոտեցումը հետազոտության բովանդակության ու կազմակերպման յուրահատկության վերաբերյալ, այդուհանդերձ արձանագրում է, որ արվեստաբանության մասնագիտությունից բացի, մյուս մասնագիտությունների գծով հետազոտության մեթոդաբանությունը, տեխնիկան, փաստաթղթավորումն ու չափանիշավորումը այնքան ոչ հստակ են չափվում բուհի դասախոսների և ուսանողների համար, որ հետազոտություն

կատարելու ֆինանսական խրախուսման մեխանիզմները գործում են միայն արվեստաբան դասախոսների համար (լրավճարներ գիտական հրապարակումների համար)։

Բուհը չի կարողացել ռազմավարական մյուս ոլորտի՝ արտաքին կապերի ու միջազգայնացման զարգացման ուղղությամբ նպատակադրված կարևորագույն ցուցանիշներն ապահովել՝ իրականացնել ամբողջական համատեղ կրթական ծրագիր կամ իրականացնել ամբողջական օտարալեզու կրթական ծրագիր։ Հատկանշական է, որ բուհին դեռևս չի հաջողվել ապահովել նշված ցուցանիշների իրականացման անհրաժեշտ պայմաններ, որոնցից փորձագիտական խումբը կարևորում է օտար լեզուների իմացության հանգամանքը։

ՀԳՊԱ-ին դեռևս չի հաջողվել ապահովել մարդկային ռեսուրսների գերազանց գործունեության համար մոտիվացիոն մեխանիզմներ։ Պրոֆեսորադասախոսական կազմի մոտիվացիան գերազանցապես բխում է արվեստագետի կոչման ու առաքելության բարոյական նկատառումներից. նյութապես խրախուսելու համար ֆինանսական միջոցներ բուհը դեռևս չի կարողանում հայթայթել, ուստի մարդկային ռեսուրսների ներուժը դեռևս չի օգտագործվում բավարար չափով։

Ենթակառուցվածքն ու ռեսուրսները թեև ընդհանուր առմամբ բավականացնում են կրթական ծրագրերի վերջնարդյունքներն ապահովելու համար, բայց դրանց բարելավման տեմպը հուսադրող չէ՝ արդի և մրցունակ կրթական ծրագրեր իրականացնելու համար։

Վերոնշյալ իրողությունները հիմնականում կառավարման խնդիրների հետևանք են, խնդիրներ, որոնց թվից առանձնացնում ենք հետևյալները.

- Կառավարման ոչ սինխրոն ընթացքը տարբեր օղակների ու մակարդակների միջև հանգեցնում է առաջընթացի խիստ ցածր տեմպերին։ Հոգաբարձուների խորհուրդը, իր զուտ ֆորմալ գոյությամբ ու ֆունկցիոնալությամբ պայմանավորված, չի կարողանում բուհի առջև դնել հստակ խնդիրներ, սահմանել զարգացման վեկտորներ։ Դա նվազեցնում է բուհի հնարավորությունը՝ իր ռազմավարական գործունեությունը ըստ հանրապետության սոցիալ-մշակութային համատեքստի կազմակերպելու առումով։ Զարգացման ու առաջընթացի նախաձեռնությունը, իրականացումը, վերահսկումն ու գնահատումն իրականացնում է վարչական վերին օղակի խումբը, ով թեև օժտված է մենեջերիալ կարողություններով ու որակի ապահովման մշակույթի կրող է, այդուհանդերձ չունի բավականաչափ մարդկային, ֆինանսական ու ժամանակային ռեսուրս՝ զարգացման իմպուլսները ռազմավարական նպատակադրումների բոլոր ուղղություններով արդյունավետ հաղորդելու և բոլոր օղակներում տեղայնացնելու համար։
- Ռազմավարական նպատակների գնահատման այն ԳԱՑ լրակազմը, որ ՀԳՊԱ-ն ունի ու նման ԳԱՑ-երով ծրագրի նախորդ շրջափուլն ամփոփելը մեթոդաբանական հիմքեր չի ապահովում՝ ռազմավարական նպատակների ձեռքբերվածության աստիճանը օբյեկտիվ ու հիմնավոր վերհանելու համար։
- Նվազ ու չբազմազանեցված եկամուտները, ցածր աշխատավարձերը բացաբար են անդրադառնում կառավարման միջին ու ստորին օղակների մոտիվացիայի վրա՝ համաչափ ձևով ուղղորդելու և տեղայնացնելու կառավարման վերին օղակներից եկող

իմպուլսները։ Ցածր եկամուտներով ու աշխատավարձերով է պայմանավորված նաև կառավարման միջին ու ստորին օղակների պատասխանատուների մենեջերիալ կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների բացակայությունը։

- Որակի ապահովման կենտրոնի կողմից վարչական գործընթացների, վարչական աշխատակազմի գործունեության հետ կապված խնդիրներ վերհանելու արդյունավետ գործիքների պակասը զրկում է բուհին կառավարման ոլորտի խնդիրները հասցեագրելու հնարավորությունից։
- Հաշվետվությունների նկարագրողական, ոչ վերլուծական բնույթն էլ թույլ չի տալիս կենտրոնանալ թերակատարումների, ձախողումների ու վրիպումների վրա, ինչը կարող է հանգեցնել դրանց կրկնությանը։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ կառավարման համակարգի խնդիրները (կառավարման ոչ սինխրոն ընթացք տարբեր օղակների ու մակարդակների միջև, կառավարման միջին ու ստորին օղակներում մենեջերիալ կարողությունների թուլություն, նվազ ու չբազմազանեցված եկամուտներ, ցածր աշխատավարձեր, ռազմավարական նպատակների գնահատման համար մեթոդապես թերի հիմնավորված ԳԱՑ լրակազմ, հաշվետվությունների ոչ վերլուծական բնույթ և այլն) խոչընդոտում են ՀԳՊԱ-ի համաչափ զարգացմանը, լիովին չի իրացվում բուհի զարգացման ներուժը, թերակատարվում են ռազմավարական նպատակները, ինչը դրսևորվում է, մասնավորապես հետազոտության և միջազգայնացման ուղղությամբ զարգացման ցածր ընթացքի ու տեմպերի մեջ, փորձագիտական խումբը գտնում է, որ բուհը դեռևս չի բավարարում չափանիշ 2-ի պահանջները։

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՊԳԱ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատում է **անբավարար**։

III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

3.1 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

ՀԳՊԱ-ն իրականացնում է Հայաստանի Հանրապետության որակավորումների ազգային շրջանակի 6-րդ և 7-րդ մակարդակի 4 մասնագիտությամբ կրթական ծրագրեր (այդ

թվում՝ բակալավրի 9 ԿԾ, մագիստրոսի 8 ԿԾ) և 8-րդ մակարդակի՝ 1 մասնագիտության կրթական ծրագիր՝ «Կերպարվեստ. դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտությամբ:

Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերն են՝ *Դիզայն* մասնագիտությամբ՝ Դիզայն, Հագուստի մոդելավորում, Համակարգչային գրաֆիկա, Ինտերիերի դիզայն, *Կերպարվեստ* մասնագիտությամբ՝ Գեղանկարչություն, Գրաֆիկա, Քանդակագործություն, *Կիրառական արվեստ* մասնագիտությամբ՝ Դեկորատիվ կիրառական արվեստ, *Արվեստի տեսություն և պատմություն* մասնագիտությամբ՝ Արվեստաբանություն:

Ակադեմիայում իրականացվող կրթական ծրագրերը համահունչ են բուհի 2017-2022թթ. ռազմավարական ծրագրով սահմանված առաքելությանը, այն է. «տրամադրել բարձրագույն կրթություն՝ իրականացնելով բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրեր արվեստի տեսության, կերպարվեստի, դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի ոլորտներում՝ ակադեմիական և արդի մոտեցումների կիրառման, ստեղծագործական և կրթական գործընթացները հասարակական կարիքներին համապատասխանեցման միջոցով, նպաստել ազգային մշակույթի և տնտեսության զարգացմանը՝ պատրաստելով ազգային ու միջազգային մակարդակներում մրցունակ և բարձր որակավորում ունեցող մասնագետներ, ինչպես նաև հարատև կրթությանը պատրաստ քաղաքացիներ...»:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ անգամ շեշտված պրակտիկ, կիրառական ուղղվածություն ունեցող կրթական ծրագրերը ՀԳՊԱ-ում դրված են ակադեմիական հիմքերի վրա: Օրինակ՝ «Հագուստի մոդելավորում» կրթական ծրագրի ուսանողները պրակտիկ բնույթի դասընթացների հիմքում գույների, կոմպոզիցիաների ընկալման ակադեմիական մոտեցումն է:

2017 թվականին Ակադեմիան պլանավորել և ձեռնարկել է բակալավրի կրթական ծրագրերի լրամշակման գործընթաց՝ որպես առաջնահերթություն համարելով ուսումնառության վերջնարդյունքներով սահմանված և ՀՀ որակավորումների ազգային շրջանակին (ՈԱՇ) համապատասխան կրթական ծրագրերի մշակումն ու իրականացումը: Գործընթացում ներգրավվել են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցները: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ արտաքին շահակիցները հիմնականում բուհի շրջանավարտ, իսկ ներկայում աշխատաշուկայի ներկայացուցիչներն էին, այլ գործատուներ, անհատ ստեղծագործողներ:

Հարկ է նկատել, որ 2017թ. մեկնարկած վերանայման գործընթացը ավարտին է հասել 2021թ., վերանայվել են միայն բակալավրի 8 ծրագրեր, չեն վերանայվել մագիստրոսական 8 և բակալավրի 1 ծրագրերը, ինչը նախատեսված էր կատարել 2017-2021թթ. զարգացման ՌԾ ժամանակացույցով: ՀԳՊԱ-ում մշակվել և հաստատվել է մոդուլի նկարագրի ձևաչափ, որը բխում է նոր, վերանայված կրթական ծրագրերի վերջնարդյունքային, մեթոդական և այլ պահանջներից. ըստ այս նոր ձևաչափի վերամշակվել են միայն ուսումնառության 1-ին տարվա դասընթացները (մոդուլներ): Ուսումնառության 2-րդ, 3-րդ և 4-րդ տարիների դասընթացների ծրագրերը, համաձայն փորձագիտական այցի ընթացքում ստացված

տեղեկության, մշակման ընթացքում են: Իսկ այդ դասընթացների ներկայիս նկարագրերում առկա են թերություններ ու խնդիրներ. նշենք մի քանիսը.

- որոշ դասընթացների ծրագրերում սահմանված նպատակները նույնական են միմյանց (օրինակ՝ Գունանկարչություն 1 և Կոմպոզիցիա 1 դասընթացները),
- որոշ դասընթացների նպատակը, կրթական վերջնարդյունքները, անհրաժեշտ ռեսուրսներն և/կամ գնահատման քաղաքականությունը ներկայացված չեն (օրինակ՝ Գծանկարչություն 1,2, 3, գունանկարչություն 1, 2 դասընթացները),
- որոշ դասընթացների առաջադրանքները ներկայացված չեն (Պլաստիկ անատոմիա, Գունանկարչություն)
- շատ դասընթացների գնահատումները նկարագրված չեն, որոշների վերջնարդյունքները նույնական են բուն կրթական ծրագրի վերջնարդյունքների հետ:

ՀԳՊԱ-ում կրթական ծրագրերի լրամշակման գործընթացի շրջանակում իրականացվել է համեմատական վերլուծություն (բենչմարքինգ)՝ համաձայն բուհում սահմանված ձևաչափի (առկա են վերլուծությունների արդյունքների ամփոփումները): Համեմատական վերլուծության համար ՄՈՒՀ-երի ընտրությունը հիմնականում կատարվել է՝ հաշվի առնելով հետևյալ դրույթները. արվեստում և դիզայնում միջազգային բարձր վարկանիշ ունեցող հաստատություններ (օրինակ՝ Արվեստի թագավորական քոլեջ (ՄԹ), Լոնդոնի արվեստների համալսարան (ՄԹ), Փարսոնսի դիզայնի դպրոց (ԱՄՆ), այլ), Ակադեմիայի հետ տարիներ շարունակ համագործակցություն ունեցող հաստատություններ (օրինակ՝ Սանկտ-Պետերբուրգի Շտիգլիցի անվան գեղարվեստա-արդյունաբերական պետական ակադեմիա (Ռուսաստան), այլ), արվեստի ավանդական ուղղությունները ներկայացնող բուհեր, որոնք ունեն ընդհանրություններ ՀԳՊԱ-ի առաջարկող կրթական ծրագրերի հետ (օրինակ՝ Վիլնյուսի գեղարվեստի ակադեմիա (Լիտվա), Դրեզդենի գեղարվեստի ակադեմիա (Գերմանիա), Մոսկվայի Սուրիկովի անվան գեղարվեստական պետական ինստիտուտ (Ռուսաստան), Հայաստանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան, Երևանի պետական համալսարան):

Լրամշակված բակալավրիատի կրթական ծրագրերը, մասնավորապես՝ փորձաքննության ներկայացված Արվեստաբանություն, Գեղանկարչություն, Համակարգչային գրաֆիկա, շահեկանորեն տարբերվում են 2016 թվականին հաստատված և դեռևս գործող կրթական ծրագրերից: Յուրաքանչյուր լրամշակված կրթական ծրագրում ներկայացված է տվյալ կրթական ծրագրի առաքելությունը, որը համահունչ է բուհի առաքելությանը, շարադրված են ՄԿԾ-ի նպատակներն ու խնդիրները, սահմանված են ուսումնառության հստակ վերջնարդյունքներ: ՄԿԾ-ի նկարագրում ներկայացված են նաև ըստ ուսումնական տարիների ուսումնառության վերջնարդյունքները և ուսումնական պլանը: Լրամշակված կրթական ծրագրերում առկա է դասավանդման, ուսումնառության, գնահատման մեթոդների նկարագրություն, ինչպես նաև ներկայացված է դրանց համապատասխանեցումը կրթական ծրագրի ուսումնառության վերջնարդյունքներին: Առկա է դասընթացների (մոդուլների) կրթական ծրագրի ուսումնառության վերջնարդյունքներին համապատասխանեցման

աղյուսակ, ինչպես նաև կրթական ծրագրի ուսումնառության վերջնարդյունքների և ՀՀ ՈԱՇ-ի համապատասխանեցման աղյուսակ: Նախատեսված են միջառարկայական նախագծեր (օրինակ՝ նկարիչների և հոգեբանների, նկարիչների և բժիշկների միջև համագործակցություն):

Վերանայված ՄԿԾ-երի ուսումնառության վերջնարդյունքների և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանելու հարցը քննարկվել է գործատուների հետ հանդիպման ժամանակ: Գործատուները կարծիք են հայտնել, որ լրամշակված ՄԿԾ-երի ուսումնառության վերջնարդյունքները պատասխանում են աշխատաշուկայի պահանջներին, դրանք արդիական են, հիմնականում համադրելի այլ բուհերի համանման ՄԿԾ-երի հետ:

Ակադեմիայում կարևորվում է այն հանգամանքը, որ լրամշակված ուսումնական պլանները ձևավորվել են մոդուլային սկզբունքով, ինչը հնարավորություն է տալու դրանք առավել համադրելի դարձնել արտասահմանյան համանման կրթական ծրագրերին: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսումնական գործընթացի կազմակերպման նոր՝ մոդուլային, մոտեցումը դասախոսական կազմի կողմից դեռևս միանշանակ ընդունված չէ: Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ մոդուլների նոր ձևաչափով կառուցված նկարագրերը միշտ չէ, որ արտացոլում են կրթական ծրագրի նկարագրով սահմանված պահանջները, դրանցում առկա են անհամապատասխանություններ, բացթողումներ: Օրինակ, Արվեստաբանություն ՄԿԾ-ի համար կազմված մոդուլների նկարագրերում առկա են անճշտություններ կրթական ծրագրի անվանման, մոդուլի բաղադրիչ դասընթացների հստակեցման, մոդուլի հակիրճ նկարագիրը ներկայացնելու, մոդուլի ուսումնառության վերջնարդյունքներին բաղադրիչ դասընթացների նպատակների ոչ լիարժեք համապատասխանեցման, մոդուլներում նշված վերջնարդյունքների ՄԿԾ-ի նկարագրով սահմանված վերջնարդյունքներին համապատասխանեցման հետ կապված: «Գեղանկարչություն» ՄԿԾ-ի մոդուլների նկարագրերում առկա են անհամապատասխանություններ գնահատման չափանիշների և առաջադրանքների բովանդակությունների, հանձնարարված գրականության և առաջադրանքների բովանդակությունների, ինչպես նաև նախնական պահանջների և առաջադրանքների բովանդակությունների միջև:

Փորձագիտական խումբն արձանագրում է, որ մագիստրոսական կրթական ծրագրերի լրամշակումը դեռևս ընթացքում է. մեկնարկը նախատեսվում է 2022-2023 ուսումնական տարում: Գյումրու մասնաճյուղում բակալավրիատի լրամշակված կրթական ծրագիրը նախատեսվում է ներդնել 2022-2023 ուսումնական տարում:

3.2 ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

ՀԳՊԱ-ում 2021-2022 ուսումնական տարում ներդրված՝ լրամշակված կրթական ծրագրերի նկարագրերում ներկայացված են ՄԿԾ-ի նպատակներն ու խնդիրները, ուսումնառության վերջնարդյունքները, դասավանդման, ուսումնառության, գնահատման մեթոդների նկարագրությունը և դրանց համապատասխանությունը կրթական ծրագրի

ուսումնառության վերջնարդյունքներին: Այսպես, եթե Արվեստաբանություն ՄԿԾ-ում որպես դասավանդման և ուսումնառության մեթոդներ առաջարկվում են առավելապես տեսական նյութեր ընկալելու, յուրացնելու և մեկնաբանելու համար (օրինակ՝ դասախոսությունների տարբեր տեսակներ, ուսանողի կողմից կատարվող հետազոտական աշխատանքներ, ուսանողների կողմից ներկայացվող պրեզենտացիաներ և այլ նյութեր և դրանց քննարկում, խմբային նախագծեր, ուսումնական բանավեճ, անհրաժեշտ գրականության և այլ աղբյուրների հետ աշխատանք, շրջված դասարանի մեթոդ և այլ), ապա Գեղանկարչություն ՄԿԾ-ի դեպքում դասավանդման և ուսումնառության մեթոդները միտված են նախնառաջ գործնական հմտությունների զարգացմանը (օրինակ, աշխատանք արվեստանոցում, անհատական առաջադրանքների կատարում, ցուցադրություններ, քննարկումներ, վարժություններ, դեպքերի ուսումնասիրություն, գրականության ուսումնասիրություն և այլն): Համակարգչային գրաֆիկա ՄԿԾ-ում առաջարկվող դասավանդման և ուսումնառության մեթոդները միտված են տվյալ ՄԿԾ-ի վերջնարդյունքների ձեռքբերմանը (օրինակ, ինտերակտիվ դասախոսություններ՝ SS կիրառմամբ և դիդակտիկ նյութերի ցուցադրությամբ, գործնական աշխատանքներ, էսքիզների մշակում, մասնակցություն քննարկումներին, էսքիզների և աշխատանքների ներկայացում՝ ընթացիկ դիտման համար, գրականության և համացանցային նյութերի ուսումնասիրություն, տեսանյութերի ցուցադրում, պրեզենտացիաների մշակում և այլն): Դասախոսը կամ մոդուլի դեպքում՝ դասախոսների խումբը, հնարավորություն ունի ընտրելու ՄԿԾ-ում նկարագրված և առաջարկվող դասավանդման և ուսումնառության մեթոդները՝ ելնելով դասընթացի բնույթից և առանձնահատկություններից: Դասավանդման և ուսումնառության մեթոդները արտացոլված են մոդուլների նկարագրերում:

Մոդուլների նկարագրերը նախատեսում են նաև հանձնարարությունների ցանկ, ինչը հնարավորություն է տալիս դիտարկել ուսանողի մասնագիտական առաջընթացը: Օրինակ, «Գեղանկարչության հիմունքներ» մոդուլում (առաջին կուրս, առաջին կիսամյակ) տեսանելի է առաջադրանքների հերթականության տրամաբանությունը, որի միջոցով հնարավոր է դառնում արձանագրել մասնագիտական զարգացման աստիճանը (Առաջադրանք 1. Ուսանողներից պահանջվում է ճիշտ դիրքով տեղադրել գլխի օվալը պարանոցի և ուսագլխերի հետ, ուշադրություն դարձնելով նրանց համաչափություններին: Նախքան առաջադրանքին անցնելը ուսանողները կատարում են գլխի տարբեր դիրքերից ճեպանկարներ: Առաջադրանք 2. Ուսանողներից պահանջվում է լույսի և ստվերների միջոցով ստանալ գլխի բոլոր մասերի ընդհանուր մեծ ծավալները: Հետագայում միջին գծի միջոցով անցնել դիմային մասի ճակատային թմբիկներից մինչև ներքին ծնոտի միջև համաչափությունների կառուցմանը: Տեղադրել ճակատը, քիթը, շրթունքները և աչքերը՝ ուշադրություն դարձնելով երկրաչափական ծավալներին և գանգի անատոմիական կառուցվածքին: Առաջադրանք 3. Ուսանողներից պահանջվում է լույսի և ստվերների միջոցով գլխի ընդհանուր ծավալի մեջ աստիճանաբար անցնել մեծ և փոքր մանրամասների մշակմանը: Հաջորդաբար ձգտել բնորդի նյութականության շեշտադրմանը և նրա հոգեբանական աշխարհի արտահայտմանը):

ՄԿԾ-ներում սխամատիկորեն նախատեսված է նաև դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների համապատասխանությունը կրթական ծրագրի ուսումնառության վերջնարդյունքներին:

Բակալավրիատի երկրորդ և բարձր կուրսերում, ինչպես նաև մագիստրատուրայում գործող կրթական ծրագրերի համար ուսումնառության վերջնարդյունքների և դասավանդման ու ուսումնառության մեթոդների կապը ներկայացնելու համար Ակադեմիայում առկա են համապատասխան քարտեզագրումներ: Սակայն դասընթացների նկարագրերում դրանք արտացոլված չեն:

3.3 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

ՀԳՊԱ-ում 2021 թվականին վերանայվել, հաստատվել և գործարկվել է «Ուսանողների գնահատման և ակադեմիական ազնվության քաղաքականություն», որով սահմանված են ուսանողների առաջադիմության հաշվառման, ակադեմիական ազնվության հիմնական սկզբունքները, ուսանողի գնահատման հիմնական մոնեցումները, գնահատման սանդղակը, քննության արդյունքների բողոքարկման ընթացակարգը, ՄՈԳ-ը հաշվարկելու մեթոդաբանությունը: Ուսանողների գնահատման և ակադեմիական ազնվության քաղաքականության վերաբերյալ տեղեկությունը հասանելի է բուհի պաշտոնական կայք-էջում:

ՀԳՊԱ-ում ակադեմիական ազնվության քաղաքականության հիմքում հետևյալ հիմնական սկզբունքներն են՝ անազնիվ վարքագծի ցանկացած դրսևորման բացառում, գրագողության բոլոր դրսևորումների բացառում, մտավոր սեփականության ապահովում, ազնիվ, արդար ու համագործակցային ակադեմիական միջավայրի ապահովում: Մասնավորապես, սահմանված են ակադեմիական անազնվության հիմնական դրսևորումներ՝ անազնիվ վարքագիծ, արտագրություն, գրագողություն (ուղիղ կամ բառացի գրագողություն, առցանց աղբյուրներից ուղիղ պատճենում, վերաձևակերպում, գաղտնի համաձայնություն, սխալ կամ ոչ պատշաճ հղում, ինքնագրագողություն, խճանկարային գրագողություն, գիտակցված կամ մտադրված և չգիտակցված գրագողություն) և այլն: Որպես ակադեմիական ազնվության սկզբունքների արդյունավետության ստուգման եղանակ նշվում են պարբերաբար կազմակերպվող ու իրականացվող դասալսումները:

Ըստ ուսումնառության վերջնարդյունքների՝ ուսանողների գնահատման մոտեցումներն արտահայտված են ՄԿԾ-ներում: Թեև ինքնավերլուծության մեջ նշված է, որ «լրամշակված նոր կրթական ծրագրերը և մոդուլները հնարավորություն են տալիս գնահատումը կատարել՝ ըստ ուսումնառության վերջնարդյունքների՝ առավել նպաստելով ուսանողակենտրոն ուսուցմանը», փարձագիտական խումբն, ուսումնասիրելով ներկայացված փաստաթղթերը և այցի արդյունքներով, արձանագրում է, որ լրամշակված ՄԿԾ-երի մոդուլների նկարագրերում բացակայում են գնահատման սկզբունքները, հստակեցված չէ գնահատականի ձևավորման հարցում բաղադրիչ դասընթացների կամ աշխատանքների, այլ գործոնների կշիռն ու համամասնությունը:

ՀԳՊԱ-ի գնահատման քաղաքականությունը սահմանում է գնահատման չափանիշներ, որոնց միջոցով նախատեսված է ստուգել վերջնարդյունքների ձեռքբերվածության մակարդակը: Այդ չափանիշներն են. 1. ընդհանրական և մասնագիտական գիտելիք և ըմբռնում, 2. մասնագիտական կիրառական, ինչպես նաև փոխանցելի և փոխկիրառելի կարողություններ: Սահմանված է այս երկու չափանիշների բովանդակությունը: Պետք է նկատել, սակայն, որ դասախոսների կողմից այս չափանիշներով գնահատված առաջադրանքներ չկային: Մինչև 10 միավորանոց գնահատման համակարգի յուրաքանչյուր միավորի համար սահմանված են ուղենիշներ (ռուբրիկներ): Փորձագիտական հանդիպումներից, սակայն, պարզ դարձավ, որ գնահատման ժամանակ այդ ուղենիշները գրեթե չեն կիրառվում, առնվազն ուսանողներին դեռևս չի ներկայացվում իրենց գնահատումն ըստ նշված ուղենիշների:

ՀԳՊԱ-ն սահմանել է նաև գնահատման սկզբունքներ (համապատասխանություն, հետադարձ կապ, հավասարակշռություն), որոնց գործադրումը հիմնականում դեռևս տեղի չի ունենում, քանի որ դրանք դեռևս հանրայնացված չեն: Գնահատման քաղաքականությունը տարբերակում է գանահատամ դիագնոստիկ, ձևավորող և ամփոփիչ ձևերը:

ՀԳՊԱ-ում 2019 թվականին հաստատվել է «ՀԳՊԱ ամփոփիչ ատեստավորման կարգը», որում ներկայացված են շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմավորման, ամփոփիչ ատեստավորման կազմակերպման և անցկացման, գրախոսման, արդյունքների բողոքարկման հետ կապված հարաբերությունները: Կարգը սահմանում է, որ ամփոփիչ ատեստավորումը շրջանավարտի գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումն է, որն իրականացվում է բակալավրի ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի պաշտպանության միջոցով: Ավարտական աշխատանքի, մագիստրոսական թեզի կատարման համար նշանակվում է ղեկավար: Ավարտական աշխատանքները, մագիստրոսական թեզերը ենթակա են գրախոսման: Սահմանված են ձևանմուշներ աշխատանքի ղեկավարի կողմից լրացվելու, ինչպես նաև գրախոսի կարծիքը ձևակերպելու համար, ընդ որում՝ դրանք տարբերակված են ըստ ՄԿԾ-երի: Շրջանավարտների ավարտական աշխատանքի, մագիստրոսական թեզի պատրաստումն ու գնահատումն իրականացնում է համաձայն «ՀԳՊԱ գնահատման համակարգ»-ի և «ՀԳՊԱ բակալավրի ավարտական աշխատանքի և/կամ մագիստրոսի թեզի պատրաստման ուղեցույց»-ի: Նախատեսված է նաև ամփոփիչ ատեստավորման արդյունքի բողոքարկման ընթացակարգ:

3.4 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասախոսների շարժունությանը, միջազգայնացմանը:

ՀԳՊԱ-ի ՄԿԾ-երի համադրելիությունը նմանատիպ կրթական ծրագրերի հետ ապահովելու համար բուհն իրականացրել է համեմատական վերլուծություն ինչպես տեղական, այնպես էլ միջազգային բուհերի նմանատիպ կրթական ծրագրերի հետ:

Միջազգային փորձի ուսումնասիրության համար ՀԳՊԱ-ն սահմանել է համեմատական վերլուծության ձևաչափ։

«Գեղանկարչություն» ՄԿԾ-ի բենչմարքինգն արվել է Վիլնյուսի գեղարվեստի ակադեմիայի, Լոնդոնի արվեստի համալսարանի և Դրեզդենի գեղարվեստի ակադեմիայի ՄԿԾ-ների օրինակների հիման վրա։ Բենչմարքինգի ամփոփման մեջ, սակայն, ներկայացված չեն նշված բուհերի ՄԿԾ-ների առանձնահատկությունները, չկան հղումներ, թե որ բուհից ինչ բաղադրիչներ են կարևորվել ու տեղայնացվել։ ՄԿԾ-ի փաթեթում նշված չեն բենչմարքինգ արված բուհերը։ Համեմատական վերլուծություն արդյունքում ձևավորվել են լրամշակված կրթական ծրագրեր՝ մոդուլային սկզբունքով և ուսումնառության վերջնարդյունքներով։

Ուսանողների ու դասախոսների շարժունության հիմնական խոչընդոտ է համարվում օտար լեզվի, մասնավորապես՝ անգլերենի իմացության ցածր մակարդակը։ Ակադեմիան ֆակուլտատիվ դասընթացների միջոցով փորձում է լուծել խնդիրը, սակայն միջոցառման արդյունավետությունը գնահատված չէ։ Փորձագիտական այցի ընթացքում փորձագիտական խումբը, ըստ արձագանքների, նկատեց օտար լեզվի ֆակուլտատիվ պարապմունքների անարդյունավետությունը։

Հաշվի առնելով, որ համեմատական վերլուծության արդյունքում ձևավորված բակալավրի 8 կրթական ծրագրերը ներդրվել են 2021 թվականից և այս փուլում, փաստացի, փորձաշրջան են անցնում, դրանց արդյունավետությունը և համադրելիությունը նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին Ակադեմիայի կողմից դեռ չի գնահատվել։

ՀՊԳԱ-ում 2016 թվականից գործում է ՀՊԳԱ ուսանողների շարժունության կարգը, որը կարգավորում է փոխանակման ծրագրերն մասնակցելու ուսանողների փաստաթղթերի ընդունման, մասնակիցների նախնական ընտրության, գործընկեր արտասահմանյան բուհերի ուսանողների ընդունման փաստաթղթավորման գործընթացները։ Այսպես, ըստ ինքնավերլուծության, 2017-2018-ից մինչև 2021-2022 ուսումնական տարին ներառյալ ուսանողների փոխանակումն ու շարժունությունն ապահովող գործող համաձայնագրերի հիման վրա Ակադեմիայում ուսումնառել է օտարերկրացի 12 ուսանող ՌԴ-ից և Չեխիայից։ Ակադեմիայի ուսանողների փոխանակումն ու շարժունությունն ապահովող գործող համաձայնագրերի հիման վրա 29 ուսանողի արտահոսք է կազմարպվել 6 երկիր՝ Ռուսաստան, Չեխիա, Ռումինիա, Իտալիա, Ֆրանսիա, Լեհաստան։ Դասավանդող անձնակազմի դեպքում ՀԳՊԱ-ն նույն ժամանակաշրջանում հյուրընկալել է 3, իսկ գործուղել՝ 6 դասախոսի։

3.5 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

2021 թվականին Ակադեմիայում հաստատվել են «Կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման գործիքներ և մեխանիզմներ», որը սահմանում է տարբեր մեխանիզմների կիրառումը և ընթացակարգը, ինչպես նաև առանձնացնում պատասխանատու այն մարմիններին, որոնք պետք է հետամուտ լինեն ՄԿԾ-երի արդյունավետության գնահատմանը։

ՀԳՊԱ-ն սահմանել է ՄԿԾ-երի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և վերանայման մեխանիզմներ. դասալսումներ, հարցումներ ուսանողների և դասախոսների շրջանում, հանդիպումներ/ֆոկուս խմբեր ներքին և արտաքին շահակից խմբերի հետ և այլ: Առկա են համապատասխան արձանագրությունները (օրինակ՝ դասալսումների): Փորձագիտական խումբն արձանագրում է, որ գործատուների հետ հանդիպման ժամանակ վերջիններս իրենց գոհունակությունը հայտնեցին լրամշակված ՄԿԾ-երի վերջնարդյունքների վերաբերյալ: Ներքին և արտաքին շահակիցների ներգարվվածությունը տեսանելի է, սակայն չի կրում համակարգված բնույթ: Բուհի կողմից չի հստակեցվում, թե ինչպես է տեղեկատվությունը վերլուծվում և արտացոլվում բուհի հետագա քայլերում:

Արտաքին շահակիցները հայտնում են, որ բավարարված են ՀԳՊԱ-ի շրջանավարտների հմտություններից և տեխնիկական կարողություններից՝ առաջնահերթություն տալով նրանց աշխատանքի տեղավորման առումով: Սակայն նրանք՝ օրինակ թանգարանների ներկայացուցիչները, մտահոգություն են հայտնում վերականգնման/պահպանման ոլորտում հմուտ շրջանավարտների պակասի մասին: ՀԳՊԱ-ում քննարկվում է բակալավրիատի հատուկ ծրագրի ներդրման հնարավորությունը: Նկարիչների և նկարազարդողների պահանջարկը նույնպես բարձրաձայնվել է հրատարակչական ոլորտում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում բուհի կողմից իրականացված քայլերը, ըստ ՀԳՊԱ ռազմավարության ՄԿԾ-ների բարելավման գործընթացի մեկնարկը, որի հաջող իրականացումը կնպաստի կրթական ծրագրերի մրցունակության բարձրացմանը: Դրական է, որ Ակադեմիայում իրականացվող կրթական ծրագրերը համահունչ են բուհի առաքելությանը, որը նպաստում է աշխատաշուկայի կարիքներին համապատասխան մասնագետների պատրաստմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում բակալավրիատի կրթական ծրագրերի լրամշակման գործընթացի իրականացումը՝ կարևորելով, հատկապես, իրականացված համեմատական վերլուծությունների (բենչմարքինգ), աշխատաշուկայի ներկայացուցիչների հետ հանդիպումների, շրջանավարտների շրջանում հարցումների արդյունքների արտացոլումը նորացված կրթական ծրագրերում: Լրամշակված կրթական ծրագրերում ներկայացված է տվյալ կրթական ծրագրի առաքելությունը, շարադրված են ԿԾ-ի նպատակներն ու խնդիրները, սահմանված են ուսումնառության հստակ վերջնարդյունքներ: Մոդուլային սկզբունքով կառուցված կրթական ծրագրերը արտացոլում են ուսանողի առաջընթացն ըստ տարիների և հաջող իրականացման դեպքում կարող են նպաստել շարժունությանը: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբն արձանագրել է, որ մոդուլների նոր ձևաչափով կառուցված նկարագրերը միշտ չէ, որ արտացոլում են կրթական ծրագրի նկարագրով սահմանված պահանջները, անորոշ է ուսանողին գնահատելու կիրառվող սկզբունքը, ինչը կարող է խոչընդոտ հանդիսանալ անհրաժեշտ տվյալները փաստաթղթավորելու, ուսանողների շարժունությունը կազմակերպելու համար: Ավելին՝ բակալավրի կրթական ծրագրի 2-րդից 4-րդ կուրսերի և մագիստրոսի կրթական ծրագրի

կուրսերի շատ դասընթացների նկարագրերում կրթական վերջնարդյունքների և դասավանդման և ուսումնառության մեթոդների միջև կապերի բացակայությունը, բազմաթիվ այլ խնդիրները՝ կապված դասընթացների նպատակների, վերջնարդյունքների, առաջադրանքների և այլ բաղադրիչների հետ, թեև գիտակցվում են բուհի ղեկավարության կողմից որպես խնդիր, այդուհանդերձ համարժեք արձագանքի չեն արժանացել ամբիոններում, և փաստն այն է, որ 2018, 2019 և 2020 թվականներին բակալավրիատ և 2020 և 2021 թվականներին մագիստրատուրա ընդունված ուսանողների պարագայում ուսումնառությունը, դասավանդումը և գնահատումը չի կարելի բնորոշել որպես հստակ պլանավորված գործընթաց։ Փորձագիտական խումբը թեև դրական է գնահատում կրթական ծրագրերի հիմնարար վերանայումները, սակայն արձանագրում է, որ դրանք խիստ դանդաղ են տեղի ունենում (կրթական ծրագրերի բովանդակության վերանայումները միայն բակալավրի 1-ին տարվա դասընթացների մակարդակում են արվել 5 տարվա ընթացքում)՝ սա վերագրելով կառավարման վերին և միջին օղակների միջև կոմունիկացիայի խնդիրներին։

ՀԳՊԱ-ում գնահատման սահմանված համակարգը թեև համապատասխանում է վերանայված կրթական ծրագրերի տրամաբանությանը, վերջնարդյունքահենք և պրոգրեսիվ է, սակայն դեռևս քիչ է գործադրվում՝ հանրայնացված ու լայնորեն ընկալելի և ընդունված չլինելով պայմանավորված։ Գնահատման համակարգի ամբողջական կիրառման հեռանկարը, ի մասնավորի, կապված է դասախոսների բեռնվածության և մոտիվացվածության հարցերի հետ, որոնց վերաբերյալ առաջիկայում լուծումներ են անհրաժեշտ, այլապես գնահատումը չի դառնա կրթական բարեփոխման մաս և այդպիսով կվտանգվի վերջնարդյունքների ձեռքբերումը։

Թեև ուսանողների ու դասախոսների շարժունության հիմնական խոչընդոտ է համարվում օտար լեզվի իմացության ցածր մակարդակը և խնդիրը լուծելու նպատակով Ակադեմիայում կազմակերպվում են ֆակուլտատիվ դասընթացներ, դրանց արդյունավետությունը բարձր չէ։ Փաստացի, այս եղանակով բուհի ղեկավարությանը չի հաջողվում լուծում տալ խնդրին։

Ողջունելի է, որ 2016 թվականից գործում է ՀՊԳԱ ուսանողների շարժունության կարգը, որը կարգավորում է փոխանակման ծրագրերին մասնակցելու ուսանողների փաստաթղթերի ընդունման, մասնակիցների նախնական ընտրության և այլ գործընթացները։ Գործող կարգով նպաստավոր պայմաններ են ստեղծվում շարժունության կազմակերպման, գործընթացի թափանցիկության ապահովման և հաշվետվողականության համար։

Կարևոր է, որ ՀԳՊԱ-ն սահմանել է ՄԿԾ-երի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և վերանայման մեխանիզմներ՝ դասալսումներ, հարցումներ ուսանողների և դասախոսների շրջանում, հանդիպումներ/ֆոկուս խմբեր ներքին և արտաքին շահակից խմբերի հետ և այլ։ Ներքին և արտաքին շահակիցների ներգարվվածությունը տեսանելի է, սակայն չի կրում համակարգված բնույթ։ Չի հստակեցվում, թե ինչպես է տեղեկատվությունը վերլուծվում և արտացոլվում բուհի հետագա քայլերում։

Հարկ է նշել, որ կրթական ծրագրերում իրականացված փոփոխությունները կարող են նպաստել թե դրանց մրցունակությանն աշխատաշուկայում, թե շարժունության ցուցանիշների բարելավմանը, թե միջազգայնացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրման գործընթացի արդյունքների հիման վրա, համաձայն ՀԳՊԱ ՌԾ իրականացման ժամանակացույցի, համեմատական վերլուծության արդյունքներով վերանայվել են բակալավրիատի կրթական ծրագրերը, գործընթացում ընդգրկվել են Ակադեմիայի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցները, նորացված կրթական ծրագրերում առկա են դասավանդման, ուսումնառության, գնահատման մեթոդների հստակ նկարագրություններ, ներկայացված է դրանց համապատասխանեցումը կրթական ծրագրի ուսումնառության վերջնարդյունքներին, առկա են դասընթացների (մոդուլների) կրթական ծրագրի ուսումնառության վերջնարդյունքներին համապատասխանեցման, կրթական ծրագրի ուսումնառության վերջնարդյունքների և ՀՀ ՈԱՇ-ի համապատասխանեցման աղյուսակներ, տեսանելի է դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, կիրառվում են կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և վերանայման մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՀԳՊԱ-ն բավարարում է չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՊԳԱ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

4.1 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

ՀԳՊԱ-ն ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելություն իրականացնելու համար ունի մի քանի հստակ մեխանիզմներ: Համաձայն ինքնավերլուծության՝ ՀԳՊԱ-ն իր պաշտոնական կայքէջի «Ընդունելություն» բաժնում՝ ըստ կրթական ծրագրերի տեղեկատվություն է տրամադրում գործող կրթական ծրագրերի ընդունելության վերաբերյալ՝ առաջադրանքներ, գնահատման չափանիշներ և այլն: Բուհը ուսանողների հավաքագրման գործընթացի շրջանակներում նաև կատարում է այցեր՝ դպրոցներ, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ: Այցերի ընթացքում աշակերտներին և ուսանողներին ներկայացվում են բուհում ուսումնառելու պայմանները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դիմորդների մեծ հոսք է լինում Փ. Թերլեմեզյանի

անվան գեղարվեստի պետական քոլեջից։ Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջի և մի քանի այլ քոլեջների միջև կնքված պայմանագրերի արդյունքում բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտներն իրենց կրթությունը կարող են շարունակել ՀԳՊԱ-ի համապատասխան մասնագիտության 2-րդ կուրսում։ ՀԳՊԱ-ում կազմակերպվում են նաև բաց դռների օրեր, որտեղ դիմորդները ծանոթանում են կրթական միջավայրին, դասախոսական անձնակազմին և այլն։ Ըստ ՀԳՊԱ ինքնավերլուծության՝ ամենաարդյունավետ մեխանիզմը բուհի պաշտոնական կայքէջի կողմից տրված տեղեկատվությունն է։

ՀԳՊԱ ուսանողների ընդունելությունը բակալավրի կրթական ծրագրով իրականացվում է՝ ըստ «Բակալավրի կրթական ծրագրով ընդունելության ներքին քննությունների անցկացման կարգ»-ի։ Յուրաքանչյուր տարվա ընդունելության քննությունների անցկացման համար կազմվում են ընդունող (գործընթացը համակարգող) հանձնաժողով և մասնագիտական քննական (գնահատող) հանձնաժողովներ, որոնք գնահատում են դիմորդների քննական աշխատանքները։ Ընդունելության մասնագիտական առարկաների քննություններն անցկացվում են ՀԳՊԱ-ում, իսկ ոչ մրցութային կարգով պահանջվում է ավագ դպրոցի «Հայոց լեզվի» թեսթավորման գնահատականը (Ա մակարդակի)։ Մագիստրատուրա ընդունելությունն իրականացվում է ընդունող և մասնագիտական հանձնաժողովների կողմից՝ համաձայն «ՀԳՊԱ-ի մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության քննությունների անցկացման կարգ»-ի։ Օտարերկրյա դիմորդների ընդունելությունն իրականացվում է «ՀԳՊԱ օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգ»-ի համաձայն։ Փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ՀԳՊԱ ՈԱ կենտրոնը ուսումնական տարվա սկզբին իրականացնում է հարցումներ առաջին կուրսեցիների շրջանում ընդունելության գործընթացի արդյունավետության վերաբերյալ։

4.2 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր։

ՀԳՊԱ-ն կարևորում է ուսանողների կարիքների վերհանմանն ուղղված մեխանիզմների կիրառումը՝ տարբեր մեխանիզմներ կիրառելով։ Ինքնավերլուծության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ կարևոր մեխանիզմներից է ուսանողների ընդգրկվածությունն ակադեմիայի կառավարման օղակներում։ Այդուհանդերձ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները կրթական կարիքների վերհանման առավել գործուն մեխանիզմ են դիտարկում ամբիոններին դիմելը։ ՀԳՊԱ-ում ամբիոնները, ՈԱ կենտրոնը և ուսանողական խորհուրդը անցկացնում են ֆոկուս խմբային հանդիպումներ, որտեղ ներգրավվում են նաև ուսանողներին, այդ հանդիպումների ժամանակ ուսանողները կարողանում են վեր հանել իրենց կրթական և ռեսուրսային կարիքները։ ՀԳՊԱ-ում ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմներից է նաև ՈԱ կենտրոնի կողմից ուսանողների շրջանում իրականացրած հարցումները ՀԳՊԱ-ի ռեսուրսների և ծառայությունների, դասընթացի արդյունավետությունը և այլ գործընթացները գնահատելու

նպատակով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քննարկումներն ուսանողներին թույլ են տալիս վերհանել ուսումնական միջավայրի վերաբերյալ ունեցած խնդիրները: Այսպիսով, ՈԱ կենտրոնի կողմից իրականացված ՀԳՊԱ ռեսուրսների արդյունավետության հարցումների ժամանակ ուսանողների կողմից վերհանված խնդիրները ստացել են լուծումներ. ձեռք է բերվել դասապրոցեսը ավելի արդյունավետ դարձնող տեխնիկա և գույք, ինչպես նաև հարցումների արդյունքում գրադարանը համալրվել է մասնագիտական գրականությամբ:

4.3 ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

ՀԳՊԱ ինքնավերլուծության համաձայն՝ ուսումնառության գործընթացում ուսանողներին հիմնականում խորհրդատվություն է տրամադրում դասախոսը, ինչպես նաև կուրսի ղեկավարը: Ավարտական աշխատանք կատարելիս դասախոսը կամ կուրսի ղեկավարը նույնպես օժանդակում են ուսանողին՝ վերջինիս հետ անհատական հանդիպումների և քննարկումների միջոցով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսները պատրաստակամ են նաև դասի շրջանակներից դուրս տրամադրել խորհրդատվություններ ուսանողներին:

Ուսանողների հմտությունները և կարողությունները զարգացնելու նպատակով ՀԳՊԱ-ն կազմակերպում է նաև լրացուցիչ պարապմունքներ: Բուհում կազմակերպվում է հինգ օտար լեզվի լրացուցիչ պարապմունքներ, նաև օտարերկրյա ուսանողների համար կազմակերպվում են հայոց լեզվի լրացուցիչ պարապունքներ: Բուհը կարևորում է օտար լեզվի լրացուցիչ պարապմունքների իրականացումը, քանի որ դրանք պետք է նպաստեն շարժունության և միաջազգային այլ ծրագրերին: Այդուհանդերձ, այս պարապմունքներին ուսանողների մասնակցությունը դեռևս ցածր է: 2021-2022 ուսումնական տարվա ընթացքում ֆակուլտատիվ դասընթացներին մասնակցել է 190 ուսանող, որը կազմում է ՀԳՊԱ ուսանողության 27%-ը:

4.4 ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:

Ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով ՀԳՊԱ-ն մշակել է Ուսանողների ձեռնարկ, որտեղ տրամադրվում է տեղեկատվություն հաստատության կրթական ծրագրերի, մատուցվող ծառայուվերաբերյալ: 2021-2022 ուստարվա համար մշակվել և հրապարակվել է ՀԳՊԱ Ուսանողների ձեռնարկը, որը հասանելի է ՀԳՊԱ կայքէջում:

Ուսանողներին օժանդակություն են տրամադրում տարբեր ստորաբաժանումներ՝ դեկանատներ, ամբիոններ և այլն: Ուսանողները դեկանատներ և ամբիոններ են դիմում նաև քննական գնահատականների բողոքարկման հարցերով՝ անմիջապես գնահատականը իմանալուց հետո: Քննությունը գնահատող հանձնաժողովը ևս մեկ անգամ դիտարկում է բողոքարկող ուսանողի աշխատանքը և կայացնում որոշում՝ կամ գնահատականը բարձրանում է, կամ մնում նույնը:

ՀԳՊԱ-ն չունի հստակ ժամանակացույց վարչական անձնակազմին դիմելու համար, սակայն ինչպես ցույց տվեցին փորձագիտական հանդիպումները, ուսանողներն իրենց հուզող հարցերով վարչական անձնակազմին կարող են դիմել ցանկացած ժամանակ և ստանալ իրենց հարցերի պատասխանները:

4.5 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

Ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների արդյունավետության բարձրացման համար բուհում 2020 թվականին կառուցվածքային փոփոխության արդյունքում Կարիերայի կենտրոնը վերակազմավորվել է Ուսանողների աջակցման և շրջանավարտների հետ համագործակցության կենտրոնի: Կենտրոնը ուսանողների կարիերային նպաստելու համար կատարում է մի շարք գործառույթներ: Աջակցելու, որ ուսանողները ճիշտ ներկայանան գործատուին կենտրոնը կազմակերպում է վերապատրաստումներ՝ գրագետ ինքնակենսագրական և պորտֆոլիո կազմելու համար: Ուսանողների աջակցման կենտրոնը համագործակցում է ոլորտային կազմակերպությունների հետ և իրականացնում է կամավորական նախագծեր: Ուսանողը հնարավորություն է ստանում աշխատել իրական պրոեկտների վրա, որը կօգնի հետագայում աշխատաշուկայում հեշտ իր տեղը գտնելուն:

Շրջանավարտների հետ կապն ամրապնդելու և նրանց զբաղվածության խնդիրներն ուսումնասիրելու համար Ուսանողների աջակցման կենտրոնի և ՈԱ կենտրոնի համագործակցությամբ իրականացվել է հեռախոսային հարցում 2018-2020թթ. շրջանավարտների հետ՝ պարզելու վերջիններիս զբաղվածության մակարդակը: Ըստ այդ հարցումների՝ շրջանավարտների 59,39% աշխատում են իրենց մասնագիտությամբ:

4.6 ՄՈՒՀ-ն աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

ՀԳՊԱ 2017-2021թթ. Ռազմավարական ծրագրի համաձայն՝ որպես ռազմավարական նպատակ է սահմանվել հետազոտական/ստեղծագործական գործունեության իրականացումը և դասավանդման հետ փոխկապակցումը: ՀԳՊԱ-ում հետազոտությունը առանձնանում է երկու ուղղությամբ՝ գործնական-կիրառական հետազոտություն և գիտական-տեսական հետազոտություն:

Գործնական-կիրառական ուղղությամբ հետազոտական/ստեղծագործական աշխատանքները ավելի գործնական են, այս դեպքում ուսանողի ստեղծագործությունն է համարվում հետազոտության առարկա, իսկ կատարված աշխատանքները ցուցադրվում են բուհի կողմից կազմակերպված ցուցահանդեսներում: Գիտական-տեսական հետազոտությունն իրականացնող ուսանողները կատարում են տեսական բնույթի հետազոտություն, օրինակ՝ հոդվածներ, մենագրություններ և այլն: Տվյալ աշխատանքները հրապարակվում են ՀԳՊԱ-ի «Տարեգիրք. Արվեստագիտական և հումանիտար հետազոտություններ» գիտական ժողովածում:

Հետազոտական գործունեությունը առավել համակարգված դարձնելու համար ուսանողներին տրվում է Հետազոտական կենտրոնի կողմից մշակված ուղեցույց, որը

ուսանողներին հնարավորություն է տալիս հստակ կետերով առաջնորդվել ավարտական աշխատանք կամ մագիստրոսական թեզ գրելու ժամանակ: Տվյալ ուղեցույցները հասանելի են նաև բուհի կայքէջում: Ուսանողների հետազոտական հմտությունների զարգացման նպատակով ՀԳՊԱ-ի Արվեստաբանություն բակալավրի կրթական ծրագրում դասավանդվում են «Հետազոտության ներածություն» և «Ստեղծագործության վերլուծություն» դասընթացները, իսկ մագիստրոսական բոլոր կրթական ծրագրերում՝ «Հետազոտության մեթոդներ» դասընթացը: Այնուամենայնիվ, փորձագիտական այցը ցույց է տալիս, որ բուհը դեռևս չի օգտագործում իր ողջ պոտենցյալը և ռեսուրսային բազան բոլոր ՄԿԾ-ների ուսանողներին հետազոտական աշխատաքններում ներգրավելու համար:

4.7 ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

ՀԳՊԱ ուսանողների իրավունքների պաշտպանության մեխանիզմները ներկայացված են ՀԳՊԱ կանոնադրությունում, ուսանողի ձեռնարկում, ուսանողների հետ կնքվող պայմանգրերում և ներհամալսարանական այլ ընթացակարգերում: Ըստ բուհի ինքնավերլուծության՝ ուսանողն իր իրավունքների ու պարտականությունների մասին տեղեկանում է ուսումնառելու առաջին տարվա սկզբին՝ առաջին կուրսեցիների հետ հանդիպման ժամանակ:

Ուսանողների իրավունքների պաշտպանության հիմնական մարմինը Ուսանողական խորհուրդն է: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողները հիմնականում ՈՒԽ-ի միջոցով բարձրաձայնում են ռեսուրսներին առնչվող հացեր: Ուսանողական խորհուրդը միջնորդում է նաև անապահով ուսանողների վարձավճարների մասնակի զեղչի համար, կազմակերպում է ցուցահանդեսներ, մրցանակաբաշխություններ և այլն: Այդուհանդերձ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներն իրենց իրավուքնների վերաբերյալ ծագած հարցերով առավել հաճախ դիմում են վարչական կառույցներին, և ՈՒԽ-ը չի ընկալվում ուսանողների կողմից որպես իրավունքների պաշտպանության մարմին: ՀԳՊԱ փաստաթղթերի ուսումնասիրությունը ևս փաստում է, որ ուսանողները դժգոհություններ չունեն ՈՒԽ աշխատաքններից, սակայն առաջարկում են Ուսանողական խորհրդին չսահմանափակվել միայն ակտիվ ուսանողներ ներգրավելով, այլ ընդլայնել ուսանողական համակազմի մասնակցությունը ՈՒԽ գործունեությանը:

4.8 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

Ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատմանը նպաստում են ՀԳՊԱ ՈԱ կենտրոնի կողմից պարբերաբար իրականացվող ֆոկուս խմբային քննարկումներն ու կատարվող հարցումները:

Փորձագիտական այցը ցույց տվեց, որ բուհը օժանդակում է ուսանողների կողմից բարձրացված հարցերին: Ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող

ծառայությունների վերաբերյալ ընդունված կանոնակարգերն ու ընթացակարգերը հնարավորություն են տալիս անմիջականորեն արձագանքելու ուսանողների կողմից բարձրացված խնդիրներին և լուծումներ տալու դրանց: Այդուհանդերձ, կիրառվող մեխանիզմների արդյունավետություն համապարփակ ձևով դեռևս չի գնահատվել հաստատության կողմից:

Դատողություններ: Փորձագիտական խումբը գտնում է, որ ընդհանուր առմամբ բուհն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Դրական է, որ բուհում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ, որը նպաստում է բուհի դիմորդների կայուն թվաքանակին:

Դրական է, որ բուհում գործում են ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմներ, որոնք թույլ են տալիս վերհանել տարաբնույթ խնդիրներ: Դրական հանգամանք է, որ ուսանողները, առաջնորդվելով արդի ռեսուրսների պահանջով, վեր են հանում ռեսուրսների հետ կապված խնդիրներ և բուհի կողմից ստանում պատշաճ լուծումներ, սակայն կրթական ծրագրերին վերաբերող հարցերում ուսանողների կողմից չկա նույն ակտիվությունը, որը կարող է վտանգել կրթական ծրագրերի շարունակական բարելավմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՀԳՊԱ-ում դասախոս-ուսանող կապը այնքան անհատական է, որ ուսանողները հնարավորություն ունեն խորհրդատվություն ստանալ ցանկացած ժամանակ: Ուսանողների առավել արդյունավետ ուսումնառությունն ապահովելու նպատակով ՀԳՊԱ-ն կազմակերպում է լրացուցիչ դասընթացներ: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ լրացուցիչ պարապմունքների արդյունավետության բարձրացումը կնպաստի ուսանողների առաջընթացին, ինչպես նաև օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացմանը:

Դրական է, որ ուսանողները հնարավորություն ունեն ցանկացած ժամանակ դիմելու ինչպես վարչական կազմի ներկայացուցիչներին, այնպես էլ իրենց դասախոսներին և լուծումներ ստանալ տարբեր հարցերի վերաբերյալ, որը նպաստում է ուսանողակենտրոն միջավայրի ձևավորմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ 2020 թ.-ին վերակազմավորված Ուսանողների աջակցման և շրջանավարտների հետ համագործակցության կենտրոնը անընդմեջ բարելավում է ուսանողների կարիերային նպաստող ծառայությունները և ակտիվ գործունեություն է ծավալում: Կենտրոնի աշխատանքներում ուսանողների առավել լայն շրջանակի ընդգրկումը կնպաստի բուհ-աշխատաշուկա-ուսանող կապի ամրապնդմանը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՀԳՊԱ-ում գիտահետազոտական աշխատանքները ունեն առանձնահատկություն. դրանք ավելի հետազոտական/ստեղծագործական բնույթ են կրում: Գովելի է այն, որ բուհում «Արվեստաբանություն» բակալավրի կրթական ծրագրում դասավանդվում են «Հետազոտության ներածություն» և «Ստեղծագործության վերլուծություն» դասընթացները, իսկ մագիստրոսական բոլոր կրթական

ծրագրերում՝ «Հետազոտության մեթոդներ» դասընթացը, որը կարող է նպաստել հետազոտական վերլուծական կարողությունների ձևավորմանը: Բուհի առանձնահատկությունով պայմանավորված ուսանողները իրականացնում են կիրառական հետազոտություններ իրենց առաջադրանքների կատարման ժամանակ, ինչը հնավորություն է տալիս վերլուծական մտքի ձևավորմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում Ուսանողի ուղեցույցի առկայությունը, որը հնավարություն է տալիս ուսանողներին ծանոթանալու իրենց իրավունքներին: ՀԳՊԱ-ում գործում է նաև Ուսանողական խորհուրդ, որը նույնպես նպաստում է ուսանողների իրավունքների պաշտպանությանը: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ ՈՒԽ-ի գործունեության ուղղության հստակեցումը կնպաստի առավել շատ ուսանողների նեգրավվածությանը ՈՒԽ աշխատանքներում:

Դրական է, որ բուհում տարբեր հարցումների և ֆոկուս խմբային քննարկումների միջոցով վեր են հանվում կրթական և այլ ծառայությունների որակի մասին խնդիրները, որոնց առավել թիրախային, պարբերական իրականացումը և մասնակցայնության ընդլայնումը կնպաստեն բուհում ուսանողներին մատուցվող ծառայությունների շարունակական բարելավմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ բուհում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ, բուհում ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար անհատական մակարդակում ուսանողներին տրվում են խորհրդատվություններ, ուսանողները խնդիրների չեն բախվում իրավունքների պաշտպանության հարցերում, ուսանողները ստանում են համապատասխան աջակցություն, բուհը քայլեր է իրականացնում ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների բարելավման ուղղությամբ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՀԳՊԱ-ն համապատասխանում է չափանիշ 4-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀԳՊԱ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

5.1 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

Ակադեմիայում 2021 թվականին հաստատվել է «Դասախոսի տարակարգերի մասին կանոնակարգը», որը սահմանում է պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման չափանիշները, ընտրության ընթացակարգը և այլ կանոններ: Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ձևավորման գործընթացն իրականացվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի, ՀԳՊԱ կանոնադրության համաձայն: 2021 թվականին հաստատվել է ՀԳՊԱ «Ստորաբաժանումների և աշխատատեղերի տարակարգերի մասին կանոնակարգ»-ը, 2019-ից գործում են էթիկայի կանոնագրքեր պրոֆեսորադասախոսական կազմի և վարչական կազմի համար: 2016-ից առկա է նաև ՀԳՊԱ-ի ներքին կարգապահական կանոնակարգը, որը սահմանում է աշխատանքային կանոնները, աշխատողների խրախուսման և պատասխանատվության պայմանները, էթիկայի կանոններ, ինչպես նաև կրթական ընդհանուր կանոններ:

Համաձայն ինքնավերլուծության՝ Ակադեմիայում գործող 8 ամբիոնում հիմնական և համատեղությամբ աշխատող դասախոսների թիվը 189 է, այդ թվում՝ 2 ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 30 պրոֆեսոր, այդ թվում՝ 2 գիտությունների դոկտոր և 1 գիտությունների թեկնածու, 40 դոցենտ, այդ թվում՝ 16 գիտությունների թեկնածու, 11 գիտությունների թեկնածու առանց գիտական կոչման:

ՀԳՊԱ-ն կիրառում է անձնակազմի համալրման հստակ ընթացակարգեր, որոնցով ապահովում է անձնակազմի կայունությունը: Պրոֆեսորադասախոսական կազմի համալրումն իրականացվում է մրցութային սկզբունքով և/կամ հրավերով: Ըստ «Դասախոսի տարակարգերի մասին կանոնակարգի»՝ անհրաժեշտության դեպքում Ամբիոնի աշխատանքներում ներգրավվում են հրավիրված դասախոսներ, խորհրդատու դասախոսներ, մասնագետներ, ուսումնաօժանդակ աշխատողներ՝ ուսումնական վարպետ, լաբորատորիայի ղեկավար, լաբորանտ և այլն: Կրթական ծրագրերի իրականացման նպատակով Ակադեմիան ներգրավում է համապատասխան ոլորտներում համբավ ունեցող մասնագետների, որոնք ունեն անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ ու հմտություններ և կարող են ապահովել կրթական ծրագրերի նպատակներից բխող գործընթացը:

ՀԳՊԱ-ն նաև փորձում է ապահովել սերնդափոխությունը պրոֆեսորադասախոսական կազմում՝ կրթական գործընթացում ներգրավելով երիտասարդ մասնագետների: Ելնելով ոլորտի առանձնահատկությունից՝ դասախոսական կազմը հաճախ համալրվում է Ակադեմիայի շրջանավարտներով, ինչպես նաև մեծ թիվ են կազմում դասախոս-գործատուները. այս համատեքստում տեսանելի է բուհ-շրջանավարտ և բուհ-գործատու որոշակի կապը: Ակադեմիայում դասավանդում են ոլորտի առաջատար մասնագետներ, մասնագիտական համայնքում հեղինակություն վայելող և ճանաչված արվեստագետներ:

5.2 ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

ՀԳՊԱ-ի «Դասախոսի տարակարգերի մասին կանոնակարգ»-ով սահմանված են դասախոսական տարակարգերը, ըստ տարակարգերի՝ գործառույթները, ինչպես նաև

պրոֆեսորի, դոցենտի, ավագ դասախոսի (ասիստենտի), դասախոսի, նաև պատվավոր պրոֆեսորի և հրավիրված դասախոսի (դոցենտի, պրոֆեսորի) տարակարգերը զբաղեցնելու պահանջներ՝ կրթության, գիտական աստիճանի/կոչման վերաբերյալ, այլ:

Հաշվի առնելով, որ Գեղանկարչություն և Քանդակագործություն կրթական ծրագրերով ուսուցումն իրականացվում է արվեստանոցային սկզբունքով, արվեստանոցի ղեկավար է դառնում պրոֆեսորի պաշտոն զբաղեցնող դասախոսը, ով ղեկավարում է տվյալ արվեստանոցի ուսանողներին դասավանդող այլ դասախոսների աշխատանքը:

Ակադեմիայի պրոֆեսորադասախոսական կազմը հիմնականում ձևավորված է Հայաստանում ճանաչված և համբավ ունեցող լավագույն մասնագետների ներգրավմամբ:

Հարկ է նշել, որ կանոնակարգում չկան դասախոսներին ներկայացվող տարբերակված պահանջներ՝ ըստ մասնագիտական կրթական ծրագրերի կամ կրթական աստիճանի:

5.3 ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

Համաձայն ինքնավերլուծության՝ ՀԳՊԱ-ն կիրառում է պրոֆեսորադասախոսական կազմի պարբերաբար գնահատման քաղաքականություն, որի անցկացման կարգը և մեթոդաբանությունը սահմանված է 2021 թվականին հրապարակված ՀԳՊԱ-ի Որակի ապահովման ձեռնարկում: Այսպես, դասընթացների գնահատման համար մշակվել է երկու մասից բաղկացած հարցաթերթ: Հարցաթերթի առաջին մասում ներառված են հարցեր դասընթացի վերաբերյալ, երկրորդ մասում ուսանողները գնահատում են տվյալ դասընթացը վարող դասախոսի հմտությունները: Ըստ ՈԱԿ-ի ղեկավարի՝ կենտրոնը վերլուծում է ստացված տվյալները և ներկայացնում համապատասխան ամբիոնի վարիչին, որը քննարկում է դրանք դասախոսի հետ:

Դասախոսական կազմի գնահատման մեկ այլ գործիք է դասալսումների իրականացումը (ՈԱԿ-ի կամ ամբիոնի վարիչի կողմից): Արձանագրված տվյալները համապատասխան ամբիոնի վարիչի կողմից ներկայացվում են դասախոսին, քննարկվում նրա հետ:

ՀԳՊԱ-ում կատարվում է նաև գործընկերային գնահատում՝ արձագանք ուսանողների կատարած աշխատանքների վերաբերյալ կոլեգիալ գնահատման ընթացքում. ուսանողների միջանկյալ և ամփոփիչ դիտումների ժամանակ գործընկերային գնահատումը դասախոսի աշխատանքի ոչ ֆորմալ գնահատման մեխանիզմներից է:

Ակադեմիայում պրոֆեսորադասախոսական կազմի գնահատման՝ մասնագիտական զարգացման կարևորագույն ցուցիչներից են համարվում ստեղծագործական աշխատանքների ցուցադրությունները, մասնակցությունը ցուցահանդեսներին, ինչպես նաև հետազոտական աշխատանքների հրապարակումները և մասնակցությունը գիտաժողովներին:

5.4 Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում, բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

ՀԳՊԱ-ի 2017-2021թթ. ռազմավարական նպատակներից է դասախոսների կարողությունների զարգացումը: Այդ նպատակով բուհում ստեղծել է պրոֆեսորադասախոսական կազմի կարողությունների զարգացման ծրագիր (2019-2021թթ.), որի հիմնական ուղղությունները (թեմաները) եղել են ներառական կրթության ապահովումը, կրթական ծրագրերի լրամշակումը/վերանայումը, կրթական ծրագրերի իրականացումը: Ինքնավերլուծության մեջ նշվում է, որ դասախոսական կազմի հմտությունների զարգացման համար անհրաժեշտ ուղղությունները որոշվել են՝ հաշվի առնելով ուսանողների և ամբիոնների վարիչների կողմից դասախոսների աշխատանքի գնահատումը, ինչպես նաև արտաքին գործընկերների հետ անցկացված հանդիպումների արդյունքները: Ըստ այդմ, Ակադեմիայում չեն նախատեսվել և չեն իրականացվել պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումներ:

Թեև դասախոսների համար կազմակերպվում են օտար լեզուների անվճար դասընթացներ, դասախոսների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ առկա են տեղեկատվության տարածման խնդիրներ:

5.5 ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

Նախորդ հավատարմագրման ընթացքում արձանագրվել է, որ դասախոսական կազմի միջին տարիքը բավականին բարձր է: Այս, ինչպես նաև դասախոսական կազմի կայունությունն ապահովելու նպատակով, Ակադեմիան փորձում է երիտասարդացնել համակազմը՝ ներգրավվելով երիտասարդ կադրեր և նրանց առաջարկելով համատեղությամբ կամ ժամավճարային հիմունքներով դասախոսական աշխատանք: Արդյունքում, նվազել է դասախոսական կազմի միջին տարիքը՝ հասնելով 49.1 տարեկանի: Ընդ որում՝ 2017-2018 ուսումնական տարվա համեմատ 2021-2022 ուսումնական տարում մինչև 30 տարեկան դասախոսների թիվը նվազել է 1,1%-ով, 51 տարեկանից բարձր դասախոսների թիվը նվազել է 6,4%-ով, իսկ 31-50 տարեկան դասախոսների թիվն աճել է 7,5%-ով: Այլ պատկեր է առկա Գյումրու մասնաճյուղում, որտեղ 2017-2018 ուսումնական տարվա համեմատ 2021-2022 ուսումնական տարում մինչև 30 տարեկան դասախոսների թիվը նվազել է 8,0%-ով, 31-50 տարեկան դասախոսների թիվն աճել է 1,0%-ով, իսկ 51 տարեկանից բարձր դասախոսների թիվն աճել է 7,0%-ով:

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ հատկապես երիտասարդ կադրերը, որոնք հիմնականում Ակադեմիայի շրջանավարտներն են, հաշվի առնելով բուհում դասախոսի ցածր աշխատավարձը՝ դասախոսական աշխատանքի են անցնում նախևառաջ նվիրվածության պատճառով և ոչ թե վարձատրության համար:

Պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունության մասին է վկայում հիմնական հաստիքով և համատեղությամբ աշխատող դասախոսների թվի հարաբերակցությունը: Այսպես, 2017-2018 ուսումնական տարում և դրան հաջորդող չորս ուսումնական տարիներին հիմնական և համատեղող դասախոսների թիվն է համապատասխանաբար՝ 76 և 75, 84 և 68, 77 և 77, 89 և 71, 84 և 70:

5.6 ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Ակադեմիան խթանում է աշխատակիցների մասնագիտական աճը՝ ստեղծագործող դասախոսների համար հնարավորություն ստեղծելով անվճար ցուցադրություններ կազմակերպել բուհի ցուցասրահում, իսկ տեսաբանների դեպքում՝ անվճար հիմունքներով հոդվածներ տպագրել «Տարեգիրք» գիտական հոդվածների ժողովածուում: Ըստ ինքնավերլուծության՝ նշված միջոցառումները նպաստում են դասախոսների ստեղծագործական/հետազոտական աշխատանքի զարգացմանը: Այս համատեքստում մատնանշված ՀԳՊԱ-ի դասախոսական կազմի տարակարգերի մասին կանոնակարգը պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականության վերաբերյալ դրույթներ չի պարունակում:

5.7 ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

Համաձայն ՀԳՊԱ-ի կառուցվածքային գծապատկերի՝ Ակադեմիան, բացի երկու ֆակուլտետից և ութ ամբիոնից, ունի սահմանված գործառույթներով այլ ստորաբաժանումներ, որոնց գործունեությունը միտված է ռազմավարական նպատակների իրականացմանը:

Ուսումնական գործընթացները համակարգում և կազմակերպում են դեկանատները, ամբիոնները, Ուսումնամեթոդական մշակումների և ուսումնական գործընթացի հաշվառման բաժինը, Կրթական ծրագրերի մշակման բաժինը: ՀԳՊԱ-ի մյուս ստորաբաժանումները՝ Հետազոտական կենտրոնը, Ուսանողների աջակցման և շրջանավարտների հետ համագործակցության կենտրոնը, Որակի ապահովման կենտրոնը, Արտաքին կապերի բաժինը, Գրադարանը, Ցուցասրահը, ինչպես նաև տարբեր գործընթացների պատասխանատուները (կայքէջ պատասխանատու, Մեդիայի հետ կապերի և սոցիալական էջերի պատասխանատու, Ստեղծագործական և նախագծային պրոդուկտների առևտրայնացման պատասխանատու), նպաստելով կրթական գործընթացների իրականացմանը, ղեկավարվելով բուհի կանոնադրությամբ և հիմք ընդունելով Ակադեմիայի Ռազմավարական ծրագիրը, իրենց գործունեությամբ նպաստում են ռազմավարական նպատակների իրականացմանը:

Համեմատաբար փոքրաթիվ ուսանողական և պրոֆեսորադասախոսական համակազմ ունեցող բուհի կառուցվածքային ստորաբաժանումներն իրենց նպատակներով և գործառույթներով համապատասխանում են Ակադեմիայի ռազմավարական նպատակների շրջանակին, այն է՝ Արդի և մրցունակ կրթական ծրագրերի իրականացում,

Հետազոտական/ստեղծագործական գործունեության իրականացում և դասավանդման հետ փոխկապակցում, Արտաքին կապերի ընդլայնում և շարժունության խթանում, Հասարակությանը մատուցվող ծառայությունների զարգացում, Որակի ապահովման համակարգի կատարելագործում և որակի մշակույթի ձևավորում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը իր վերլուծությունների արդյունքում, նշում է, որ ՀԳՊԱ-ն ունի իր առաքելությանը հասնելու և ՄԿԾ-երի նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ: Նախորդ հավատարմագրման գործընթացից հետո՝ 2021 թվականին հաստատված «Դասախոսի տարակարգերի մասին կանոնակարգը» և «Ստորաբաժանումների և աշխատատեղերի տարակարգերի մասին կանոնակարգը» հնարավորություն են տալիս մրցութային հիմունքներով ընտրելու այնպիսի մասնագետների, ովքեր կարողանում են նպաստել բուհի ռազմավարական նպատակների իրականացմանը: Ակադեմիայի տարբեր ստորաբաժանումների ղեկավարների, աշխատակիցների, ինչպես նաև պատասխանատուների հետ հանդիպումների արդյունքով փորձագիտական խումբն արձանագրում է, որ բուհի վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմը հիմնականում ձևավորված է մասնագիտական և մարդկային բարձր որակներ ու հատկանիշներ ունեցող աշխատողներով:

Հատկանշական է, որ Ակադեմիան պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորումը իրականացնում է ինչպես մրցութային հիմունքներով, այնպես էլ հրավիրված մասնագետների ներգարվմամբ: Արդյունքում, ՀԳՊԱ-ի դասախոսական կազմը հիմնականում ձևավորված է Հայաստանում ճանաչված և համբավ ունեցող լավագույն մասնագետներից: Հատկանշական է նաև, որ դասախոսական կազմում շատ են աշխատաշուկայի ներկայացուցիչները՝ գործատուները, ինչն իր հերթին անմիջական կապ է ստեղծում բուհ-գործատու-աշխատաշուկա շղթայում:

Նկարելի է, որ փորձ է արվում երիտասարդացնել դասախոսական կազմը: Եթե բուհի ղեկավարությանը դա հաջողվում է անել Երևանում, ապա Գյումրու մասնաճյուղում պատկերն այլ է: Տրամաբանական համարելով, որ հատկապես երիտասարդ կադրերը հիմնականում Ակադեմիայի շրջանավարտներն են, փորձագիտական խումբը գտնում է, որ չկան հստակ մեխանիզմներ, որոնք կնպաստեն սերնդափախությանը դասախոսական համակազմում (օրինակ, սահմանելով մրցունակ աշխատավարձ): Այդուհանդերձ, Ակադեմիան կարողանում է ապահովել ՄԿԾ-երի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմի կայունություն, ինչի մասին վկայում է հիմնական և համատեղությամբ աշխատող դասախոսների թվի հարաբերակցությունը: Թեև հստակեցված են դասախոսական տարակարգեր զբաղեցնելու պայմանները, առկա չեն մասնագիտական կրթական ծրագրից և կրթական աստիճանից բխող պրոֆեսորադասախոսական կազմի համար սահմանված պահանջներ:

Կարևոր է, որ ՀԳՊԱ-ն իրականացնում է պրոֆեսորադասախոսական կազմի գնահատում, որի անցկացման կարգը և մեթոդաբանությունը սահմանված է ՀԳՊԱ-ի Որակի ապահովման ձեռնարկում: Ակադեմիային, որպես ռազմավարական նպատակ սահմանելով

դասախոսների կարողությունների զարգացումը, ստեղծել է պրոֆեսորադասախոսական կազմի կարողությունների զարգացման ծրագիր, որում սակայն չի նախատեսվել դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումների բաղադրիչ: Ինչ վերաբերում է իրականացված վերապատրաստումներին, փորձագիտական խումբը նշում է, որ իրականացված վերապատրաստումների արդյունավետության գնահատումը կնպաստի խնդիրների վերհանմանը և վերապատրաստումների արդյունավետության բարձրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՀԳՊԱ-ում առկա է պրոֆեսորադասախոսական կազմի, ինչպես նաև տարբեր ստորաբաժանումների աշխատակիցների ընտրության քաղաքականություն, Ակադեմիայում դասավանդում են ոլորտի առաջատար և հեղինակություն վայելող մասնագետներ, քայլեր է ձեռնարկում կայունության ապահովման ուղղությամբ, փորձագիտական խումբը գտնում է, որ Ակադեմիան ունի իր առաքելությանը հասնելու և ՄԿԾ-երի նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ, ուստի բավարարում է չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՊԳԱ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

6.1 ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

ՀԳՊԱ 2017-2021թթ. Ռազմավարական ծրագրի համաձայն՝ որպես ռազմավարական նպատակ է սահմանել հետազոտական/ստեղծագործական գործունեության իրականացումը և դասավանդման հետ փոխկապակցումը: Ակադեմիան նախորդ հավատարմագրման թերությունների վերացման պլան-ժամանակացույցում արձանագրել է, որ գիտակցում է Հետազոտական կենտրոնի դերի բարձրացման կարևորությունը հետազոտության և ուսումնառության հետ դրա արդյունքների փոխկապակցման տեսանկյունից՝ կարևորելով Հետազոտական կենտրոնի և ամբիոնների՝ որպես գիտական միավորների, համագործակցության ամրապնդումը:

Այցի ընթացքում պարզ դարձավ, որ նախորդ հավատարմագրման ընթացքում արձանագրված խնդրին լուծում տալու նպատակով՝ 2019 թվականին հաստատվել է ՀԳՊԱ-ի 2019-2022 թվականների հետազոտության ռազմավարություն, որի համաձայն հետազոտական ոլորտի զարգացումն Ակադեմիայում սահմանում է որպես առաջնահերթություն:

ՀԳՊԱ-ն արվեստաբանության, կերպարվեստի, կիրառական արվեստի ու դիզայնի ոլորտներում հետազոտությունը սահմանում է որպես ստեղծագործական ուսումնասիրություն, որը հանգեցնում է նոր գաղափարների և հասկացությունների առաջացմանը: ՀԳՊԱ-ին նշված ոլորտներում առանձնացնում է գործնական-կիրառական հետազոտությունը (Նպատակն է նյութերի և գործիքների ճանաչողության խորացումը, մասնագիտական վարպետության հղկումը, գեղարվեստական և դիզայներական միջոցների յուրացումն ու զարգացումը, ստեղծագործական երևակայության խթանումը և այս ամենի ուսումնասիրությունը գեղարվեստական և դիզայներական գործընթացների համատեքստում) և գիտական-տեսական հետազոտությունը (Նպատակն է ուսումնասիրել արվեստի ստեղծագործությունները և արվեստաբանական ու հումանիտար մտքի զարգացումը պատմական գործընթացում, որը ենթադրում է գեղարվեստական փաստերի, դրանց ստեղծման բովանդակային, ոճական և ձևային օրինաչափությունների, ինչպես նաև արվեստաբանական դպրոցների, դրանց փոխառնչությունների և արվեստային գործընթացում դրանց ներդրման հետազոտությանը՝ ըստ դարաշրջանների, քաղաքակրթական-մշակութային միավորների, անհատ արվեստագետների ու արվեստաբանների: Կարևորվում է հայ արվեստի և արվեստաբանության ուսումնասիրությունը՝ դիտարկելով այն տարածաշրջանային և համաշխարհային արվեստի ու մշակույթի համատեքստում):

ՀԳՊԱ Հետազոտական կենտրոնը ստեղծվել է 2014 թվականին: 2020 թվականին հաստատվել է «Հետազոտական կենտրոնի կանոնակարգ»-ը, որը սահմանում է ստորաբաժանման նպատակը, խնդիրները և գործառույթները: Համաձայն կանոնակարգի՝ կենտրոնն ունի 2 հաստիք՝ կենտրոնի ղեկավարի և կենտրոնի ավագ մասնագետի: Այցի ընթացքում պարզ դարձավ, որ Հետազոտական կենտրոնն արդեն տևական ժամանակ չունի ղեկավար: Բուհը քանիցս մրցույթ է հայտարարել թափուր հաստիքը համալրելու նպատակով, սակայն մրցույթն այդպես էլ չի կայացել՝ թեկնածուների բացակայության կամ ներկայացված պահանջներին չհամապատասխանելու պատճառով: Կենտրոնի ավագ մասնագետի պարտականությունները կատարում է բուհի գիտական քարտուղարը:

Թեև բուհի նախահաշվով հետազոտության համար նախատեսված է 8 մլն դրամի չափով ֆինանսավորում, այն տարբեր պատճառներով չի ծառայում նպատակին (խնայվում է)՝ չի օգտագործվում ըստ նշանակության:

6.2 ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

Հետազոտության ոլորտում ՀԳՊԱ-ի հետաքրքրությունները երկարաժամկետ պլանավորման համատեքստում ներկայացված են ՌԾ-ի նպատակ 3-ի (Հետազոտական/ստեղծագործական գործունեության իրականացում և դասավանդման հետ փոխկապակցում) խնդիրներում: Որպես միջնաժամկետ գործունեության ծրագիր Ակադեմիայի կողմից դիտարկվում են 2017-2021թթ. ռազմավարական ծրագրի իրականացման

ժամանակացույցի նախատեսված գործողությունները, ինչպես նաև Հետազոտության ռազմավարության 1-ին հավելվածում սահմանված գործողությունների պլանը։

Կարճաժամկետ գործունեության ծրագիրն արտահայտվում է Հետազոտական կենտրոնի տարեկան գործողությունների պլանում: Սակայն, ուսումնասիրելով Հետազոտական կենտրոնի կանոնակարգը, ինչպես նաև կենտրոնի, օրինակ, 2021 թվականի գործողությունների պլանը՝ փորձագիտական խումբն արձանագրում է, որ դրանք չեն արտահայտում Հետազոտության ռազմավարությամբ նախատեսված նպատակների շրջանակը։

6.3. ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

ՀԳՊԱ ամբիոնները, հանդես գալով որպես հետազոտական/ստեղծագործական գործընթացի կազմակերպման հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներ, ապահովում են ստեղծագործական և գիտական հետազոտությունների իրականացումը: Ըստ Ակադեմիայում սահմանված հետազոտության տեսակների, ինքնավերլուծության մեջ նշվում է, որ Արվեստաբանության և հումանիտար գիտությունների ամբիոնը հիմնականում իրականացնում գիտական-տեսական (գիտական, ուսումնական, գիտամեթոդական բնույթի աշխատանքներ՝ հոդվածներ, մենագրություններ, պատմական և արվեստաբանական դասագրքեր և այլ), մյուս 7 ամբիոնները՝ գործնական-կիրառական (ցուցահանդեսներ, մասնագիտական նախագծեր, ինստալացիաներ, պերֆորմանսներ և ստեղծագործական գործունեության արդյունք հանդիսացող՝ արտեֆակտի առկայություն ապահովող այլ պրոդուկտներ և գիտամեթոդական բնույթի աշխատանքներ) հետազոտություններ։

2017-2021թթ. Ակադեմիայի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները հրատարակել են 12 մենագրություն։ ՀՀ գրախոսվող մասնագիտական ամսագրերում լույս է տեսել 129 հոդված, որից գրեթե կեսը ՀԳՊԱ-ի տարեգրքում։ 129 հոդվածից 17-ը ռուսերեն լեզվով է, իսկ 4-ը՝ անգլերենով։ Ակադեմիայի դասախոսները հոդվածներով հանդես են եկել նաև արտասահմանյան (ՌԴ, ԱՄՆ, ՄԹ, Իտալիա, Խորվաթիա, Լիբանան) գրախոսվող պարբերականներում. հրապարակումների թիվը՝ 20 հոդված։ 2017-2021թթ. Ակադեմիայի «Ալբերտ և Թովէ Բոյաջյան» ցուցասրահում և այլ հարթակներում տեղի է ունեցել բուհի դասախոսների մասնակցությամբ 35 ցուցահանդես, այդ թվում՝ անհատական ցուցահանդեսներ, հանրապետական, հաշվետու, ցուցահանդես-փառատոներ և այլն։

Գործնական-կիրառական հետազոտությունների ուղղությամբ 2017-2021թթ. ընթացքում տեղի է ունեցել 866 բակալավրի ավարտական աշխատանքի և 172 մագիստրոսական թեզի պաշտպանություն։ Արվեստաբանության և հումանիտար գիտությունների ամբիոնի հետազոտական հետաքրքրությունների շրջանակներում կատարվել է 31 հետազոտական աշխատանք, որից 17-ը՝ բակալավրի ավարտական աշխատանք, 11-ը՝ մագիստրոսական թեզ, 3-ը՝ թեկնածուական թեզ։

Դասախոսների ու ուսանողների շրջանում գիտամեթոդական գործունեությունը խթանելու նպատակով ՀԳՊԱ-ն հրատարակում է «Գեղարվեստի ակադեմիայի Տարեգիրք.

Արվեստագիտական և հումանիտար հետազոտություններ» գիտամեթոդական աշխատանքների ժողովածուն:

Թեև ՀԳՊԱ-ն փորձում է ներդնել ներքին հետազոտական դրամաշնորհային համակարգ և այդ նպատակով մշակվել է «Ներքին դրամաշնորհային ծրագրերի հայտարարության նախագիծ», գործնականում այն չի մեկնարկել:

6.4. ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

Հետազոտական գործունեության միջազգայնացման նպատակով Ակադեմիան ձեռամուխ է եղել միջազգային փորձի ուսումնասիրությանը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Արվեստի ինստիտուտների եվրոպական լիգայի (ELIA) կողմից հրապարակված Handbook for Artistic Research Education ձեռնարկում ամփոփված փորձի ուսումնասիրությունը զգալի փոփոխություն է մտցրել հետազոտական գործունեության նախկինում ընդունված պատկերացումներում: Նոր մոտեցումն արտացոլվել է 2019-2022 թվականների հետազոտության ռազմավարության մեջ. այն է՝ արվեստի բուհերում ստեղծագործական գործունեության և գիտական-տեսական հետազոտական գործունեության համահավասարեցումը: Նշված հիմնավորմամբ է Ակադեմիան տարանջատել հետազոտության գործնական-կիրառական և գիտական-տեսական տեսակները: 2019 թվականին ՀԳՊԱ ռեկտորի կողմից համապատասխան առաջարկություն է ներկայացվել ՀՀ ԲՈԿ-ին՝ մասնագիտությունների ցանկում փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Առաջարկը դեռևս մնացել է անպատասխան:

Ըստ բուհի տեսլականի «ՀԳՊԱ-ն ձգտում է դառնալ առաջատար և միջազգային մրցունակ արվեստի բուհ և ազգային մշակույթի զարգացման ու տարածման կենտրոն»: Միևնույն ժամանակ, ի թիվս այլ դրույթների, բուհի առաքելությունն է «զարգացնել արվեստի հետազոտությունը՝ նպաստելով գիտական մտքի և ազգային մշակույթի տարածմանը»: Այս համատեքստում փորձագիտական խումբը հիմնավորված է համարում Արվեստաբանության և հումանիտար գիտությունների ամբիոնի հետազոտական հետաքրքրությունների շրջանակը՝ հին աշխարհի արվեստի պատմություն, հայ միջնադարյան արվեստի պատմություն, XIX-XX դարերի հայ արվեստի պատմություն, հայ արվեստի ինստիտուցիոնալացման պատմություն, համաշխարհային արվեստի պատմություն, արվեստաբանության պատմություն և արվեստի տեսություն, արվեստաբանության և հարակից ոլորտների համագործակցություն և այլն: Արտասահմանյան պարբերականներում հրապարակված Ակադեմիայի դասախոսների հոդվածները հիմնականում նվիրված են հայկական պատմամշակութային ժառանգության թեմաներին:

Փորձագիտական այցի ժամանակ բուհի ներկայացուցիչները նշեցին, որ արվեստի ոլորտում հետազոտական գործունեության միջազգայնացումն ապահովելու նպատակով ՀԳՊԱ-ի կողմից իրականացվող փոփոխությունները պետք է զուգորդվեն պետական մակարդակով գործող նորմատիվ փաստաթղթերում փոփոխությունների իրականացմամբ:

Կարևորելով հետազոտական գործունեության միջազգայնացումը և փորձելով հիմնվել միջազգային փորձի վրա՝ Ակադեմիային այդուհանդերձ չի հաջողվել նախաձեռնել կամ ընդգրկվել կամ իրականացնել որևէ միջազգային հետազոտական ծրագիր:

6.5 ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

Դասավանդման և հետազոտության/ստեղծագործական գործունեության կապն ապահովելու նպատակով ՀԳՊԱ-ում գործող միջոցներից է, օրինակ, բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում հետազոտական աշխատանքներին կրեդիտների հատկացումը: 2016 թվականի բակալավրիատի ՄԿԾ-երի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ավարտական կիսամյակում դիպլոմային աշխատանքի պաշտպանության համար նախատեսված է 4 կրեդիտ, կա նաև նախադիպլոմային պրակտիկա՝ 26 կրեդիտ: Լրամշակված ՄԿԾ-երում մոտեցումն այլ է: Այն համահունչ է բուհի որդեգրած Հետազոտության ռազմավարությանը, որով տարբերակվում են տեսական և գործնական բնույթի հետազոտությունները: Այս դեպքում բակալավրի ավարտական ամփոփիչ աշխատանքի համար տրամադրված է 30 կրեդիտ աշխատածավալ, որը Արվեստաբանության ՄԿԾ-ի դեպքում նախատեսում է գիտական-տեսական հետազոտություն, իսկ Ակադեմիայի մյուս ՄԿԾ-երի դեպքում՝ գործնական-կիրառական հետազոտություն:

Այլ պատկեր է մագիստրոսական կրթական ծրագրերում, որտեղ մագիստրոսկան թեզի պատրաստման (Արվեստաբանություն) կամ մագիստրոսկան թեզի և նախագծի պատրաստման (օրինակ, Համակարգչային գրաֆիկա) համար նախատեսված է 28 կրեդիտ և 2 կրեդիտ՝ ավարտական աշխատանքի պաշտպանության համար: Մագիստրոսի ՄԿԾ-երի առաջին և երկրորդ կիսամյակներում նախատեսված է Հետազոտական մեթոդներ դասընթացը (6 կրեդիտ՝ ըստ կիսամյակների 4+2) և երկրորդ ու երրորդ կիսամյակներում Հետազոտական աշխատանք դասընթացը (32 կրեդիտ՝ ըստ կիսամյակների 12+20):

Դասավանդման և հետազոտության/ստեղծագործական գործունեության կապն ապահովելու նպատակով ՀԳՊԱ-ում գործող մեխանիզմներից է նաև Արվեստաբանություն կրթական ծրագրում «Մասնագիտական թեմատիկ դասընթաց» հատուկ դասընթացների շարքը, որի շրջանակում ուսանողներին ներկայացվում են ՀԳՊԱ-ում իրականացված հետազոտությունների արդյունքները: Նշված դասընթացները հաճախ փոփոխվում են և նախատեսված են հետազոտություններ իրականացնող դասախոսների ընթացիկ հետազոտական աշխատանքի արդյունքները դասավանդման միջոցով ներկայացնելուն:

«Գեղարվեստի ակադեմիայի Տարեգիրքում» հոդվածների տեսքով հրապարակվում են տեսական մասնագիտությամբ ուսանողների/շրջանավարտների ավարտական աշխատանքները. 2017-2021թթ. տպագրվել է 11 հոդված: Սա հնարավորություն է տալիս հանրայնացնել ուսանողների հետազոտական աշխատանքները: Նույն նպատակին է միտված նաև գործնական-կիրառական (ստեղծագործական) բնույթի ուսանողական աշխատանքների ցուցադրությունը ՀԳՊԱ-ի ցուցասրահում: 2017-2022թթ. Ակադեմիայի «Ալբերտ և Թովէ

Բոյաջյան» ցուցասրահում և այլ հարթակներում կազմակերպվել է ուսանողական աշխատանքների 56 ցուցահանդես, այթ թվում՝ առցանց ցուցադրություններ։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Ակադեմիան ունի հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն՝ երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորմամբ։ ՀԳՊԱ-ի 2019-2022 թվականների հետազոտության ռազմավարությամբ, միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա, տարբերակվում են գործնական-կիրառական հետազոտություն և գիտական-տեսական հետազոտություն հասկացությունները։ Փորձագիտական խումբը նշում է, որ արվեստի ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա ձևավորված հետազոտական մոտեցումները և արվեստի ոլորտում հետազոտության հասկացության հստակեցումը կարող է խթան դառնալ կիրառական հետզատությունների իրականացմանը և հետազոտությունների արդյունքների տարածմանը ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակում։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում հետազոտության ոլորտի ռազմավարության առկայությունը, որոնք ճշգրտվում են միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերով, որը նպաստում է հետազոտական գործընթացների կանոնակարգվածությանը։ Դրական է, որ ստեղծվել է հետազոտական կենտրոն, որը պետք է համակարգի բուհում իրականացվող գործընթացները։ Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը նշում է, որ հետազոտական կենտրոնի դերի և առաքելության հստակեցումը, մարդկային և ֆինանսական ռեսուրսներով համալրումը բուհի կողմից հրատապ լուծման անհրաժեշտություն ունեն, որոնք նպաստեն ոլորտում բուհի որդեգրած նպատակների իրականացմանը։

Դրական է, որ բուհը քայլեր է ձեռնարկել ներքին դրամաշնորհային ծրագրերի մեկնարկի համար, սակայն դրանք դեռևս չեն իրագործվել պայմանավորված Հետազոտական կենտրոնի մարդկային ռեսուրսների սղությամբ։ Ներքին դրամաշնորհային ծրագրերի ակտիվացումը կնպաստի դասախոսների և ուսանողների հետազոտությամբ զբաղվելու մոտիվացիայի բարձրացմանը։

Դրական է, որ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները զբաղվում են հետազոտական աշխատանքով՝ հոդվածներ տպագրելով հիմնականում ՀՀ գիտական պարբերականներում, հեղինակելով մենագրություններ։ Փորձագիտական խումբը նշում է, որ դասավանդմանը մեծապես նպաստում են հետազոտության ոլորտում տեղի ունեցող զարգացումները, որոնք խթանում են նաև բուհի դասավանդման բարելավումն ու կրթական ծրագրերի արդյունավետ իրականացումը։ Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ բուհական գիտաժողովների, ամառային դպրոցների կազմակերպումը կնպաստի առավել շատ թվով դասախոսների և ուսանողների ներգրավվածությանը հետազոտական/ստեղծագործական աշխատանքներում։

Դրական է, որ ՀԳՊԱ-ն հրատարակում է «Գեղարվեստի ակադեմիայի Տարեգիրք. Արվեստագիտական և հումանիտար հետազոտություններ» գիտամեթոդական աշխատանքների ժողովածուն, որը ՀՀ ԲՈԿ-ի կողմից ընդգրկվել է ընդունելի գիտական

պարբերականների ցանկում: Ակադեմիայի դասախոսների և ուսանողների հետազոտական/ստեղծագործական գործունեությունը հանրայնացնելու համատեքստում կարևոր են նաև բուհի «Ալբերտ և Թովէ Բոյաջյան» ցուցասրահում պարբերաբար կազմակերպվող ցուցադրությունները:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողների կողմից իրականացվում են ոլորտին համապատասխան՝ արվեստաբանական և կիրառական բնույթի հետազոտություններ, հետազոտական ոլորտում Ակադեմիայի հետաքրքրությունները ու հավակնությունները փաստաթղթավորված են. դրանք արտահայվում են ՀԳՊԱ Հետազոտության ռազմավարության մեջ, ստեղծվել են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման հիմքեր, փորձագիտական խումբը գտնում է, որ Ակադեմիան բավարարում է չափանիշ 6-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՊԳԱ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

7.1 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիան իր գործունեությունն իրականացնում է Երևանի երկու մասնաշենքերում, Գյումրու մասնաճյուղի և Դիլիջանի ստորաբաժանման մասնաշենքերում՝ համապատասխանաբար 3511,1 քմ, 2996.8քմ, 1618.9քմ և 1297,2քմ տարածքներով: ՀԳՊԱ-ի կրթական ծրագրերն ունեն առանձնահատկություններ, որոնց իրականացման համար առկա է համապատասխան կրթական միջավայր: Բուհում առկա են լսարաններ, գեղանկարչության, քանդակագործության արվեստանոցներ, գրաֆիկայի, հագուստի մոդելավորման, գրաֆիկական դիզայնի լաբորատորիաներ, գրադարան, անհրաժեշտ նյութերի պատրաստման համար արհեստանոցներ, ցուցասրահներ, դահլիճներ, վարչական գործընթացների կարիքներից բխող աշխատասենյակներ և այլն:

ՀԳՊԱ-ի նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցն ուսումնական միջավայրի առնչությամբ նշում էր արվեստանոցներն ու լաբորատորիաները տեխնիկական միջոցներով վերահագեցնելու խնդիրը: Ինչպես բարելավման պլանում, այնպես էլ ՀԳՊԱ զարգացման 2017-2021թթ. ռազմավարական ծրագրում ուշադրություն է դարձված այս հանգամանքին. ՌԾ-ում կրթական միջավայրի բարելավումն արձանագրված է որպես

ռազմավարական խնդիր: Ըստ այդմ էլ բուհն իրականացրել է ենթակառուցվածքի և ռեսուրսների բարելավման որոշ կարևոր միջոցառումներ, որոնցից են.

- վերանորոգվել է գրաֆիկայի լաբորատորիան և ձեռք է բերվել նոր հաստոց,
- վերազինվել է համակարգչային լաբորատորիան. ձեռք են բերվել համակարգիչներ և պլանշետներ,
- վերանորոգվել և վերազինվել է Գյումրիի մասնաճյուղի դիզայնի լաբորատորիան,
- վերազինվել է քանդակագործության արվեստանոցը, վերանորոգվել է դրա տարածքը,
- համակարգիչներով և 3D տպիչներով վերազինվել է դիզայնի լաբորատորիան,
- ձեռք է բերվել համակարգչային տեխնիկա վարչական կազմի և ուսումնական ստորաբաժանումների կարիքների համար,
- բարելավվել է գրադարանի ընթերցասրահի պայմանները, ձեռք է բերվել էլեկտրոնային գրականություն, իրականացվել են վերապատրաստումներ՝ միտված գրադարանավարների մասնագիտական զարգացմանը:

Ռեսուրսների բարելավման ուղղությամբ ՀԳՊԱ-ի վերոնշյալ ձեռքբերումներն իրականացվել են սեփական միջոցների, առավելապես՝ կարողությունների զարգացման և այլ դրամաշնորհային ծրագրերի (ERASMUS + Inclusion, C3QA և այլն) շրջանակներում: Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ բուհը թեև ընդհանուր առմամբ պատկերացնում է իր կրթական ծրագրերի կարիքները, բայցև չի կատարել համապարփակ վերլուծություն ու դեռևս չի մշակել այդ կարիքների համապատասխան ենթակառուցվածքի զարգացման ու ռեսուրսների ձեռք բերման պլան: ՀԳՊԱ-ի ղեկավար վարչական կազմը, բուհի բնականոն գործունեության ապահովումից զատ զբաղված լինելով առավելապես կրթական ծրագրերի զարգացման ռազմավարական խնդրով, որոշակի պլաններ ու մտադրություններ դեռևս չուներ զարգացման նոր դրամաշնորհային ծրագրերի դիմելու առնչությամբ:

Հաշվի առնելով, որ ՀԳՊԱ զարգացման նոր ռազմավարական ծրագրում նպատակադրման ոլորտները նախորդի համեմատ նույնն են մնալու և հաշվի առնելով, որ 2017-2021թթ. ՌԾ-ում ենթակառուցվածքի զարգացումն ու ռեսուրսների բարելավումը ռազմավարական նպատակի մակարդակ չէր բարձրացված, առայժմ հասկանալի չէ, թե նշված ոլորտի զարգացումն ինչ կարգի առաջնահերթություն է դիտարկվում բուհի կողմից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ, մասնավորապես, Երևանի Ջրաշատի 1 հասցեում գտնվող մասնաշենքում, որտեղ տեղակայված է ՀԳՊԱ-ի դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի ֆակուլտետը, առկա են ուսումնական միջավայրի ընդլայնման ու բարեկարգման հրատապ խնդիրներ (լսարանային-լաբորատոր տարածքը բավարար տարողունակ չէ), որոնց լուծման հնարավորություններ թեև կան (ՀՀ պետգույքի կառավարման վարչության բալանսի վրա գտնվող այդ շենքում առկա են չօգտագործվող տարածքներ), սակայն բուհին տևական ժամանակ չի հաջողվում լուծել այդ խնդիրները. փորձագիտական այցից ստացվեց տպավորություն, որ այս հարցում, մասնավորապես, չեն գործադրվում բուհի հոգաբարձուների խորհրդի հնարավորությունները:

Բուհն ունի գրադարան, որը ներառում է նաև էլեկտրոնային գրադարան և հիմնականում ապահովված է անհրաժեշտ գրականությամբ: Չնայած դրան, գրադարանն ունի

գրականության թարմացման անհրաժեշտություն, և համալրում SS գործիքների կիրառմամբ մասնագիտությունների համար: Գրադարանից դասախոսների շատ քիչ մասն է օգտվում: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ գրադարանի համալրումը որպես առաջնահերթություն դիտարկված է հաջորդ ՌԾ-ում ուշադրության կենտրոնում:

Բուհում գործում է ցուցասրահ, որտեղ ուսանողները և դասախոսները հնարավորություն ունեն անվճար ցուցադրել իրենց աշխատանքները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների շրջանում արտադասային շփումների համար անհրաժեշտ ֆիզիկական միջավայրի կարիք կա:

Նախորդ հավատարմագրման գործընթացի բարելավման պլանում ՀԳՊԱ-ն որոշակի դրական կանխատեսումներ էր անում կապված նրա հետ, որ բուհի կազմակերպաիրավական կարգավիճակը ՊՈԱԿ-ից Հիմնադրամ փոխվելով հնարավորություն է ստեղծվում վարել ֆինանսական ճկուն քաղաքականություն և բազմազանեցնել եկամուտները: ՀԳՊԱ-ում ստեղծվել է ստեղծագործական և նախագծային պրոդուկտների առևտրայնացման պատասխանատուի հաստիքը: Առևտրայնացման ուղղությամբ տարված աշխատանքները մինչ այժմ սահմանափակվել են հնարավորությունների ուսումնասիրությամբ և արդյունքում ստեղծվել է «ՀԳՊԱ-ի ստեղծագործական և նախագծային արդյունքների առևտրայնացման քաղաքականություն» փաստաթուղթը, որտեղ նախանշված են առևտրայնացմանը նպաստող քայլերը: Նշված քաղաքականության, ինչպես նաև ռազմավարական ծրագրի կամ նախորդ հավատարմագրման բարելավման պլանի շրջանակներում սահմանված չեն եկամուտների բազմազանեցման, հովանավորների ձեռքբերման պատասխանատուներ:

7.2 ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

Բուհի ֆինանսական ռեսուրսների՝ ըստ 2021թ-ի տարեկան հաշվետվության, 26.8%-ը ձևավորվում է ուսանողական վարձավճարներից, 3.8%-ը նախապատրաստական դասընթացներից, 54.0%-ը՝ պետբյուջեի հատկացումներից, մոտ 0.9%-ը՝ այլ աղբյուրներից, իսկ 14.2%-ը եղել է նախորդ տարվա մնացորդ: Ընդ որում՝ արվեստի հանրային բուհերի շարքում ՀԳՊԱ-ն պետությունից ամենաքիչ գումար ստացող բուհն է: Բուհի դրամական միջոցների ծախսերը կատարվում են ըստ հետևյալ ոլորտների. աշխատավարձ՝ մոտ 80%, կրթաթոշակներ՝ մոտ 2.9 %, գործուղման ծախսեր՝ մոտ 0.1% և այլն:

Ակադեմիայի ֆինանսական միջոցները բաշխվում են տարբեր ստորաբաժանումների կարիքներից ելնելով: Յուրաքանչյուր ֆինանսական տարվան ընդառաջ ստորաբաժանումները ներկայացնում են իրենց կարիքները ղեկավար կազմին, որն էլ կազմում է ֆինանսական նախահաշիվը: Հոգաբարձուների խորհրդին ներկայացվում է նախորդող ֆինանսական տարվա բյուջեի կատարողականը: ՀԳՊԱ երկու մասնաճյուղերի ֆինանսական նախահաշիվներն առանձին են կազմվում:

Բուհն ավելացրել է հետազոտական կենտրոնին հատկացվող տարեկան գումարը, սակայն այդ գումարի բաշխումները հիմնականում ներկայացված չեն և չկան այդ ծախսերը վկայող, կամ կենտրոնի բյուջեի բարելավումը գնահատող փաստեր:

Պետք է նշել, որ վերջին երկու տարվա ընթացքում աշխատավարձին բաժին ընկնող տոկոսային մասնաբաժինը նվազել է:

Ռազմավարական ծրագիր կազմելու զուգընթաց ՀԳՊԱ-ն ռազմավարական ուղղություններով միջոցառումների համար ֆինանսներ չի առանձնացնում, այսինքն՝ ռազմավարական բյուջետավորում չի իրականացնում: Ըստ այդմ էլ ըստ ռազմավարական ուղղությունների ֆինանսական ռեսուրսների օգտագործման, մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և բարելավման մեխանիզմներ չեն գործում: Այս խնդիրը արձանագրվել էր նաև նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցում, ինչը բարելավման պլանում համապատասխան ուշադրության չի արժանացել: Փորձագիտական խումբը՝ բուհի ներկայացուցիչների հետ հանդիպումների ժամանակ պարզեց, որ, օրինակ՝ պրոֆեսորադասախոսական կազմի կատարելագործմանը ուղղված ֆինանսական միջոցների պլանավորումը դեռևս խնդրահարույց է:

ՀԳՊԱ-ն զգալի ներդրումներ է արել միջազգային դրամաշնորհային ծրագրերից եկած ֆինանսական ռեսուրսներից՝ ուսումնական լաբորատորիաները նոր սարքավորումներով ապահովելու ուղղությամբ: Օրինակ՝ բուհում առկա են նորագույն 3D տպիչներ՝ ձեռք բերված Էրազմուս + Ինքլյուժըն ծրագրի շրջանակներում: Անձնակազմը փնտրում է դրանք ստեղծագործական աշխատանքի մեջ ներառելու ուղիներ:

Գյումրու մասնաճյուղում արևային էներգիայի ստացման պանելների տեղադրում է իրականացվել դրամաշնորհի միջոցով, որի արդյունքում հոսանքի ծախսերի խնայողությունները ուղղվում են բյուջեով նախատեսված այլ գործողությունների իրականացմանը:

7.3 ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

Կրթական ծրագրերի նպատակների իրականացման գլխավոր ռեսուրսը պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքն է: ՀԳՊԱ-ի ծախսերի մեծ մասն ուղղվում է աշխատավարձերի վճարմանը: Ինչպես նշել ենք, բուհը դասախոսների մասնագիտական (ուսումնամեթոդական, հետազոտական), լեզվական, ՏՏ կարողությունների զարգացման ուղղությամբ ֆինանսական միջոցների համալիր պլանավորում չի իրականացնում, ինչը ևս կրթական ծրագրերի իրականացման ու շարունակականության ապահովման էական հանգամանք է. որոշ բաղադրիչների ուղղությամբ, ֆինանսական միջոցներ, իհարկե հատկացվում են (օտար լեզուների ֆակուլտատիվ պարապմունքներ): Կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող մյուս էական հանգամանքը ռեսուրսների և ենթակառուցվածքի ուղղությամբ ծախսերն են, որոնց մի մասը (օրինակ՝ տեխնիկայի ձեռքբերում) կատարվում է դրամաշնորհային ծրագրերի

շրջանակներում, մյուս մասը (նյութերի ձեռքբերում, վերանորոգում և այլն) հատկացնում է բուհը: Հարկ է նշել, որ վերանայված կրթական ծրագրերի նկարագրերում ներկայացված են այդ ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական, ինչի հիման վրա պետք է տեղի ունենան անհրաժեշտ պլանավորումները: Անհրաժեշտ գրականությունը ներկայացված է դասընթացների նկարագրերում:

Ընդհանուր առմամբ մասնագիտական կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող ֆինանսական ռեսուրսների բաշխումը կատարվում է հետևյալ կերպ. ամբիոնների կողմից ներկայացված հայտերը համաձայնեցվում են պրոռեկտորների հետ, բուհի առաջնահերթությունների հիման վրա, նախօրոք հաշվված եկամուտները, կատարվելիք ընդհանուր ծախսերը հաշվի առնելով կազմվում է բյուջեի նախագիծ, որը քննարկվում է ԳԽ-ում, հետո ներկայացվում բուհի Հոգաբարձուների խորհրդի հաստատմանը:

7.4 ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ բուհի ենթակառուցվածքային հնարավորությունները՝ հիմնականում տարածքային առումով որոշ դեպքերում հնարավորություն չեն տալիս կրթական պահանջներին համապատասխան, ուսանողների համար հարմարավետ պայմաններում իրականացնել տվյալ կրթական ծրագիրը. առաջին հերթին ի նկատի ունենք դիզայնի և կիրառական արվեստի ֆակուլտետի ենթակառուցվածքը, որտեղ ուսումնական-լաբորատոր տարածքի նեղությունն ակնառու էր:

Որպես դրական փաստ կարելի է նշել, ուսանողների թվի ավելացման հետ կապված որոշ արվեստանոցներում տարածքի մեծացումն ու սարքավորումների արդիականացումը: Օրինակ տպագրական արվեստանոցում նկուղային հարկի օգտագործումն ու կահավորումը բավականին մեծացրել է ՄԿԾ-ի իրականացման հնարավորությունները: Սակայն նույնը չենք կարող ասել հատկապես հագուստի մոդելավորման արվեստանոցի համար, որը բավականին փոքր է: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ արվեստանոցներում նորագույն սարքավորումների կարիք կա: Ուսանողները շեշտադրում են նաև բնորդների կազմի թարմացման անհրաժեշտությունը:

Գրադարանը որոշակի նվիրատվություններ է ստանում, այդ թվում՝ դեսպանատներից: Նաև հարկ է նշել, որ օրինակ գեղանկարչության, քանդակագործության կրթական ծրագրերի համար պահանջվող գրականությունը բավականին շատ է, սակայն դիզայնի մասնագիտության կրթական ծրագրերին վերաբերող գրականության պակաս կա: Ակադեմիայում առկա են ֆինանսական խնդիրներ գրադարանային թվային հարթակների և ամսագրերի տվյալների բազաներին միանալու հետ կապված: Ուսանողները հիմնականում ուղղորդվում են դեպի բաց հասանելիությամբ նյութերին:

Որոշ կրթական ծրագրերի համար անհրաժեշտ նյութեր ձեռք են բերում ուսանողները: Օրինակ՝ «Գեղանկարչություն» կրթական ծրագրի ուսանողներն իրենք են ձեռք բերում

ներկերը (փոքր զեղչերով)։ Ցուցասրահի առկայությունը հնարավորություն է տալիս ուսանողների և դասախոսների ստեղծագործական գործունեության ցուցադրման ու գնահատման համար։

Բյուջեով չի նախատեսվում ֆինանսներ Արտաքին կապերի բաժնին՝ դրամաշնորհային ծրագրերից դուրս ծախսեր կատարելու համար՝ ուղղված բուհի միջազգայնացմանը։ ՀԳՊԱ-ում էլեկտրոնային փոստի միասնական համակարգ չկա։

7.5 ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ։

ՀԳՊԱ-ում մտից փաստաթղթերը մուտքագրվում են կադրերի և ընդհանուր բաժին, որտեղից այն փոխանցվում է ռեկտորին, ով էլ տնօրինում է փաստաթղթի հետ կապված աշխատանքների հետագա ընթացքը։ Ներքին գրավոր հաղորդակցությունը կարգավորվում է ներքին իրավական ակտերով։ Ըստ սահմանված դեպքերի՝ դասախոսների, ուսանողների, ներքին այլ շահակիցների դիմումները, զեկուցագրերն ուղղվում են ռեկտորին, պրոռեկտորներին, դեկաններին, ովքեր էլ տնօրինում են դրանց հետ կապված աշխատանքների հետագա ընթացքը։

Նախորդ հավատարմագրումից հետո փաստաթղթաշրջանառության և տեղեկատվության հավաքման էլեկտրոնային համակարգի ստեղծումը ՀԳՊԱ-ի առաջնահերթություններից էր։ Էլեկտրոնային կառավարման համակարգի ներդնումն ու տեղեկատվության կառավարման զարգացումը բուհի զարգացման 2017-2021թթ. ռազմավարական ծրագրի խնդիրներից էր։ Այդ առնչությամբ նկատենք, որ բուհում գործարկվել է տվյալների մուտքագրման, պահպանման և օգտագործման UMS համակարգը, որին մուտք ունեն դեռևս ուսումնամեթոդական մշակումների և ուսումնական գործընթացի հաշվառման բաժինը և երկու ֆակուլտետների դեկանատները։ ՀԳՊԱ-ն ձեռնարկել է կառավարման և փաստաթղթաշրջանառության Mulberry համակարգի ներդնումը, որի ուղղությամբ բուհում անց են կացվել փուլային վերապատրաստումներ։ Ըստ ինքնավերլուծության զեկույցի՝ համակարգի ամբողջական գործարկումը պլանավորվում է 2022թ-ի ընթացքում։

Հաշվի առնելով, որ փաստաթղթաշրջանառության գոյություն ունեցող տարբեր համակարգեր կան՝ ուսանողների գնահատականների, ՄՈԳ-ի կազմման, փաստաթղթերի տարածման, տվյալների սինխրոնիզացման խնդիր կա, քանի որ դրանք կապակցված չեն, և չեն գործում մեկ ընդհանուր տվյալների բազա ունեցող համակարգի մեջ։

Նախորդ հավատարմագրումից հետո ՀԳՊԱ կայքը բավականին բարելավվել է։ Այն բավականին տեղեկատվություն է պարունակում և հասանելիություն ապահովում արտաքին շահակիցներին՝ հաշվետվությունների, կանոնակարգերի և ՄԿԾ-ների վերաբերյալ։ Փորձագիտական խմբի հանդիպումների ժամանակ պարզ դարձավ, որ ներքին շահակիցներն էլ են հաճախ օգտվում կայքի տեղեկատվությունից։ Ներկայումս ՀԳՊԱ-ում համալսարանական էլփոստի համակարգ չկա։

7.6 ՄՈՒՀ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

Առողջապահական նկատառումներով բուհում գործում է բուժկետ՝ առաջին բուժօգնության համար: Վերջինս պարբերաբար ապահովվում է առաջին բուժօգնության համար անհրաժեշտ դեղորայքով: Բուժկետի աշխատակցի ծանրաբեռնվածությունը մոտ է կես դրույքին: Հարկ է նշել, որ ուսանողները գոհ են մատուցվող ծառայությունից: Հոգեբանի ծառայություն չկա, և ուսանողները նման աջակցություն ստանալու համար դիմում են դեկանին կամ ամբիոնի վարիչին:

Անվտանգության պահպանման համար բուհում կա պարետային ստորաբաժանում և անցակետ: Ունեն հակահրդեհային բավարար միջոցներ: Որոշ լաբորատորիաներում օդափոխման համակարգը բավարար չէ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ լաբորատորիաներում աշխատելիս ուսանողներին ներկայացվում են անվտանգության կանոնները:

Սննդի ծառայությունների մատուցման համար բուհում չկա առանձնացված տարածք: Հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար արդյունավետ կրթություն ապահովելուն միտված ձեռք են բերվել նյութական ռեսուրսներ, մշակվել է ռազմավարություն բուհում ներառական միջավայրի շարունակական ապահովման նպատակով: Վերջիններս կատարվել են Էրազմուս պլյուս INCLUSION ծրագրի շրջանակներում:

ՀԳՊԱ-ում սովորում են կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող 37 ուսանողներ: Այդուհանդերձ ակադեմիայի ենթակառուցվածքները դեռ հարմարեցված չեն տեղաշարժման խնդիրներ ունեցող ուսանողների համար, չկան համապատասխան թեքահարթակներ:

7.7 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Ուսանողներին և դասախոսներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիությունը, հասանելիությունը և արդյունավետությունը գնահատելու նպատակով ՀԳՊԱ-ի Որակի ապահովման կենտրոնը պարբերաբար հարցումներ է անցկացնում ուսանողների և դասավանդողների շրջանում: Նաև ֆոկուս խմբային հանդիպումներ են կազմակերպում ներքին շահակիցների հետ: Ստացված տվյալների հիման վրա, կրթական ծրագրերի պահանջարկի մեծացման, ինչպես նաև դրամաշնորհային ծրագրերի միջոցով սանիտարահիգիենիկ պայմանները բարելավվել են, վերազինվել են լաբորատորիաներ, ձեռք են բերվել դյուրակիր համակարգիչներ: 2021թ.-ի հարցումների արդյունքում սանիտարահիգիենիկ պայմանները բարելավվել են 2018-2019թթ. համեմատ:

Հարկ է նշել, որ հարցումների պարբերականությունը կանոնակարգված չէ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը գտնում է, որ ընդհանուր առմամբ բուհի առկա ռեսուրսները թույլ են տալիս իրականացնելու կրթական ծրագրերը և ապահովել բուհի

կայուն գործունեությունը: Այդուհանդերձ, չնայած առկա կրթական ռեսուրսներին՝ գործընթացների շարունակականության ինչպես նաև ժամանակակից պահանջները հիմնականում ապահովելու նպատակով, այնուամենայնիվ, որոշ արվեստանոցներ և լաբորատորիաներ տեխնիկական միջոցներով վերահագեցման անհրաժեշտություն ունեն: Ավեստանոցների և լաբորատորիաների համալրումն ու վերազինումը կնպաստի ՄԿԾ-ների որակի շարունակական բարելավմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ՀԳՊԱ-ի կրթական ծրագրերի իրականացման գործընթացում մեծ դեր ունի ցուցասրահը, քանի որ հնարավորություն է ստեղծվում ուսանողներին ցուցադրել կրթական վերջնարդյունքները:

Փորձագիտական վերլուծությունների արդյունքում պարզ դարձավ, որ գրադարանային ռեսուրսները և բնորդների կազմը համալրման կարիք ունեն: Նշվածները կարևոր դերակատարություն ունեն կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման և վերջնարդյունքների ապահովման տեսանկյունից:

Ուսանողների համար արտադասային շփումների ֆիզիկական միջավայրի ստեղծումը կնպաստի բուհում բարոյահոգեբանական մթնոլորտի էլ ավելի լավացմանն ու, ինչու ոչ, նորանոր ստեղծագործական գաղափարների գեներացմանը:

Եկամուտների ավելի քան 90 տոկոսը պետական հատկացումներից և ուսման վարձավճարներից ստացվելու ցուցանիշը ցույց է տալիս ՀԳՊԱ-ի մեծ կախվածությունը պետական հատկացումներից ու ուսման վարձավճարներից և ընդգծում եկամուտների բազմազանեցման գործընթացներին առավել մեծ ուշադրություն դարձնելու անհրաժեշտությունը: Ֆինանսական ներհոսքի աղբյուրների բազմազանեցման և արտաքին աղբյուրների մասնաբաժնի ավելացման, ինչպես նաև սովորողների նախագծերի, ավարտական և մագիստրոսական աշխատանքների հեղինակային իրավունքների և առևտրայնացմանն ուղղված հետագա քայլերը կամրապնդեն բուհի ֆինանսական կայունությունը:

Ծախսերի 80 տոկոսն աշխատավարձերին ուղղելու ցուցանիշն էլ ցույց է տալիս բուհի միջոցների խիստ սակավությունը՝ զարգացման միտված ծրագրեր իրականացնելու տեսանկյունից, քանի որ կարող է սահմանափակվել այլ առանցքային ոլորտներում ներդրումներ կատարելու հնարավորությունը:

Փորձագիտական խումբը դրական հանգամանք է համարում միջազգային դրամաշնորհային ծրագրերին մասնակցությունը, որոնց միջոցով ռեսուրսների զգալի համալրում է կատարվել բուհում: Բայց ներկա պահին նմանատիպ ծրագրերի մեջ չլինելու հանգամանքը ռիսկային է դարձնում այդքան անհրաժեշտ տեխնոլոգիական վերազինման հեռանկարը:

ՀԳՊԱ-ն ձեռնարկել է Mulberry համակարգի ներդնումը, որի ամբողջական գործարկումը կնպաստի փաստաթղթաշրջանառության գործընթացի արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև ստորաբաժանումների միջև հաղորդակցական կապերի ամրապնդմանը: Տվյալների հավաքագրման և օգտագործման UMS համակարգի

ինտերֆեյսների հետագա ավելացումն էլ հնարավորություն կտա ավելի մեծ թվով շահակիցների օգտվել տվյալների հասանելիությունից:

ՀԳՊԱ կայքը բավականաչափ ապահովում է տեղեկատվության հասանելիություն՝ հաշվետվությունների, կանոնակարգերի և ՄԿԾ-ների վերաբերյալ: ՀԳՊԱ-ում համալսարանական էլփոստի համակարգի բացակայությունը (ինչը թույլ կտար անհատական հաշիվներ ունենալ ուսանողների համար), կարող է խոչընդոտ հանդիսանալ ՀԳՊԱ-ից դուրս որպես ուսանող գրանցվելու և որևէ ծառայությունից օգտվելու համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրումից հետո ՀԳՊԱ-ում արդիականացվել են որոշ լաբորատորիաներ, հնարավորինս թարմացվում է ռեսուրսային բազան՝ ըստ վերհանված կարիքների, ընդհանուր առմամբ առկա է կրթական ծրագրերի իրականացման անհրաժեշտ միջավայր, էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման աշխատանքները շարունակական են՝ ընդգրկելով ավելի շատ գործընթացների համակարգված փաստաթղթավորում, ուսանողների և անձնակազմի համար առկա է անվտանգ և ապահով միջավայր՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՀԳՊԱ-ն բավարարում է չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀԳՊԱ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

8.1 ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

ՀԳՊԱ գործունեության թափանցիկությանը և հաշվետվողականությանը առնչվող դրույթները ամրագրված են 2017-2021թթ. ՌԾ-ի նպատակ 5-ի խնդիր 5.3-ում: Որպես նպատակ սահմանվել է՝ հասարակայնության հետ կապերի ակտիվացումը և գործունեության թափանցիկության ապահովումը: Համաձայն որի, ակադեմիայի գործունեության մասին տեղեկատվությունը հրամապարակվում է պաշտոնական կայքէջի և այլ տեղեկատվության տարածման աղբյուրների միջոցով:

Համաձայն ինքնավերլուծության՝ ակադեմիայի գործունեության հաշվետվողականությունը ՀՀ կառավարության առջև ՀԳՊԱ-ն ապահովում է ՀՀ ԿԳՄՄՆ-ին սահմանված ձևաչափերով հաշվետվությունների և այլ տեղեկությունների տրամադրման, ինչպես նաև ՀԳՊԱ-ի հոգաբարձուների խորհրդի հաստատմանը ներկայացվող ռեկտորի տարեկան հաշվետվությունների միջոցով:

ՌԾ-ի հետ համահնչությունը պահպանելով՝ ստորաբաժանումները ներկայացնում են եռամսյակային հաշվետվություններ: Բոլոր ստորաբաժանումների իրականացրած կամ

իրականացվող աշխատանքների և միջոցառումների մասին տեղեկությունները տարածվում են ՀԳՊԱ-ի պաշտոնական կայքէջի և սոցիալական էջերի միջոցով:

Ամբիոններից հաշվետվություններն ուղղվում են ֆակուլտետի խորհուրդ, պրոռեկտոր, գիտական խորհուրդ, ռեկտոր, վերջինիս էլ իր հերթին տարեկան հաշվետվություն է ներկայացնում հոգաբարձուների խորհրդին և ԿԳՄՍ-ին: Ռեկտորի տարեկան հաշվետվությունը հրապարակվում է ՀԳՊԱ-ի պաշտոնական կայքէջում: Այդուհանդերձ, փորձագիտական խմբի դիտարկումները ցույց են տալիս, որ այդ հաշվետվություններն առավելապես նկարագրական հենք ունեն և ոչ միշտ են անդրադառնում թերակատարված գործընթացների պատճառներին և հետագա վերապլանավորմանը:

8.2 ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելությունը հասարակությանը:

ՀԳՊԱ-ն իր պաշտոնական կայքի միջոցով հասանելի է դարձնում հաստատության ընթացակարգերը, ձեռնարկները և գործունեության վերաբերյալ տեղեկատվական նյութերը: Բացի կայքէջից ակադեմիայի համար տեղեկատվության տարածման այլ գործիքներ են կիրավում, ինչպիսիք են՝ Facebook, Instagram, Twitter, Youtube սոցիալական ցանցերը ու ԶԼՄ-ները: Վերջին շրջանում բավականին ակտիվացել են ստորաբաժանումների միջոցառումների մասին տեղեկատվության հրապարակումները ՀԳՊԱ-ի կայքէջում և ֆեյսբուքյան էջում:

Որպես հաշվետվողականության մեխանիզմներ դիտարկվում են ակադեմիայի ուսանողների և դասախոսների անհատական և խմբային ցուցահանդեսները, բակալավրական ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի բաց պաշտպանությունները, ցուցահանդեսների կազմակերպումը և այլն: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ այս միջոցառումներին ներկա են լինում մեծ թվով ունկնդիրներ, ինչպես նաև հրավիրվում են գործատուներ: Սակայն, հարկ է նշել նաև, որ գործածվող մեխանիզմների համապարփակ գնահատում բուհի կողմից դեռևս չի իրականացվել:

8.3 ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

Ըստ ՀԳՊԱ ինքնավերլուծության՝ հասարակության հետ հետադարձ կապի ձևավորման հիմնական մեխանիզմ են համարվում պաշտոնական կայքէջը և ֆեյսբուքյան էջը, որոնց միջոցով հաստատությունը փորձում է ապահովել հասարակության հետ կապի անընդհատությունը՝ արձագանքելով ստացվող նամակներին և հարցումներին:

Ակադեմիայում առկա է մեդիայի հետ կապի և սոցիալական էջերի պատասխանատուի հաստիք: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ հասարակության կողմից ստացվող արձագանքներին և հարցումներին արձագանքում է մեդիայի հետ կապերի պատասխանատուն կամ անհրաժեշտության դեպքում հարցումը ուղարկվում է այլ ստորաբաժանում:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ակադեմիային կից «Ալբերտ և Թովէ Բոյաջյան» ցուցասրահը նույնպես ընկալվում է ՄՈՒՀ-ի կողմից որպես հետադարձ

կապի ապահովման մեխանիզմ։ Այցելուների հետ հետադարձ կապն ապահովվում ցուցասրահի այցելուների գրքի միջոցով։

8.4 ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ։

Որպես հասարակությանը կրթական, տեղեկատվական և խորհրդատվական ծառայություններ՝ ՀԳՊԱ-ում կազմակերպվում են ցուցահանդեսներ, իրականացվում են ֆակուլտատիվ և վճարովի նախապատրաստական դասընթացներ։

Նախապատրաստական դասընթացները կազմակերպվում են վճարովի հիմունքներով բոլոր կիրառական մասնագիտությունների ուղղությամբ։ Դասընթացների հիմնական նպատակն է նպաստել պոտենցիալ դիմորդների անհրաժեշտ գիտելիքի և կարողությունների ձեռքբերմանը։ Հատկանշական է, որ նախապատրաստական խմբերում սովորողների թվի աճ է գրանցվում տարեցտարի և այդտեղից դեպի ՀԳՊԱ բակալավրիատ դիմորդների հոսքը 2021թ.-ին հասել է 87%-ի։

Ըստ ինքնավերլուծության՝ ՀԳՊԱ-ում անվճար հիմունքներով իրականացվում են ֆակուլտատիվ (անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, իտալերեն, իսպաներեն), իսկ օտարերկրյա ուսանողների համար նաև հայերեն դասընթացներ, որոնք միտված են բարձրացնելու ՀԳՊԱ-ի ուսանողների, պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի օտար լեզուների իմացության մակարդակը։

Նախորդ ռազմավարական շրջափուլի համար ՀԳՊԱ-ն հանձն էր առել իրականացնել միջազգային ցուցահանդես, որը տեղի չի ունեցել։ Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ սակավ են ակադեմիայի կողմից ՀՀ մարզերում ազգային մշակույթի հանրահռչակմանն ուղղված կրթամշակութային միջոցառումները։

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի գիտխորհրդի որոշմամբ հրատարկվում է տարեգիքը, որը նույնպես դիտարկվում է որպես հասարակությանը գիտելիքի փոխանցման մեխանիզմ։ Տարեգիրքը Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի պաշտոնական գրախոսվող հանդեսն է, որի նպատակն է շրջանառել հայ և համընդհանուր արվեստի պատմության և տեսության, արվեստաբանության պատմության, կերպարվեստի, դիզայնի և դեկորատիվ-կիրառական արվեստի, հայագիտության և հումանիտար գիտությունների շուրջ իրականացված ակադեմիական բարձրորակ ուսումնասիրություններ՝ հոդվածների, հաղորդումների, թարգմանությունների և մատենագիտական լրատվության տեսքով։ Այն նպատակ ունի խթանել Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի հետազոտական գործունեությունը, նպաստել ուսանողների և երիտասարդ հետազոտողների մասնագիտական աճին, հրապարակել և տարածել ակադեմիայի հետազոտական գործունեության արդյունքները։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում բուհում գործող ներքին և արտաքին հաշվետվողականության համակարգը, որի միջոցով բոլոր մակարդակներում պատրաստվում են հաշվետվություններ, որոնք վեր են հանում բուհում

առկա դրական ու բարելավման միտված ուղղությունները: Թեև հաշվետություններն արտացոլում են բուհում առկա իրավիճակը, այնուամենայնիվ փորձագիտական խումբը նշում է, որ հաշվետվությունների առավել վերլուծական բնույթը կնպաստի բուհում առկա տարբեր գործընթացների վերաբերյալ խնդիրների վերհանմանը որակի շարունակական բարելավմանը:

Դրական է, որ բուհի կայքէջի և ֆեյսբուքյան էջի միջոցով ապահովվում է գործունեության և ընթացակարգերի թափանցիկությունը: Այդ տեսակետից կայքէջի բարելավման շնորհիվ այն պարունակում է բավականաչափ տեղեկատվություն, որից օգտվում են արտաքին և ներքին շահակիցները: Փորձագիտական խումբը նշում է նաև, որ հաստատության կողմից PR ռազմավարության սահմանումը կհստակեցնի կիրառվող մեխանիզմների թիրախները և կհատկորոշի հետագա գործունեության ոլորտները:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ հաստատությունը շարունակաբար մեխանիզմներ է ներդնում՝ հնավարություն տալու մշակութային արժեքներ փոխանցել հասարակությանը ցուցադրությունների, ցուցահանդեսների միջոցով, որոնք բաց են հասարակության համար: Այս գործընթացը նպաստում է հասարակությանը արժեքների փոխանցմանը, ինչպես նաև բուհի տեսանելիության բարձրացմանը: Փորձագիտական խումբը գտնում է նաև, որ հաստատության կողմից կիրառվող գործիքների արդյունավետության առավել համակողմանի գնահատումը կնպաստի ըստ ժամանակակից պահանջների դրանց փոփոխմանը և ՀԳՊԱ գործընթացների վերաբերյալ թափանցիկության բարձրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՀԳՊԱ-ում առկա է հաշվետվողականության համակարգ, ակադեմիան փորձում է իրականացվող գործընթացները թափանցիկ դարձնել հասարակությանը համապատասխան հարթակների միջոցով, գործում են հետադարձ կապի մեխանիզմներ, առկա են հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցման մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՀԳՊԱ-ն բավարարում է չափանիշ 8-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀԳՊԱ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

9.1 Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

ՀԳՊԱ-ի 2017-2021թթ. ռազմավարական ծրագրի նպատակադրումներից մեկը վերաբերում է բուհի միջազգայնացմանն ու արտաքին կապերի զարգացմանը: 2016-2020թթ. մշակված է եղել «Միջազգայնացման ռազմավարություն»: Ժամկետը ավարտվելուց հետո նորը չի մշակվել: Փորձագիտական այցի ժամանակ պարզվեց, որ միջազգայնացման նոր ռազմավարությունը բխելու է ՀԳՊԱ-ի զարգացման նոր ռազմավարական ծրագրից: ՀԳՊԱ-ի զարգացման 2017-2021թթ. ռազմավարական ծրագրում, Միջազգայնացման ռազմավարության մեջ դրված խնդիրների ու պլանավորված գործողությունների և ՀԳՊԱ-ի ամենամյա հաշվետվությունների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրված խոշոր խնդիրները զգալի մասով չեն լուծվել, պլանավորված գործողությունների մի մասը կա՛մ չի կատարվել, կա՛մ թերակատարվել է:

Այսպես, ՀԳՊԱ-ն իր զարգացման 2017-2021թթ. ռազմավարական ծրագրի՝ «Արտաքին կապերի ընդլայնում և շարժունության խթանում» նպատակի իրականացման միջին արդյունավետությունը գնահատել է 68,20%: Սույն զեկույցի 1-ին և 2-րդ չափանիշների շարադրանքում անդրադարձ է կատարվել կատարողականի ցուցիչների նման ձևակերպումների, դրանց կշիռների համեմատելիության հետ կապված հարցերի: Միջազգայնացման նպատակի արդյունքի գնահատման ցուցիչների և դրանց կիրառման հետ կապված ևս առկա են խնդրահարույց կողմեր: Օրինակ.

- «Արտաքին ռեսուրսների ներգրավում» գործողության ներքո 2017-2021թթ. համար պլանավորված է եղել արտաքին դրամաշնորհային 10 ծրագիր, իրականացվել է 11-ը, ուստի նշված գործողության կատարողականը գնահատվել է 113 %, իսկ այս 113 %-ը մտցվել է ընդհանուր նպատակի գնահատման միջինացված հաշվարկի մեջ: Հատկանշական է, որ 11 դրամաշնորհային ծրագրի մեջ ՀԳՊԱ-ն հաշվարկել է ոչ միայն ERASMUS+ կարողությունների զարգացման 2 ծրագիրը (Inclusion, որի համակարգողն է ՀԳՊԱ-ն և որը մեկնարկել է 2016թ. և C3QA-ը, որին ՀԳՊԱ-ն որպես գործընկեր է մասնակցել), այլ նաև ERASMUS+ շարժունության բոլոր 9 ծրագրերը, որոնց շրջանակներում ՀԳՊԱ-ն գործուղել և ընդունել է ուսանողների ու դասախոսների:
- Շարժունության վերոնշյալ 9 ծրագրերը՝ նույն ցուցանիշը, որ հաշվարկվել էր «Արտաքին ռեսուրսների ներգրավում» գործողության կատարողականի մեջ, հաշվարկված է նաև «Օտարերկրյա ուսանողների միջավայր ինտեգրման և արդյունավետ ուսումնառության համար պայմանների զարգացում» գործողության կատարողականի գնահատման մեջ, ըստ որի էլ ստացվել է, որ արտագնա ուսանողական շարժունության պլանը կատարվել է 90 տոկոսով, արտագնա դասախոսական շարժունության պլանը՝ 120 տոկոսով, ներգնա ուսանողական շարժունությունը՝ 80 տոկոսով, ներգնա դասախոսական շարժունությունը՝ 100 տոկոսով: Փաստորեն նույն իրողությունը գնահատվել է 1-ից ավելի անգամ:
- Քանակական որոշ ցուցիչներով հաշվարկված կատարողականի որակական բնութագիրը ներկայացված, վերլուծված չէ, և որակական որևէ ցուցիչով այս նպատակը չի գնահատվել, այսինքն՝ չի գնահատվել, օրինակ, թե շարժունությունից ինչ է ստացել բուհը: Օրինակ՝ օտար լեզուների իմացության բարձրացման նպատակով օտար

լեզուների ֆակուլտատիվ դասընթացներ իրականացնելու պլանը կատարվել է 94 տոկոսով (706 մասնակից՝ 750 պլանավորվածի դիմաց), մինչդեռ արդյունավետությունը, դասընթացների ազդեցությունը կրթության որակի վրա, չի գնահատվել, իսկ փորձագիտական այցից պարզ է դարձել, որ ներքին շահակիցները խնդրահարույց են համարել օտար լեզվի դասավանդումը բուհում: Օտարերկրյա բուհերի հետ համագործակցության պայմանագրերի և հուշագրերի կնքման պլանն էլ կատարվել է 120 տոկոսով (32 պայմանագիր կամ հուշագիր պլանավորված 30-ի դիմաց), մինչդեռ այդ գործարքների որակական բաղադրիչները հաշվետվություններում մասամբ են արտացոլված, ուստի առկա են շատ բուհեր, որոնց հետ ձեռք բերված պայմանավորվածությունները դեռևս թղթի վրա են:

- Քանակական որոշ ցուցիչների արժեքները մինիմալիստական են: Օրինակ՝ ռազմավարական մի ողջ շրջափուլի համար ՀԳՊԱ-ն պլանավորել էր ընդամենը դասախոսական 5 արտագնա և 3 ներգնա շարժունություն:

Միջազգայնացման նպատակին տանող որոշ «խոշոր» գործողություններ այդպես էլ չեն կատարվել: Օրինակ՝ ՀԳՊԱ-ն չի իրականացրել և ոչ մի համատեղ կրթական ծրագիր, ոչ մի օտարալեզու կրթական ծրագիր: Փորձագիտական այցից էլ պարզ դարձավ, որ համատեղ կամ օտարալեզու կրթական ծրագիր անելու հավանականությունը մոտ ապագայում ցածր է, ինչը, ի թիվս այլ հանգամանքների, պայմանավորված է նաև դասախոսական կազմի օտար լեզուների իմացության ցածր մակարդակով: Նույնը վերաբերում է միջազգային գիտաժողովներին և ցուցահանդեսներին. պլանավորված 5 միջոցառումից և ոչ մեկը չի կատարվել, իսկ մոտ ապագայի հնարավորությունները դեռևս խիստ անորոշ էին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագրի (որպես համակարգող) դիմելու որոշակի պլաններ կամ մտադրություններ ՀԳՊԱ-ն դեռևս չունի:

Միջազգայնացման ռազմավարության մեջ 2017, 2018 և 2019 թվականների համար գործողություններ պլանավորված չեն: Համաձայն բուհի մոտեցման՝ այս ռազմավարության գործողությունների պլանում նշված են ոչ թե գործողությունների ժամկետները, այլ դրանց իրականացման վերջնաժամկետները: Այդուհանդերձ, այս կերպ նպատակադրումների ընթացքն ու շարունակականությունը չի արտացոլվում, ինչն էլ դժվար է դարձնում ռազմավարության ընթացիկ գնահատումը[10]: Այստեղ երբեմն առկա են արդյունքի գնահատման որոշ ցուցիչներ (փոխանակմանը մասնակցած ուսանողների քանակի աճ առնվազն 40 տոկոսով 2020թ. համար՝ 2016թ. համեմատ), որոնց գնահատման հիմքերն են բացակայում:

Արտաքին կապերի բարելավման նպատակով հստակեցվել և վերանայվել են ՀԳՊԱ-ի արտաքին կապերի բաժնի կանոնակարգը ինչպես նաև ուսանողների ակադեմիական շարժունության ու օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգերը:

[10] Միտքը վերաշարադրվել է հաստատության դիտարկումների քննարկման արդյունքում:

Գործող կրթական ծրագրերի միջազգային բենչմարքինգ է կատարվել: Արդյունքում 2021-2022 ուսումնական տարվանից ներդրվել է բակալավրի 8 լրամշակված կրթական ծրագիր: Բայց քանի որ բակալավրի 1-ին տարվանն են վերաբերում այս ծրագրերը, ուստի նրանց ուղղությամբ շարժունություն դեռևս տեղի չի ունենում:

Փորձագիտական խմբի վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ բուհում առկա չէ միջազգայնացման տեսլական: Չկան հստակ պլանավորված քայլեր, որոնց կատարման արդյունքում կունենան միջազգայնացմանը նպաստող միջավայր:

9.2 ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

ՀԳՊԱ-ի արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման աշխատանքները համակարգում և իրականացնում է արտաքին կապերի բաժինը՝ երեք հաստիքներով. բաժնի ղեկավար և 2 աշխատակիցներ՝ ավագ մասնագետ և մասնագետ: Արտաքին կապերի բաժնի գործունեությունը կարգավորվում է կանոնակարգով, ըստ որի բաժինը հաշվետու է ռեկտորին և ուսումնագիտական գծով պրոռեկտորին: Կանոնակարգը սահմանում է բաժնի գործունեության նպատակը, խնդիրներն ու գործառույթները, ինչպես նաև բաժնի աշխատակիցների գործառույթները: Բաժնի երկարաժամկետ գործունեության հիմքում ՀԳՊԱ զարգացման ռազմավարական ծրագիրն է ու միջազգայնացման ռազմավարությունը, որոնց երկուսի ժամկետներն էլ ավարտվել են: Փորձագիտական այցից ստացվեց տպավորություն, որ միջազգայնացման նոր ռազմավարությունը կազմվելու է բուհի նոր ՌԾ-ի հիման վրա: Կարճաժամկետ գործունեությունը կազմակերպվում է տարեկան պլանների հիման վրա: Արտաքին կապերի բաժինը, համաձայն, բուհի ՊԻԳԲ քաղաքականության, ներկայացնում է տարեկան և կիսամյակային (եռամսյակային) հաշվետվություններ: Հաշվետվությունները կազմվում են ըստ ռազմավարական նպատակների և գործողությունների: Պետք է նշել, այդուհանդերձ, որ բաժնի հաշվետվություններում խիստ սակավ է վերլուծական բաղադրիչը: Երբեմն նշվում է պլանավորված որևէ գործողության կիսատ մնալու պատճառը, երբեմն էլ հասկանալի չի դառնում, թե պլանավորված գործողությունը որքանո՞վ է ավարտին հասել: Երբեմն էլ առկա են բովանդակային անհամապատասխանություններ հաշվետվություններում ներկայացված՝ ռազմավարական նպատակի ու իրականացված գործողությունների միջև:

ՀԳՊԱ-ի կայքէջում զետեղված է տեղեկատվություն Եվրոպական միության TEMPUS և ERASMUS+ ծրագրերի շրջանակներում բուհի մասնակցությամբ և համակարգմամբ իրականացված կարողությունների զարգացման նախագծերի մասին: Կայքէջում զետեղված են նաև ՀԳՊԱ-ի գործընկեր բուհերի կայքէջերի հղումները, օտարերկրյա քաղաքացիների ընդունելության և ուսանողների շարժունության կարգերը:

Թեև, ըստ ինքնավերլուծության, ՀԳՊԱ-ում արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման հիմնական պատասխանատուն արտաքին կապերի բաժինն է, այնուամենայնիվ ՀԳՊԱ-ի տարբեր ստորաբաժանումներ պատասխանատու են իրենց գործունեության միջազգայնացման և համագործակցության ապահովման համար, սակայն հարկ է նշել, որ արտաքին կապերի բաժինը ամբողջությամբ ընդգրկված չէ միջազգայնացման

գործընթացներում, հիմնականում՝ դրամաշնորհային ծրագրերում. փորձագիտական այցից պարզ դարձավ, որ եղել կամ առկա են խնդիրներ արտաքին կապերի բաժնի՝ որոշ դրամաշնորհային ծրագրերում մասնակցության հետ կապված: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ արտաքին կապերի բաժինը թեև համագործակցում է ամբիոնների հետ հատկապես շարժունության ծրագրերի կազմակերպման գործում, այդուհանդերձ օժտված չէ ամբիոնների միջազգայնացման գործունեությունը համակարգելու և այդ համակարգմամբ միջազգայնացման ուղղությունը առաջ տանելու ֆունկցիոնալ հնարավորություններով և/կամ ներուժով: Չկան խրախուսման մեխանիզմներ մոտիվացնելու ՊԴ կազմին և ուսանողներին՝ ներգրավվելու միջազգայնացման գործընթացներում: Չկան նաև որոշակի ձևակերպված տեսլականներ՝ հետազոտական գործունեության միջազգայնացման ուղղությամբ, թեև, համաձայն արտաքին կապերի բաժնի կանոնակարգի, բաժնի նպատակներից մեկը հետազոտական կենտրոնի աշխատանքը միջազգայնացնելն է:

Արտաքին կապերի բաժնի հաշվետվությունների ուսումնասիրությունից ու փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բուհի վերին և միջին ղեկավար որոշ օղակների միջև տևական ժամանակ առկա են մոտեցումների տարբերություններ միջազգայնացման ուղղությամբ որոշ գործողություններ առաջնահերթ համարել-չհամարելու հետ կապված (Արվեստի դպրոցների միջազգային լիգային, Էլիա ասոցիացիային անդամակցության հարց, բաժնին առանձին բյուջե հատկացնելու հարց և այլն):

Համաձայն ինքնավերլուծության՝ արտաքին կապերի բաժինն իր գործունեության արդյունավետությունը գնահատում է ուսանողների շրջանում հարցումների և հանդիպումների միջոցով:

9.3 ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

Տեղական հաստատությունների հետ ՀԳՊԱ-ի համագործակցությունը հիմնականում վերաբերում է հետևյալ ոլորտներին.

- համագործակցություն տեղական բուհերի հետ կարողությունների զարգացման նախագծերի շրջանակներում (Inclusion, C3QA և այլն),
- համագործակցություն տեղական որոշ բուհերի հետ ուսանողական կազմակերպությունների համատեղ նախաձեռնությունների հարցերում,
- համագործակցություն արվեստի քոլեջների և հանրակրթական հաստատությունների հետ դիմորդների մասնագիտական կողմնորոշման հարցերի շուրջ,
- համագործակցություն պետական և մասնավոր մշակութային հաստատությունների, գործատու կազմակերպությունների հետ ուսանողների պրակտիկաների կազմակերպման ուղղությամբ,
- ինստիտուցիոնալ հարաբերություններ և փոխգործակցություն պետական մարմինների, առաջին հերթին՝ ԿԳՄՍ նախարարության հետ,
- համագործակցություն վերոնշյալ կազմակերպությունների, կառույցների, ստեղծագործական միությունների, հասարակական և այլ կազմակերպությունների

հետ բուհի ռազմավարական ծրագրերի, կրթական ծրագրերի կառուցվածքի և բովանդակության քննարկման հարցերում:

Գործատու կազմակերպությունների զգալի մասը դասավանդում է ՀԳՊԱ-ում:

Տեղական և միջազգային կառույցների հետ հաղորդակցման կարևոր գործիքներ են կայքը և ֆեյսբուքյան էջը: Կայքը պարունակում է տեղեկատվություն կրթական ծրագրերի, հանդիպումների, ցուցահանդեսների մասին՝ հայերեն և անգլերեն (աշխատանք է տարվում կայքը նաև եռալեզու դարձնելու ուղղությամբ՝ ավելացնելով ռուսերենը):

Նախորդի համեմատ ռազմավարական այս շրջափուլում ակտիվացել է ՀԳՊԱ-ի ներգնա ուսանողական շարժունությունը: Եթե նախորդ շրջափուլում ՀԳՊԱ էր այցելել ընդամենը 2 ուսանող, ապա այս շրջափուլում ՀԳՊԱ ներգնա ուսանողական շարժունությունը կազմել է 12: Ակտիվացել է նաև դասախոսների շարժունությունը: Եթե նախորդ հավատարմագրման զեկույցը արձանագրել է դասախոսների շարժունության բացակայություն, ապա վերջին տարիներին ՀԳՊԱ-ն գործուղել է 6 և ընդունել 3 դասախոսների: Ուսանողների և հատկապես դասախոսների շարժունության արդյունքները վերլուծված չեն: 2017-2021թթ. ընթացքում 20 ուսանող օգտվել է Սանկտ Պետերբուրգի շարժունության ծրագրերից: ՀԳՊԱ շարժունության տարբեր ծրագրերով գալիս են ուսանողներ, օրինակ, Չեխիայի Հանրապետությունից, Ռումինիայից, Լեհաստանից և այլ վայրերից: Կարճաժամկետ շարժունության ծրագրերով եկել են նաև դասախոսներ՝ օրինակ Իռլանդիայից: Միջազգայնացման կարևորագույն մարտահրավերներից COVID-19-ը, ազդել է վերջին տարիների շարժունության թվերի վրա: Չնայած դրան, հիմնականում շարժունության պլանավորված քանակը կատարված է: ՀԳՊԱ-ն համագործակցում է Լեհաստանի, Շվեյցարիայի և այլ երկրների կրթական հաստատությունների հետ ուսանողների և ՊԴ կազմի շարժունության համար: Սակայն, փորձագիտական խումբը արձանագրում է, որ համավարակը չի օգտագործվել որպես հնարավորություն՝ առանց ֆինանսական ռեսուրսների տրամադրման, SS գործիքների կիրառմամբ միջազգային կառույցների հետ համագործակցության համար:

Վերջին շրջանում ՀԳՊԱ-ն կնքել է նոր պայմանագրեր, փորձագիտական խմբի հանդիպումների ժամանակ պարզ դարձավ, որ կատարվել է նաև պայմանագրերի արդյունավետության գնահատում: Արդյունքում պարզվել է, որ ոչ բոլոր պայմանագրերն են արդյունավետ:

Հարկ է նշել, որ որոշ պայմանագրեր բավականին ընդհանրական բովանդակության են և չեն ներառում հստակ քայլեր՝ արդյունքներին հասնելու համար: Համաձայն բուհի կայքէջում և հաշվետվություններում զետեղված տեղեկությունների՝ ՀԳՊԱ-ն համագործակցում է արտասահմանյան 30 բուհի հետ:

Համաձայն ինքնավերլուծության և հաշվետվությունների՝ ՀԳՊԱ-ն իրականացնում է ամենամյա հաճախականության միջոցառումներ Մոսկվայի Բուրգանովի կենտրոնի, Ղրղզստանի մշակույթի նախարարության, ՀՀ—ում Իտալիայի դեսպանության հետ, կազմակերպել է ցուցահանդեսներ, ամառային դպրոցներ Վարշավայի և Պերուջայի համալսարանների, իրանական հաստատությունների հետ:

Ինչպես նշվեց, արտաքին կապերի բաժինը քանիցս հարց է բարձրացրել միջազգային ասոցիացիաների անդամակցման վերաբերյալ, որը, ըստ նրա, լայն հնարավորություններ կտա տարբեր գործընթացների միջազգայնացմանը, սակայն խնդիրը լուծված չէ:

Քննարկվել է այլ հաստատությունների հետ համատեղ դիպլոմների ծրագրերի իրականացման հարցը, սակայն, ինչպես հայտնի է, մինչ այժմ չկան համատեղ իրականացվող կրթական ծրագրեր: Չկան նաև համատեղ իրականացվող հետազոտական ծրագրեր:

9.4 ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

ՀԳՊԱ-ն 2017թ. իրականացրել է ուսումնասիրություն, համաձայն որի իր արտաքին կապերի և միջազգայնացման հիմնական մարտահրավերն է համարել բուհական համակազմի օտար լեզվի իմացության ցածր մակարդակը: Ուստի նախորդ հավատարմագրման գործընթացի բարելավման պլանում ՀԳՊԱ-ն նախատեսել էր կազմակերպել օտար լեզուների դասընթացներ դասախոսների, վարչական և ուսումնաօժանդակ համակազմի համար: Նախատեսվել էր նաև կրթական ծրագրերում ներդնել օտար լեզվի պարտադիր դասընթացներ:

Կրթական ծրագրերի նկարագրերի դիտարկումից պարզ դարձավ, որ օտար լեզվի դասընթացները հիմնականում պարտադիր չեն եղել մինչև ընթացիկ ուստարին (բացառություններից են, օրինակ՝ «Արվեստաբանություն» բակալավրի կրթական ծրագրի ուսումնառության 3-րդ տարում նախատեսված է «Մասնագիտական թարգմանություն» 10 կրեդիտանոց մոդուլ), թեև կրթական ծրագրերի որոշ վերջնարդյունքներ ենթադրում են օտար լեզվի խորը իմացություն: Պետք է փաստել, որ մինչ այժմ էլ ՀԳՊԱ-ում օտար լեզվի ուսուցումն իրականացվել է ֆակուլտատիվ եղանակով, և միայն 2021-2022 ուստարվանից մեկնարկած նոր, լրամշակված կրթական ծրագրերում է, որ օտար լեզուն պարտադիր է՝ ներառված լինելով «Հաղորդակցություն» մոդուլի մեջ (երկու կիսամյակ)[11]: Օտար լեզուների ֆակուլտատիվ պարապմունքները, ըստ ինքնավերլուծության, բաց են թե՛ դասախոս, թե՛ ուսանող ունկնդիրների համար: ՀԳՊԱ-ն ֆակուլտատիվ դասընթացներ է առաջարկում ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն և իտալերեն լեզուներից: Փաստաթղթերի ուսումնասիրությունից ու փորձագիտական այցի ընթացքում տեղի ունեցած շփումներից պարզ է դառնում, որ օտար լեզուների ֆակուլտատիվ դասընթացները դեռևս արդյունավետ չեն . հատկապես դասախոսների շրջանում ռուսերենով հաղորդակցման խնդիրներ չկան (դասախոսների շրջանում իմացությունը կազմում է 97 տոկոս), մինչդեռ պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում անգլերենի իմացությունը թեև կազմում է 58 տոկոս, սակայն խորքային իմացության մակարդակը շատ ավելի ցածր է: Ինքնավերլուծությունն ինքը նշում է, որ բուհում օտար լեզվին վատ տիրապետելը խոչընդոտում է միջազգային համագործակցության ծավալմանը: Բուհը դեռևս չի դիտարկել առաջին հերթին դասախոսների շրջանում օտար լեզուների, հատկապես անգլերենի

[11] Միտքը վերաշարադրվել է հաստատության դիտարկումների քննարկման արդյունքում:

դասավանդումը միջազգային գնահատման չափանիշներին (CEFR, IELTS և այլն) համապատասխան իրականացնելու հարցը:

Արտագնա կարճաժամկետ շարժունության մեջ արձանագրվել է թարգմանչի ուղեկցության դեպք: ՀԳՊԱ-ում օտար լեզվով կրթական ծրագրեր չկան: Ներգնա ուսանողների համար կազմակերպվում է հայերեն լեզվի դասընթացներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ցածր է նաև ՀԳՊԱ ընդունված օտարերկրացի ուսանողների հայերենի իմացության մակարդակը[12]:

Ընդհանուր առմամբ ուսանողների և ՊԴ կազմի անգլերենի անհրաժեշտ մակարդակը, որը հնարավորություն կտա իրականացնելու կիսամյակային կամ տարեկան կտրվածքով շարժունություն՝ բացակայում է:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում այն հանգամանքը, որ նախորդ հավատարմագրումից հետո ՀԳՊԱ-ն գիտակցել է արտաքին կապերի ու միջազգայնացման ոլորտում իր խնդիրներն ու ցածր կատարողականի որոշ պատճառները և տարել աշխատանքներ որոշ ուղղություններ զարգացնելու համար:

Նկատելիորեն բարելավվել է միջազգայնացման գործընթացների փաստաթղթային հենքը (պլաններ, հաշվետվություններ, լավարկված կանոնակարգեր): Միևնույն ժամանակ, պլանավորման մեջ արդյունքի գնահատման ցուցիչների, ինչպես նաև հաշվետվության ձևերի հետ կապված խնդիրները, որոնք արձանագրվել են չափորոշիչ 9.1-ի շարադրանքում, կարող են վտանգել միջազգայնացման գործընթացների *նպատակային* պլանավորումը, իրականացումն ու գնահատումը:

Թեև ռազմավարական նախորդ շրջափուլի համեմատ ՀԳՊԱ-ի միջազգային շարժունությունը աճել է, սակայն այն ակներևաբար չի համապատասխանում բուհի ներուժին ու հնարավորություններին: Փորձագիտական խումբը դրական է համարում այն իրողությունը, որ բուհի ամբիոնները բակալավրի կրթական ծրագրերի բենչմարքինգ են իրականացրել առաջատար բուհերի ծրագրերի համեմատությամբ: Միևնույն ժամանակ, օտար լեզուների (անգլերենի) տիրապետման ցածր մակարդակը, շարժունության փորձառության սակավությունը թույլ չի տալիս, որ վերափոխված կրթական ծրագրերն իրականացնելիս շարունակական լինի նաև փորձի փոխանակումը դասավանդման, ուսումնառության, գնահատման, հետազոտական բաղադրիչի ապահովման մոտեցումների և մեթոդների հարցում:

Համատեղ կրթական ծրագրերի, օտարալեզու կրթական ծրագրերի, միջազգային հետազոտական ծրագրերի բացակայությունը և դրանց՝ մոտ ապագայում լինելու ցածր հավանականությունը ՀԳՊԱ-ին զրկում է միջազգային հարթակում տեսանելի լինելու հնարավորությունից, ինչն էլ նվազեցնում է բուհում ուսումնառության ու հետազոտության որակի բարելավման ուղղությամբ միջազգային համագործակցության հնարավորությունները:

[12] Միտքը վերաշարադրվել է հաստատության դիտարկումների քննարկման արդյունքում:

ՀԳՊԱ-ում միջազգայնացման գործընթացների պլանավորման, իրականացման ու գնահատման հարցերում կառավարման բնույթի խնդիրները, մոտեցումների տարբերությունները, արտաքին կապերի բաժնի՝ ամբիոնների միջազգայնացման գործունեությունը համակարգելու և այդ համակարգմամբ միջազգայնացման ուղղությունը առաջ տանելու ֆունկցիոնալ հնարավորություններով և/կամ ներուժով օժտված չլինելը, միջազգայնացման գործընթացներում դասախոսների և ուսանողների ներգրավումը մոտիվացնելու խրախուսման մեխանիզմներ չլինելը մշուշոտ են դարձնում բուհի միջազգայնացման տեսլականը: Այդ տեսլականի մշուշոտ ու անորոշ լինելը դրսևորվում է, ի մասնավորի, նրանում, որ ՀԳՊԱ-ն չունի որոշակի պլաններ միջազգային հետազոտական ծրագրերի, կարողությունների զարգացման միջազգային դրամաշնորհային ծրագրերի, համատեղ կրթական ծրագրերի, օտարալեզու կրթական ծրագրերի վերաբերյալ:

Փորձագիտական խումբը գտնում է, որ շատ ավելի հստակ և համապարփակ ռազմավարության կարիք կա, որը կնպաստի միջազգայնացմանը՝ ընդգրկելով բոլոր օղակներին: Դասախոսական և վարչական կազմը տեղյակ է արտաքին և միջազգային գործընկերության, նրա զարգացման կարևորության մասին և որոշակի առաջընթաց է գրանցվել, սակայն այն եղել է մաս-մաս և զուրկ է համակարգված պլանավորումից՝ միջինստիտուցիոնալ և միջծրագրային մակարդակով: Միջազգայնացման համար հստակ ու որակական ցուցիչների սահմանումը՝ ոչ միայն շարժունության, այլ բոլոր ուղղություններով կնպաստեն կանոնակարգված զարգացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՀԳՊԱ-ի միջազգայնացման գործընթացի պլանավորման և գնահատման մեթոդաբանական հենքերը խնդրահարույց են, որ արտաքին կապերի զարգացման ու միջազգայնացման գործառույթի իրականացումը բախվում է վարչական-կազմակերպական բնույթի խորքային խնդիրների, չեն իրականացվում միջազգային կրթական, հետազոտական, օտարալեզու ծրագրեր և չկան դրանց վերաբերյալ որոշակի տեսլականներ, բուհում ցածր է անգլերենի տիրապետման մակարդակը, բուհի կողմից ֆինանսական ռեսուրսներ չի տրամադրվում միջազգայնացման ուղղությունը ռազմավարական մոտեցմամբ պլանավորելուն և իրականացնելուն, նախանշված չեն ոլորտի զարգացման առաջիկա ուղիները, գնահատված չեն բուհի հնարավորությունները միջազգայնացման ուղղությամբ, խիստ սակավ են վարչական, պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողների՝ միջազգայնացման գործընթացներում ներգրավումը խրախուսող մեխանիզմները՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՀԳՊԱ-ն չի բավարարում չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀԳՊԱ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

10.1 ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման նախորդ շրջափուլի փորձագիտական գնահատականների համաձայն՝ ՀԳՊԱ-ն որակի ապահովման համակարգի հետ կապված հետևյալ խնդիրներն է ունեցել.

- որակի մշակույթի տարածված չլինելը բուհում,
- որակի ապահովմանն առնչվող փաստաթղթերի օպտիմալացման և գործարկման խնդիրներ,
- որակի ապահովման մեխանիզմների սակավություն և պասիվություն,
- որակի ապահովման համակարգում արտաքին շահակիցների նվազ ներգրավվածություն:

Որակի ապահովման համակարգի զարգացումը ՀԳՊԱ-ի համար եղել է ռազմավարական նպատակ՝ արտացոլվելով բուհի զարգացման 2017-2021թթ. ռազմավարական ծրագրում: Դատելով բուհի ղեկավարության հետ փորձագիտական հանդիպումների արդյունքներից՝ մշակվող ՌԾ-ում ևս որակի ապահովման համակարգի զարգացումը ռազմավարական նպատակ է լինելու:

Համաձայն նախորդ հավատարմագրման բարելավման պլանի՝ ՀԳՊԱ-ն մտադրվել էր որակի ապահովման մշակույթի տարածման, ներքին ու արտաքին շահակիցների մասնակցության մեծացման խնդիրները լուծել մարդկային ռեսուրսների զարգացման գործընթացներ իրականացնելու հիմքով, ինչը հանգեցնելու էր բուհի յուրաքանչյուր աշխատակցի կողմից որակի ապահովման գործընթացներում իր դերը ճանաչելուն և գործառույթը պատկերացնելուն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նշված վերջնարդյունքն ապահովված չէ (առնվազն գնահատված չէ այդ վերջնարդյունքի ձեռքբերվածությունը): Այսպես, պարզվեց, որ ՀԳՊԱ որակի ապահովման կենտրոնը աշխատանքներ է տանում դասախոսների հետ, որպեսզի հենց իրենք ևս գնահատեն իրենց դասընթացների արդյունավետությունը, այդ հարցում առաջարկելով իր մեթոդական աջակցությունը, սակայն շատ քիչ թվով դասախոսներ են հանձն առել կատարել այդ գործը: Այդուհանդերձ պարզ դարձավ նաև, որ հաճախակիացած հարցումների և ֆոկուս-խմբային քննարկումների շնորհիվ ձեռք են բերվում անհրաժեշտ տվյալներ՝ կրթական ծրագրերն ու այլ գործընթացները բարելավելու համար:

ՀԳՊԱ-ում որակի ապահովման քաղաքականությունը, համաձայն ինքնավերլուծության, միտված է բուհի առաքելության և ռազմավարական ծրագրով սահմանված նպատակների իրականացմանը: Տվյալ քաղաքականությունը ենթադրում է՝ որակի խնդիրների սահմանում, բուհի գործընթացների արդյունավետ իրականացում և դրանց

շարունակական բարելավման ապահովում, ներքին և արտաքին շահակիցների արձագանքի հիման վրա բարելավումների իրականացում: Սակայն բուհում դեռևս բացակայում է տվյալ քաղաքականության գործիքակազմի գնահատման մեխանիզմները:

Ըստ ինքնավերլուծության՝ բուհի որակի ապահովման գործընթացների հիմքում ընկած է ՀԳՊԱ որակի կրկնակի կառավարման համակարգը, որտեղ երևում է բուհում իրականացվող տարբեր գործընթացների որակի ապահովումը և կառավարումը, դրանց փոխկապակցվածությունը, գնահատումը, պատասխանատու վարչական օղակներն ու ներգրավված ներքին շահակիցները և այլն:

Նախորդ հավատարմագրումից հետո վերանայվել են նախկինում ներդրված ՈԱ գործիքներն ու մեխանիզմները:

Ըստ ՀԳՊԱ ՈԱ ձեռնարկի՝ ակադեմիայում կիրառվող որակի ապահովման հիմնական գործիքներից են հարցումները, ֆոկուս-խմբային քննարկումները, անհատական հարցազրույցները, մոնիտորինգները: Որակի ապահովման գործընթացները տարածվում են հետևյալ ուղղություններով. ընդունելություն, կրթական ծրագիր և դասընթացներ, հետազոտություն, նյութական ռեսուրսներ և մատուցվող ծառայություններ, կառավարման համակարգ և վարչարարություն, միջազգայնացում: Յուրաքանչյուր գործիք ունի իր նկարագիրը և կիրառման կանոնակարգը:

ՀԳՊԱ-ում կառավարման համակարգի ու գործընթացների գնահատմանը վերաբերում են որակի ապահովման հետևյալ գործիքները.

- վարչարարության արդյունավետության գնահատում պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում,
- վարչարարության արդյունավետության գնահատում վարչական աշխատողների շրջանում,
- աշխատակցի աշխատանքի արդյունավետության գնահատում ղեկավարի կողմից,
- ստորաբաժանման ղեկավարի աշխատանքի արդյունավետության գնահատում ստորաբաժանման աշխատակցի կողմից:

Հարկ է նշել, որ հետազոտության ուղղությամբ որակի ապահովումը ենթադրում է հետևյալ գործիքների օգտագործումը.

- հետազոտողի կողմից հետազոտական աշխատանքի ղեկավարի գնահատում,
- 3-րդ աստիճանի ուսանողների կողմից գիտական ղեկավարների գնահատում,
- 3-րդ աստիճանում գիտական ղեկավարների կողմից հետազոտող ուսանողների գնահատում
- ռեսուրսների և ծառայությունների արդյունավետության գնահատում (այս գործիքը ներառում է հարցեր, որոնք վերաբերում են հետազոտության գործընթացին):

Նշված գործիքները կիրառվում են գերազանցապես արվեստագիտության կրթական ծրագրի գծով ասպիրանտուրայի կամ հայցորդության դեպքում[13]: Ուստի որակի ապահովման

[13] Միտքը վերաշարադրվել է հաստատության դիտարկումների քննարկման արդյունքում:

գործիքակազմով գնահատման ուղեծրից դուրս է մնում դասախոսների գիտահետազոտական գործունեությունը, ուսումնառության մեջ հետազոտական բաղադրիչը։

ՀԳՊԱ-ի միջազգայնացումը գնահատող գործիքներն են հարցումները փոխանակման ծրագրերով հյուրընկալած արտասահմանցի ուսանողների շրջանում և հարցումներն օտար լեզվի իմացության վերաբերյալ։ Արտագնա շարժունությունը գնահատվում է արտաքին կապերի բաժնի կողմից։ Սակայն արտաքին կապերի զարգացման ու միջազգայնացման այլ ուղղությունները (համատեղ կրթական ծրագրեր, միջազգային հետազոտական դրամաշնորհներ, օտարալեզու կրթական ծրագրեր, կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագրեր և այլն) դուրս են մնում ՈԱ գործիքակազմով գնահատման դաշտից[14]։ Որակի ապահովումն, օրինակ, մասնագիտական գործիքակազմով չի վերհանում այն հարցի պատասխանը, թե ինչու՞ ռազմավարական պլանավորման նախորդ շրջափուլում չի հաջողվել իրականացնել համատեղ կրթական ծրագիր. հանգամանք, որ էական ազդեցություն ունի միջազգայնացման ռազմավարական նպատակի կշռի վրա։

Նշված հարցումների արդյունքները թեև ամփոփված, ի մի են բերված, սակայն հաշվետվություններում և այլուր չկա տեղեկություն, թե դրանց արդյունքում ի՞նչ եզրահանգումների են եկել, ի՞նչ որոշումներ են կայացրել, թե վերհանված տվյալները, ինֆորմացիան ու վերլուծությունն ինչպե՞ս, որտե՞ղ են օգտագործվում։ ՀԳՊԱ-ն դեռևս չի դիտարկել կառավարման, հետազոտության ու միջազգայնացման ոլորտներում խորքային խնդիրներ վերհանելու ուղղությամբ խորին հարցազրույցներ, մտագրոհներ ու այլ արդյունավետ մեխանիզմներ կիրառելու հարցը։

Չափանիշ 2-ի շարադրանքում հպանցիկ անդրադարձ կատարվել է, որ ՀԳՊԱ-ում ռազմավարական պլանավորումը դեռևս տեղի չի ունենում որակի ապահովման կողմից վերհանված տվյալների հիման վրա։ Սույն զեկույցի տարբեր հատվածներում անդրադարձ է եղել այն խնդրին, որ ռազմավարական որոշ գործողություններ չեն կատարվել ճիշտ չպլանավորվելու կամ արդյունքի գնահատման ճիշտ ցուցիչներ չսահմանելու պատճառով։ Այսպիսով, բուհի ղեկավար կազմի որոշ մտադրություններ վերածվել են որոշումների կամ պլանավորումների՝ հիմքում չունենալով անհրաժեշտ չափի տվյալներ, որոնք պետք է գեներացվեին որակի ապահովման համակարգի կողմից կամ նրա գործուն աջակցությամբ։ Այսպես, դեռ նախորդ շրջափուլում հետազոտական կենտրոնի ստեղծման հիմքում չեն դրվել այդ տվյալները, իսկ Հետազոտական կենտրոնը փաստացի չի կատարում իր ռազմավարական գործառույթները։ 2017-2021թթ. ՌԾ-ում պլանավորվել էր ստեղծել համատեղ կրթական ծրագիր։ Այս մտադրությունը մտցվել է ՌԾ-ի մեջ՝ առանց մանրամասն ուսումնասիրելու՝ որքանո՞վ է բուհը պատրաստ դրան. չեն վերհանվել համապատասխան տվյալներ, չի գնահատվել ամբիոնների ներուժը և այլն։

[14] Միտքը վերաշարադրվել է հաստատության դիտարկումների քննարկման արդյունքում։

10.2 Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ՀԳՊԱ որակի ապահովման կենտրոնը գործում է 2011 թ.-ից: Որակի ապահովման կենտրոնը համալրված է 2 հաստիքով՝ կենտրոնի ղեկավար և կենտրոնի մասնագետ, որոնց գործառույթները կանոնակարգվում են որակի ապահովման կենտրոնի կանոնակարգով: Փորձագիտական այցի ընթացքում, ինչպես նաև ինքնավերլուծությունից պարզ դարձավ, որ ՈԱ գործընթացների իրականացմանն օժանդակում են ՈԱ կամավորական-պատասխանատուները՝ դեկանատի աշխատակիցներն ու ամբիոնների լաբորանտները:

Նախորդ հավատարմագրումից հետո Գյումրիի մասնաճյուղում ստեղծվել է որակի ապահովման պատասխանատուի հաստիքը: Թեև գործընթացները իրականացվում են առանձին ստորաբաժանման կողմից, այնուամենայնիվ հիմնական կառավարումը իրականացվում է մայր բուհի կողմից:

ՈԱ կենտրոնի նյութական և ֆինանսական ռեսուրսների պլանավորումը կարգավորվում է «ՀԳՊԱ ստորաբաժանումների տարեկան գործունեության պլանավորման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման կարգ»-ով, համաձայն որի ՈԱ կենտրոնի տարեկան պլանին կցվում է նաև ՈԱ գործընթացների համար անհրաժեշտ նյութական և ֆինանսական ռեսուրսների ցանկը: Տարեկան պլանի հաստատումից հետո, պլանին կից ռեսուրսների ցանկի հիման վրա հաշվարկվում է ՈԱ գործընթացներին հատկացվող բյուջեն:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից ու փորձագիտական այցից ստացվեց տպավորություն, որ որակի ապահովման գործիքների մշակման ու կիրառման հարցում սոցիոլոգիական մասնագիտական կարողություններով զինվելու կարիք կա: Խոսքը առավելապես վերաբերում է կրթական ծրագրերի, կառավարման, հետազոտության ու միջազգայնացման ոլորտներում խնդիրներ վերհանելու, արդյունավետություն գնահատելու համար ֆոկուս-խմբերի, մտագրոհների, խորին հարցազրույցների համապատասխան բովանդակությամբ հարցախույզներ մշակելուն և դրանք գործադրելուն:

10.3 Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

Որակի ապահովման գործընթացներում ՀԳՊԱ ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը ապահովվում է համաձայն ՀԳՊԱ կանոնադրության: Մասնավորապես ներքին և արտաքին շահակիցները ակտիվ ներգրավվածություն են ունենում կրթական ծրագրերի վերանայման գործընթացում: Տվյալ գործընթացում առավել ակտիվ գործունեություն են ծավալել պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները, որոնց մի մասը, հանդիսանալով նաև որպես գործատու, որպես արտաքին շահակից իրենց առաջարկություններն են կատարել կրթական ծրագրերի վերաբերյալ: Մոդուլային համակարգի ներդրման ժամանակ կրթական ծրագրերի վերանայմանը, համաձայն ինքնավերլուծության, մասնակցել է պրոֆեսորադասախոսական կազմի 40 տոկոսը:

ՀԳՊԱ-ում ուսումնառության և դասավանդման որակի ապահովման գործընթացում ուսումնառողների ներգրավվածությունն ապահովվում է հարցումների և

հանդիպում/քննարկումների միջոցով: Հարցումներն իրականացվում են կրթական ծրագրերի դասընթացների և համապատասխան ռեսուրսների արդյունավետության վերաբերյալ: Սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ հարցումները հիմնականում առնչվում են առանձին դասընթացներին, և հաճախ հարցումների իրականացման նպատակայնությունը հասկանալի չէ ուսանողների համար, թեև հարցումների նպատակները բուհի կողմից ներկայացվում են ուսանողներին և՛ բանավոր՝ հարցումն իրականացնելու ժամանակ, և՛ գրավոր՝ յուրաքանչյուր հարցաշարի սկզբում զետեղված տեքստում[15]: Շրջանավարտները՝ որպես արտաքին շահակիցներ, սակավ են ներգրավվում գործընթացնում: Հարցումներից զատ շահակիցների շրջանում իրականացվում են նաև ֆոկուս խմբային հանդիպումներ, որոնց արդյունքները ամփոփվում են տարեկան հաշվետվության մեջ: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ֆոկուս խմբային հանդիպումները մեծապես կապված են եղել կրթական ծրագրերի վերանայման հետ, ինչպես նաև հանդիպումների ընթացքում քննարկվել են նոր ռազմավարական ծրագրին առնչվող առանցքային հարցերը:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ նոր ռազմավարական ծրագրին առնչվող ԳԱՑ-երի համար որակի ապահովման նոր գործիքակազմ է պլանավորվում մշակվել, որը հարցումներից և ֆոկուս խմբային հանդիպումներից զատ ներառելու է որակի ապահովման այլ մեխանիզմներ:

ՀԳՊԱ վարչական, պրոֆեսորադասախոսական և ուսանողական կազմի ներկայացուցիչներն իրենց գործառույթների համատեքստում ներգրավված են նաև ինքնավերլուծության իրականացման գործընթացում՝ տվյալների տրամադրում, օժանդակություն հարցումների անցկացմանը, ինքնավերլուծության զեկույցի պատրաստմանը և այլն: ՀԳՊԱ-ում առկա է վարչարարությունը գնահատող հարցաթերթ, որի գնահատումը իրականացվում է պրոֆեսորադասախոսական կազմի, ինչպես նաև վարչական աշխատակիցների կողմից[16]:

10.4 Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

ՀԳՊԱ-ն հանձն էր առել նաև մշակել որակի ապահովման համակարգի մշտադիտարկման, գնահատման և բարելավման մեխանիզմներ: Թեև հավատարմագրման նախորդ շրջափուլից հետո վերանայվել են ՈԱ մի շարք գործիքներ, ավելացել են նորերը, սակայն հաշվետվություններում և այլ փաստաթղթերում, ինչպես նաև ինքնավերլուծության մեջ (մեկ-երկու դեպքից բացի) չի նկարագրվում, չի վերլուծվում, թե ե՞րբ, ի՞նչ պայմաններում, ինչու՞ են վերանայվում այդ գործիքները: Թեև ըստ ՀԳՊԱ ինքնավերլուծության, ՈՆԱ համակարգը պարբերաբար վերանայվում է համաձայն գործող ռազմավարական ծրագրի, ներքին և արտաքին շահակիցների կարիքների ու պահանջների, պետական և միջազգային մակարդակում արձանագրված պահանջների և միտումների, այդուհանդերձ բացակայում են

[15] Միտքը վերաշարադրվել է հաստատության դիտարկումների քննարկման արդյունքում:
[16] Միտքը վերաշարադրվել է հաստատության դիտարկումների քննարկման արդյունքում:

վերլուծությունները, որոնք կմատնանշեին կապը մի կողմից վերոնշյալ հանգամանքների, մյուս կողմից էլ գործիքների վերանայումների միջև: Ինչպես ցույց տվեցինք չափորոշիչ 10.1-ի շարադրանքում, ՀԳՊԱ-ի ռազմավարական նպատակադրման ոլորտներ կան, որոնց առնչվող ՈԱ գործիքները հաճախ հնարավորություն չեն տալիս որոշելու դրված նպատակների իրացվածության աստիճանը, պարզելու այդ ուղղություններով բուհի իրականացրած գործունեության արդյունավետությունը:

Նախորդ հավատարմագրումից հետո ՀԳՊԱ-ն մի շարք միջազգային ծրագրերին մասնակցություն ունենալու արդյունքում իրականացրել է ՈԱ համակարգին առնչվող մի շարք վերանայումներ: Հիմնական վերանայումները առնչվել են ինստիտուցիոնալ ինքնավերլուծության գործընթացներում ներգրավված աշխատակիցների կարողությունների զարգացմանը և ինքնավերլուծության գործընթացում ուսանողների ներգրավմանը: Վերանայումների ժամանակ Ակադեմիան փորձում է հաշվի առնել և՛ տեղական, և՛ միջազգային պահանջները: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՀԳՊԱ-ում ձեռնամուխ են եղել կիրառել ՊԻԳԲ շրջափուլը, սակայն գրեթե բոլոր «խոշոր» գործընթացները դեռևս գտնվում են իրականացման փուլում:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ մոդուլային համակարգին անցում կատարելուց հետո որակի ապահովման, ուսանողների աջակցման և շրջանավարտների հետ համագործակցության կենտրոնների, ուսումնամեթոդական մշակումների և ուսումնական գործընթացի հաշվառման, կրթական ծրագրերի մշակումների բաժինների աշխատակիցները ամբիոնի վարիչների հետ միասին իրականացնում են դասալսումներ՝ մոդուլային համակարգի արդյունավետությունը գնահատելու նպատակով, սակայն արդյունքները դեռևս ամփոփված չեն, քանի որ համակարգի մեկնարկը տրվել է ընթացիկ ուսումնական տարում[17]:

10.5 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

Գեղարվեստի ակադեմիան գտնվում է ինստիտուցիոնալ հավատարմագրման երկրորդ շրջափուլում և հետևապես այս ինքնավերլուծությունը երկրորդն է, որ կազմված է ըստ ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների: ՀԳՊԱ-ի հավատարմագրման երկրորդ շրջափուլի ինքնավերլուծությունը թեև շահեկանորեն տարբերվում է առաջին շրջափուլի ինքնավերլուծությունից: Գործընթացների նկարագրության մեջ քանակական տվյալները գերակշռում են:

ՀԳՊԱ-ում որպես տվյալների հավաքագրման մեխանիզմ կիրառվում է հարցումների և ֆոկուս խմբերի իրականացումը, որոնք սակայն համակարգված պարբերականությամբ չեն իրականացվում, և հիմնականում առնչվում են կրթական ծրագրերին (այլ գործընթացներին վերաբերող հարցումներ, փորձագիտական խմբի տվյալներով, մեկ անգամ են իրականացվել):

[17] Միտքը վերաշարադրվել է հաստատության դիտարկումների քննարկման արդյունքում:

Որակի ապահովման արտաքին գնահատման համար կարևոր նշանակություն ունեն վերլուծություններն առ այն, թե ՈԱ գործիքների միջոցով ի՞նչ տվյալներ են դուրս բերվել, ի՞նչ խնդիրներ են վերհանվել, ինչպե՞ս են դրանք ներդրվել հետագա բարելավումների հիմքում և այլն: Ակնհայտ է, որ ՀԳՊԱ-ն օգտագործում է ՈԱ մեխանիզմներով հավաքագրված շատ տվյալներ, սակայն նշված իմաստով վերլուծություններ փաստորեն չի անում:

10.6 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

Համաձայն ինքնավերլուծության, ՀԳՊԱ որակի ներքին ապահովման համակարգի հիմնական նպատակներից է բուհի գործունեության թափանցիկության ապահովումը: Նախորդ հավատարմագրման արդյունքում Ակադեմիայի բոլոր ստորաբաժանումներն իրենց գործընթացների վերաբերյալ տեղեկություն են տրամադրում ՀԳՊԱ-ի կայքէջի համար:

Թափանցիկություն ապահովելու նպատակով ՀԳՊԱ-ի կայքէջում տեղադրված են մշտապես թարմացվող տեղեկություն բուհի գործունեության և իրականացվող հիմնական գործընթացների վերաբերյալ: ՀԳՊԱ-ի կայքէջում տեղադրված են նաև ռեկտորի տարեկան հաշվետվությունները, որոնք ամփոփում են բուհի տարեկան գործունեությունը: Ակադեմիան իրականացնում է բուհի վերաբերյալ տեղեկության և դրա տարածման միջոցների արդյունավետության գնահատում:

Ակադեմիայի կայքէջում առանձնացված է բաժին ՈԱ գործընթացներին առնչվող, որտեղ ներկայացված են որակի ապահովման նպատակները և խնդիրները, ՈԱ քաղաքականությունը, ՈԱ մեխանիզմները և իրականացված հարցումները, սակայն տվյալ հարցումների վերլուծությունները հասանելի չեն շահակիցների շրջանում: Շահակիցները նաև չունեն հնարավորություն գնահատելու ՈԱ գործիքների կիրառելիությունն ու արդյունավետությունը, քանի որ, ինչպես նշեցինք, բուհի կողմից համապատասխան վերլուծություններ չեն արվում:

Դատողություններ: Փորձագիտական խումբն արձանագրում է, որ հավատարմագրման նախորդ շրջափուլից հետո Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիան նկատելի աշխատանքներ է տարել և առաջընթաց գրանցել որակի ապահովման քաղաքականության զարգացման, գործիքների ավելացման ու եղածների կատարելագործման, որակի ապահովման համակարգում շահակիցների ներգրավվածության մեծացման, որակի ապահովման համակարգի ներքին գնահատման ու վերանայման և այլ ուղղություններով: Եթե նախորդ հավատարմագրման փորձագիտական գնահատականի համաձայն ՀԳՊԱ-ում որոշակի նպաստավոր պայմաններ էին ստեղծված՝ որակի մշակույթի ձևավորման համար, ապա ներկայում, կարելի է ասել, որ որակի մշակույթն արդեն անցել է ձևավորման փուլը և կայանում է: Այս գնահատականի հիմքում, ի մասնավորի, հետևյալ իրողություններն են.

- որակի ապահովման գործիքները նպաստել են կրթական ծրագրերի վերանայման աշխատանքների կազմակերպմանը. մասնավորապես, դրանց միջոցով վերհանվել են

գործատուների կարիքներն ու կարծիքները, որոնց արդյունքներն էլ ինտեգրվել են կրթական ծրագրերի վերանայման գործընթացում,

- որոշ «մանր» գործընթացներ, որոնք, բարելավումից հետո մտել են իրականացման փուլ (օրինակ՝ վերանայված կրթական ծրագրերի դասընթացները), որակի ապահովման գործիքներով գնահատվում են նաև հընթացս՝ իրականացման փուլում,
- թեև որակի ապահովման գործընթացներն առավելապես կրթական ծրագրերին են վերաբերում, այդուհանդերձ փորձ է արվում այլ գործընթացների (միջազգայնացում, վարչարարություն, ռեսուրսների ձեռքբերում և այլն) բարելավումների հիմքում ևս դնել որակի ապահովման մեխանիզմները։

ՀԳՊԱ-ում տարբեր գործընթացների բարելավմանը զուգընթաց որակի ապահովման համակարգի առջև նոր խնդիրներ պետք է դրվեն։ Որակի ապահովման համակարգը ներկայում պետք է կենտրոնանա կառավարման, հետազոտության և միջազգայնացման ոլորտներում բուհի ներքին խնդիրները վերհանելու վրա։ Առանց որակի ապահովման համակարգի կողմից վերհանված տվյալների որոշումների կայացումը կամ ռազմավարական պլանների կազմումը հանգեցնում է որոշ ձախողումների (ինչի մասին նշվել է չափորոշիչ 10.1-ի շարադրանքում)։ Ուստի ՀԳՊԱ-ն կարևոր որոշումներ կայացնելիս ու ռազմավարական պլանավորումներ իրականացնելիս պետք է խնդիր դնի որակի ապահովման համակարգի առջև՝ ապահովելու անհրաժեշտ տվյալներով։ Որակի ապահովման գործիքներն էլ պետք է վերանայվեն այնպես, որ հնարավոր լինի գնահատել ռազմավարական նպատակների իրացվածության աստիճանը։ Ուստի բուհը խնդիր ունի նախ գնահատել, թե իր ՈԱ գործիքները որքանո՞վ են ծածկում ռազմավարական նպատակադրումների արդյունավետության հարցերը, այնուհետև անդրադառնալ գործիքների ընտրությանը և/կամ դրանց բովանդակության ու ձևի սահմանմանը։ Խորքային խնդիրների վերհանման առումով խորին հարցազրույցների, քննարկումների, մտագրոհների և այլ գործիքներ կիրառելու կարիք է զգացվում։ Հարցաթերթերով հաճախ հնարավոր չի լինում վերհանել որակական տվյալներ, մասնավորապես այն պատճառով, որ ռեսպոնդենտները հակված չեն երկար ու մանրամասն գրել մեկնաբանություններ։

Հայաստանյան բուհերում ընդհանրապես, ՀԳՊԱ-ում մասնավորապես, կառավարման բարձրագույն օղակի (տվյալ դեպքում՝ Հոգաբարձուների խորհուրդ) չկայացվածությունը բերում է նրան, որ որակի ապահովման պատասխանատուների առջև չի դրվում կառավարման համակարգը վերից վար գնահատելու, խնդիրները վերհանելու խնդիրներ։

ՀԳՊԱ-ն կարիք ունի ինքնավերլուծությունները առավել վերլուծական, առավել ինքնաքննադատական ձևով իրականացնելու, ինչը նախ՝ փորձագետներին և բուհի զարգացման մեջ հանձնառու շահակիցներին հնարավորություն կտա ավելի համապարփակ ձևով ծանոթանալու բուհում ընթացող գործընթացներին և առկա մարտահրավերներին։

Բուհի հաշվետվություններում ՈԱ մեխանիզմների արդյունավետության ու առհասարակ կիրառելիության մասին վերլուծությունների բացակայությունը կարող է խնդիրներ ստեղծել ներքին և արտաքին շահակիցների կողմից այդ մեխանիզմների հանդեպ

վստահության իմաստով և նվազեցնել նրանց մոտիվացիան՝ լիարժեք ու անկեղծորեն ներգրավվելու հարցումներում, քննարկումներում կամ հարցազրույցներում:

ՀԳՊԱ-ում վարչարարության գնահատման մեխանիզմների գոյությունն է պատճառներից մեկն այն բանի, որ ՀԳՊԱ-ն չի կարողանում վերհանել հետազոտությունը որպես պլանավորված ու փաստաթղթավորված գործընթաց կազմակերպելու հետ կապված խնդիրները:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրումից հետո ՀԳՊԱ-ն զգալի աշխատանքներ է կատարել որակի ապահովման համակարգի գործիքակազմի բարելավման ուղղությամբ, որակի ապահովման համակարգն աջակցում է կրթական ծրագրերի բարելավմանը, հաստատությունը քայլեր է ձեռնարկել որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլի կիրառման ուղղությամբ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՀԳՊԱ-ն բավարարում է չափանիշ 10-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀԳՊԱ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	**Բավարարում է**
2. Կառավարում ու վարչարարություն	**Չի բավարարում**
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	**Բավարարում է**
4. Ուսանողներ	**Բավարարում է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	**Բավարարում է**
6. Հետազոտություն և զարգացում	**Բավարարում է**
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	**Բավարարում է**
8.Հասարակական պատասխանատվություն	**Բավարարում է**
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	**Չի բավարարում**
10. Որակի ներքին ապահովման համակարգ	**Բավարարում է**

Մենուա Սողոմոնյան
Փորձագիտական խմբի ղեկավար

20 հուլիսի 2022 թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Մենուա Սողոմոնյան՝ 2004 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի մագիստրատուրան: 2007-ին ստացել է պատմական գիտությունների թեկնածուի աստիճան: 2007-2008 թթ. դասախոսել է Երևանի պետական բժշկական համալսարանի պատմության ամբիոնում: 2008թ.-ից դասավանդում է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետում: 2008-2011 թթ.-ին եղել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկանի տեղակալ, 2011-2019թթ.-ին՝ ԵՊՀ դիտական քարտուղար, 2019 թ.-ին՝ ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր: 2015 թ.-ից ԵՊՀ քաղաքագիտության ամբիոնի դոցենտ է: Գիտական, ուսումնամեթոդական շարք հրապարակումների հեղինակ ու համահեղինակ է:

Մայքլ Քոներթի՝ 2003 թվականին ավարտել է Դուբլինի քաղաքային համալսարանը Կինոյի և հեռուստատեսության բաժինը՝ ստանալով մագիստրոսի աստիճան: 2018 թ.-ին ստացել է արվեստագիտության թեկնածուի աստիճան Լոնդոնի Արվեստի համալսարանում: 2006 թվականից դասավանդում է Դուբլինի Ազգային կինոդպրոց/Դան Լաոգեյրի արվեստի, դիզայնի և տեխնոլոգիայի ինստիտուտում: Անիմացիայի ոլորտում գործունեության և հետազոտության իրականացման համար արժանացել է մրցանակների: Մի շարք գրքերի և հոդվածների հեղինակ ու համահեղինակ է:

Արմեն Հարությունյան՝ 2000 թվականին ավարտել է Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Թատերագիտության բաժինը: 2003 թվականին ստացել է արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2004-2011 թթ. աշխատել է Թատրոնի և կինոյի ֆակուլտետի դեկանի տեղակալ, 2011-2013թթ. որպես ուսումնական մասի վարիչ: 2002 թ.-ից, դասախոս՝ Արվեստի սոցիոլոգիա, Թատրոնի պատմություն, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտում: 2014 թ.-ից Արվեստի պատմության, տեսության և կառավարման ֆակուլտետի դեկան: Մի շարք հոդվածների հեղինակ ու համահեղինակ է:

Վահրամ Սողոմոնյան՝ 1999 թվականին ավարտել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Հաշվողական համակարգերի մաթեմատիկական և ծրագրային ապահովում բաժինը: 2004 թվականին ստացել է տեխնիկական գիտությունների թեկնածուի աստիճան: 2008-2013 թթ. աշխատել է Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայում որպես ամբիոնի վարիչ: 2015-2017 թթ. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում որպես դեկանի տեղակալ: Ներկայումս աշխատում է Եվրոպական համալսարանում՝ որպես Արտաքին կապերի և միջազգայնացման գծով պրոռեկտոր: Մի շարք գրքերի և հոդվածների հեղինակ ու համահեղինակ է:

Կլարա Մարգարյան՝ 2016-2020 թվականներին սովորել է Ճարտարապետության և Շինարարության Հայաստանի ազգային համալսարանում «Գրաֆիկ դիզայն» մասնագիտությամբ և ստացել բակալավրի աստիճան: Այժմ նույն համալսարանի «Գրաֆիկ դիզայն» մասնագիտության մագիստրանտ է: Աշխատել է «Computex», «Shatverian» նորաձևության տանը, ինչպես նաև «oculus», «Urban» կազմակերպություններում:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

25.04.22 թ. – 28.04.22 թ.

N.	25.04.2022 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ՀԳՊԱ ռեկտորի հետ	09:30	10:10	40 րոպե
2.	Հանդիպում պրոռեկտորների հետ	10:20	11:20	60 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծության խմբի անդամների հետ	11:30	12:10	40 րոպե
4.	Ռեսուրսների դիտարկում	12:20	14:00	100 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	14:10	15:10	60 րոպե
6.	Հանդիպում գործատուների հետ	15:20	16:20	60 րոպե
7.	Հանդիպում շրջանավարտների հետ	16:30	17:30	60 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:40	18:40	60 րոպե

N.	26.04.2022 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ՀԳՊԱ Հոգաբարձուների խորհրդի անդամների հետ	09:30	10:10	40 րոպե
2.	Հանդիպում դեկանների, Գյումրու մասնաճյուղի և Դիլիջանի ստորաբաժանման ղեկավարների հետ	10:20	11:20	60 րոպե
3.	Հանդիպում ամբիոնների վարիչների և կրթական ծրագրերի պատասխանատուների հետ	11:30	12:30	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:40	13:40	60 րոպե

5.	Հանդիպում պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների (8-10 ներկայացուցիչ) հետ	13:50	14:50	60 րոպե
6.	Հանդիպում ուսանողների (8-10 ներկայացուցիչ) հետ	15:00	16:10	70 րոպե
7.	Հանդիպում ՈւԽ ներկայացուցիչների հետ	16:20	17:00	40 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:15	19:00	105 րոպե

N.	27.04.2022 թ.			Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Զուգահեռ հանդիպում «Արվեստաբանություն» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու/ների հետ	Զուգահեռ հանդիպում «Գեղանկարչություն» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու/ների հետ	Զուգահեռ հանդիպում «Համակարգչային գրաֆիկա» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու/ների հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Զուգահեռ հանդիպում «Արվեստաբանություն» մասնագիտության կրթական ծրագրի	Զուգահեռ հանդիպում «Գեղանկարչություն» մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում «Համակարգչային գրաֆիկա» մասնագիտության կրթական ծրագրի	10:35	11:35	60 րոպե

	դասախոսների հետ		դասախոսների հետ			
3.	Զուգահեռ հանդիպում «Արվեստաբանություն» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում «Գեղանկարչություն», մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում «Համակարգչային գրաֆիկա» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	11:50	12:50	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			13:00	14:00	60րոպե
5.	Հանդիպում ստորաբաժանումների /կենտրոնների (Ուսումնամեթոդական մշակման և ուսուցման գործընթացի հաշվառման, Կրթական ծրագրերի մշակման, կադրերի հաշվառման և ընդհանուր բաժին, Միջազգային կապերի բաժիններ, Հետազոտական, Ուսանողների աջակցման և շրջանավարտների հետ համագործակցության կենտրոններ, Հաշվապահություն, Մեդիայի հետ կապի և սոցիալական էջերի, պաշտոնական կայք էջի պատասխանատու) ղեկավարների հետ			14:10	15:20	70 րոպե
6.	Բաց հանդիպում			15:30	16:20	50 րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում			16:30	18:30	120 րոպե

N.	28.04.2022 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում Որակի ապահովման կենտրոնի աշխատակիցների հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի քննարկում	10:40	12:40	120 րոպե
3.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե
4.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	14:20	15:20	60 րոպե
5.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի քննարկում	15:30	17:30	120 րոպե
6.	Ամփոփիչ հանդիպում ղեկավար կազմի հետ	17:40	18:00	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	2022-26թթ. ՌԾ-ի մշակման ներքին և արտաքին շահակիցների հետ տեղի ունեցած հանդիպումների արձանագրություններ	1
2.	Ամբիոնների կարճաժամկետ, միջնաժամկետ, երկարաժամկետ պլաններ և հաշվետվություններ	2
3.	ՀԳՊԱ ներառական կրթության քաղաքականություն	2
4.	Ստորաբաժանումների կարճաժամկետ, միջնաժամկետ, երկարաժամկետ պլաններ և հաշվետվություններ	2
5.	Նիստերի արձանագրություններ /վերջին երեք տարիների համար/	2
6.	Գիտական խորհրդի նիստերի արձանագրություններ	2
7.	Պաշտոնների անձնագրեր	2
8.	Վարչական աշխատակիցների վերապատրաստման պլան	2
9.	Գիտական խորհրդի կազմ	2
10.	Հաստիքացուցակ	2
11.	Էթիկայի հանձնաժողովի կազմ	2
12.	Իրականացված մշտադիտարկումների վերաբերյալ փաստաթղթավորված հիմքեր	2
13.	Արտաքին շահակիցների շրջանում իրականացված հարցումների վերլուծություններ	2
14.	ՊԻԳԲ շրջափուլի կիրառման հիմքեր	2
15.	Տարեկան ֆինանսական պլաններ, բյուջեի բացվածք	2
16.	Մատյաններ, պրակտիկայի մատյաններ /յուրաքանչյուր կուրսից՝ մեկական/	3
17.	Ավարտական աշխատանքներ / վերջին երեք տարվա համար յուրաքանչյուր կրթական ծրագրի համար երկուական/	3
18.	Դասալսումների մատյաններ / ամբիոններից մեկական/	3

19.	Դասախոսի պորտֆոլիո	3
20.	Պրակտիկայի օրագրի ձևաչափ	3
21.	2021 թ.-ին հաստատված 3 ՄԿԾ-ներին առնչվող բակալավրի առարկայական նկարագրեր	3
22.	Բենչմարքինգ արված ՄԿԾ-ների համեմատական վերլուծության ձևաչափեր (եթե այլ է, քան հավելված 51-ում տրված Գեղանկարչություն ՄԿԾ-ի բենչմարքինգը)	3
23.	Կրթական ծրագրերի ինքնավերլուծության օրինակ (Համակարգչային գրաֆիկա)	3
24.	Մոդուլների նկարագրեր	3
25.	3 ՄԿԾ-ներին առնչվող քննական տոմսերի նմուշներ, քննական հարցաշարեր	3
26.	Շուկայի առաջատար ներկայացուցիչների, ինչպես նաև անհատ ստեղծագործող բուհի շրջանավարտների հետ իրականացված հանդիպումների արձանագրություններ	3
27.	Դասախոսների կողմից գնահատված գրավոր առաջադրանքների օրինակներ	3
28.	Ուսանողական խորհդի նիստերի արձանագրություններ	4
29.	Ֆոկուս-խմբային քննարկումների արդյունքներ ու վերլուծություններ	4
30.	Ուսանողների շրջանում իրականացված հարցումների վերլուծություններ ռեսուրսներին և ծառայություններին առնչվող	4
31.	(2020 թվականից ի վեր հաստատված շուրջ 15 համագործակցությունները փաստող հիմքեր	4
32.	Դասախոսական կազմին գնահատելու նպատակով ուսանողների շրջանում իրականացված հարցումների օրինակներ և վերլուծություններ	5

33.	Դասալսումների հաշվետվություններ	5
34.	Ամբիոնի վարիչների կողմից լրացված ձևաչափեր	5
35.	Մրցույթային գործընթացին առնչվող փաստաթղթեր	5
36.	Դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումներին առնչվող հաշվետվություններ	5
37.	Ռեսուրսներին առնչվող իրականացրած հարցումների օրինակներ և վերլուծություններ	7
38.	Առևտրայնացման քաղաքականություն	7
39.	Միջազգայնացմանն առնչվող կարիքներ վերհանմանն ուղղված հարցումների և հանդիպումների արդյունքներն ամփոփող ու վերլուծող փաստաթղթեր	9
40.	Ուսանողների շարժունության եռակողմ պայմանագրեր	9
41.	Արտաքին կապերի բաժնի տարեկան հաշվետվություններ 2019, 2020, 2021 թթ. համար	9
42.	Տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ համագործակցության կիրառման հիմքեր	9
43.	Արտաքին շահակիցների շրջանում իրականացված հարցումների օրինակներ և վերլուծություններ	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

- Արվեստանոցներ
- Լաբորատորիաներ
- Ամբիոններ և ստորաբաժանումներ
- Լսարաններ
- Գրադարան
- Ընթերցասրահ
- Գրապահոց
- Բուժկետ
- Դահլիճ
- «Ալբերտ և Թովէ Բոյաջյան» ցուցասրահ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԲԿԵՏ-Բարձրագույն կրթության եվրոպական տարածք

ԳԱԱՑ- գործունեության արդյունավետության առանցքային ցուցանիշներ

ՀԳՊԱ- Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա

ՄԿԾ- մասնագիտության կրթական ծրագիր

ՄՈՒՀ- մասնագիտական ուսումնական հաստատություն

ՈԱ- որակի ապահովում

ՈԱԱԿ - Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն

ՈԱՇ- որակավորումների ազգային շրջանակ

ՊԴ կազմ-պրոֆեսորադասախոսական կազմ

ՌԾ- ռազմավարական ծրագիր

ՈւԽ- ուսանողական խորհուրդ

ՈւՕ կազմ-ուսումնաօժանդակ կազմ